



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14569 14574
14570 14575
14571
14572
14573

891.99
2-38

066 - 26/11/27

24

2003

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՀԵՖԻԱՍԹԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԽԳԼ. ԱՊ

ՑԻԳՐԱՆԱՑ ՆԱԽՍՍԱՐԴԵԱՆՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՔ



ՏՓԽԻՍՏ

Տպարան Մովսես Վարդանեանի

1889

ԱԹՍՈՒ ՊԱՀԱԾ ԳԱՅԻ

ԳԵԼԸ ԶԻ ՈՒՏԻ

(Արարատեան բարբառ.)

Աւալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագաւոր:
Ես թագաւորը ունենում ա մի կնիկ, էրկու էլ
տղայ՝ ամեն մինը ըսենց հինգ-վեց տարեկան: Ես
թագաւորը ընենց մի խղճմտանքով մարդ ա ըլնում,
ընենց մի արդար գատաստան անող, աղքատներին, ան-
ճարներին ողորմող, որ քօմմայ սրա անըմով ին երգում
ուտում—ընենց մի հայ-քրիստոնեալ մարդ ա ըլնում:

Օրէն մի օրը, մի դարվիշ վեր ա կենում գալի
էդ թագաւորի ամարաթը:

—Ի՞նչ մարդ ես, հարցնում են նօքարները:
—Ես ֆլան դարվիշ եմ, ասում ա, էկել եմ թա-
գաւորին տենամ:—Եթում են թագաւորին իմաց տալի.
—Թագաւորն ապրած կենայ, ասում են, ըսենց մի
դարվիշ ա էկէ, ուզում ա քեզ տենայ. թողանք գալ,
թէ չէ:

—Թողանք գալ, ասում ա թագաւորը, մարդ ա, բա-
լի մի խնդիրք ունի ասելու:

Նօքարներն էթում են գարվշին կանչում, բերում թագաւորի կուշը, իրանք թողում դուս գալի: Գարվիշը թագաւորին գլուխ ա տալի, ընդէ կաննում:

— Ի՞նչ մարդ ես, հարցնում ա թագաւորը. Բնչ բանի հմար ես էկէ:

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա. ես ֆլան դարվիշն եմ, ֆլան երկրիցը՝ մի խնդիրք ունեմ քեզ ասելու:

— Ասա, ասում ա թագաւորը, ասա տենամ խընդիրքդ Բնչ ա:

— Թագաւորն ապրած կենալ, կասեմ, համալ պտի երդում ուտես, որ անխօս կկատարես:

— Ասա, մի վախի. ինչ որ ձեռիցս կգալ՝ կանեմ: — Դարվիշը գալիս ա ընկնում թագաւորի ոնները.

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա, ես ուզում եմ, որ քու թագաւորութիւնը իրեք օր տաս ինձ: Ալտաս, թէ չէ: — Թագաւորը միտք ա անում, միտք ա անում, միտք ա անում.

— Լաւ, ասում ա, որ տամ, դու էլ խօսք ես տալի, որ իրեք օրը թամմի թէ չէ՝ իմ թագաւորութիւնը էլ եդ ինձ տաս:

— Հա, թագաւորն ապրած կենալ, հա, խօսք եմ տալի: Չտուի, ինչ ուզում ես՝ արա:

— Բաս որ ըտենց ա, կտամ: — Կենում ա ընչանք լաւ մութը գետինը կոխում ա, ոտքը խաղաղվում, նոր իրա շորերը հանում ա, տալի դարվիշն, դարվիշնը ինքը հագնում, թողում ամարաթը, դուս գալի: Էթալիս նօքարները տենում են, ըսկի չեն էլ ճանանչում. ասում են՝ հալբաթ էն դարվիշն ա, թագաւորին տեհաւ, հղրծաւ, հմի էթում ա. — դուռը բաց են անում՝ ճամ-

փու դնում: — Հա, ըս էլ պտի ասեմ, որ էս բանը թագաւորից ու դարվիշ սաւալի, որ ասես մարդ չի իմանում, ընչանք իրա օղլուշաղն էլ խաբար չինում:

Թամամ իրեք օր դարվիշը թագաւորութիւն ա անում: Իրեք օրը թամմում ա թէ չէ, թագաւորը վեր ա կենում գալի.

— Դարվիշ աղպէր, ասում ա, իրեք օրը թամմեց, դէ հմի վեր արի թախտիցը՝ ես նստեմ:

— Ի՞նչ ես դուս տալի, ասում ա դարվիշը, հօ չես գժուէ. Ենչ թախտ, Ենչ բան, էրացում ես, ինչ ա:

— Լաւ, դարվիշ աղպէր, հանաքի վախտը չի. թէզ արա, քանի մարդ չի էկէ: — Խեղճը հէնց իմանում էր հանաք ա անում: Համալ մըն էլ էն տեհաւ, որ նօհանաք ա անում: Համալ մըն էլ էն տուեց, էկան վրա հասան, գլխին տալօն, բըռթ-բըռթելօն, քաշքելօն տարան ընչանք հայթը, ընդիան էլ արեցին քուչէն՝ դուռը շինեցին: Խեղճը էլ չկարաց ամօթու ձէն-ձպտուն հանի, փօրփօշման թողաց՝ գնաց: Գնաց, յէգսի օրն էլ եդ էկաւ, տեհաւ ամարաթի դուռը բաց ա, ուսուլով նի մտաւ, գնաց սուտ-թագաւորի աղտքին կաննեց:

— Ա՛յ դարվիշ աղպէր, ասեց, ըսենց հանաք չէլ նի, երէկ էլ ընենց խաղկ ու խայտառակ անելօն ինձ դուս անիլ տուիր ըտիան: Թագաւորութիւնս քեզ իրեք օր ի տուէ, ըս օր էլ հրէս չորս օրը թամմում ա: Ի՞նչ կասես, աղպէր:

— Հանաք-մանաք չեմ գիտալ, ասեց դարվիշը. էս սհաթը դուս կորի ըստիան, թէ չէ նօքարներիս ձէն կտամ, կգան, էլի քեզ երէկուալ օրը կգցեն:

Խեղճ թագաւորը տեհաւ որ ճար, իլաճ չկալ,

դարվիշն ուզում ա զօռ-զօռընալ իրա թագաւորութիւնը
զաւթի՝

— Դու քու Աստօծ, ասեց, թագաւորութիւնը ձե-
ռիցս խլեցիր, կնիկս ու էրեխէքս էլա տու, տանեմ
նրանցով մխիթարուեմ:— Դարվիշը գնաց բերեց տուեց
իրան: Նա էլ կնկալ ու էրեխէքանց կուռը բռնեց,
լալով, լալաշկով ամարաթիցը դուս էկաւ գնաց:— Փառք
Քեզ, Աստօծ, ասեց, փառքդ շատ ըլնի. Դու տուիր՝
Դու էլ առար: Հալբաթ ես մի մեղքի տէր ի, որ օր
ծերութիւն էս զուլումը բերել գլուխս: Փառք, փառք,
հազար հետ փառք Քեզ, Աստօծ:

Կնիկը, էրեխէքս աղաք արեց, ասեց՝ էթամ զարբու-
թիւն, բալի մի աշխատանքի տուտ բռնեմ, տուն, տեղ,
օղլուշաղ պահեմ: Մի քանի ամսուայ ճամփի պաշար վէ
կալան, Ասսու անումը տուին, ընկան ճամփայ: Էկան,
էկան, չատն ու քիչն Աստօծ գիտայ, մի սհաթ,
էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի ընչանք իրիկուն
էկան, մի չօլ, եաբանի տեղ գշերը վրա հասաւ: Են սը-
հաթը ըստէ վեր էկան, ասեցին՝ կենանք ընչանք լիսա-
նայ, նոր վէ կենանք էթանք:

Ըտէ վեր են գալի, էթում ընդերանքից չոր չօփ,
թիթէն-միթէն կիտում, բերում կրակ անում, կրակի
չորս բոլորը ջերկուն նստոտում, եննայ բերում հաց-
մաց ուտում, թէք ընկնում՝ քնում: Գշերուայ մի վախտ
զընդզընդոցի ձէն ա գալի. թագաւորը գլուխը բանձ-
րացնում ա, տենում մի բէզրգեան իրա քօչ ու բար-
խանով, նօքարներով էկաւ իրանցից, մի մանդզլաչանք
տեղ հեռու վեր էկաւ:

Էս բէզրգեանը ըտէ վեր ա գալի, չաղիր տալի,
նօքարներին հրամալում ա կրակ անեն, որ զադ-մադ

էփեն ուտեն: Նօքարներն էթում են ընդերանքից ցախ-
մախ, թիթէնի կտորտանք հաւաքում, բերում որ կրակ
անեն, բերդան տենում են՝ հրէնիկ հա, Փլան տեղը
կրակ ա էրևում:— Էթանք, ասում են, ընդիան կրակ բե-
րենք՝ կպցնենք:— Վեր են կենում գալի ինչ տենում:— մի
դարվիշ, էրկու էրեխայ, մըն էլ մի կնիկ կրակի չորս բո-
լուրը ջերկուն պառկոտել են: Կնիկ մի ասի՝ մի ակն
ու արեգակ, հուրի-մալաք, մարալ, ջէրան, թառլան
զուշ ասա: Սըանց ոտի ձէնիցը թագաւորը ալբիալը
զարթնում ա:

— Բար' իրիկուն, ասում են, դարվիշ աղպէր:

— Բարնք, հազար բարին, ասում ա:

— Զբէնի մի քիչ կրակ տաս, տանենք մընք էլ
կրակ անենք:

— Խի չիլնի, ասում ա, հրէնիկ՝ ինչքամ ուզում
էք, վէ կալէք տարէք:

Նօքարներն էթում են մի քանի կրակ վեր ունում,
թողում գալի իրանց չաղիրը:

— Խի էսքամ եղացաք. հարցնում ա բէզրգեանը:

— Բէզրգեանը սաղ ըլնի, ասում են նօքարները,
էն ինչ մենք ենք տեհէ, գու տենալիր՝ ով գիտայ ըն-
չանք լիս ընդէ դուլ ըլնէիր, մնայիր:

— Խի, Բնչ կար, Բնչ էք տեհէ, հարցնում ա բէ-
զրգեանը, ասէք տենամ:

— Բէզրգեանը սաղ ըլնի, ասում են, գնացինք տե-
հանք կրակի չորս բոլորը պառկոտել են՝ մի դարվիշ,
էրկու էրեխայ, մըն էլ մի սիրուն, մի նաշխուն կնիկ.
Էնքամ սիրուն, էնքամ սիրուն, էնքամ սիրուն՝ որ չու-
տես, չխմես, չհագնես, չմաշես, հէնց նըա գիւլ ջա-
մալին թամաշ անես—ընենց մի սիրունիկ զադ էր:

— Բաս ըտենց ա, ասում ա բէզրգեանը, չէք կարայ էթալ մի ֆանդով էդ կնկանը փախցնի բերի. որ բերէք՝ էլ փող, էլ խաղինայ, էլ մալ, էլ դօլվաթ, մախլաս հէնց ինչ ուղէք՝ իմաց կացէք կտամ:

— Կարանք, իսի չենք կարալ, բէզրգեանը սաղ ըլնի, ասում են:

Նօքարները կրակ են անում, պրծնում, եդ դառնում գալի դարվշի կուշտը:

— Դարվիշ աղպէր, ասում են, քեզ մի խնդիրք ունենք ասելու:

— Խէր ըլնի, ասէք տենամ ինչ ա ձեր խնդիրքը, ասում ա դարվիշը:

— Մեր բէզրգեանի կնիկը էրկուֆոգիս ա, ասում են, հրէն որդէ որի ա կազատուի. սատանական էս չոլ, եաբանի տեղը ոնչ տատմէր կայ, ոնչ կնիկարմադ, որ ցաւը բոնելիս՝ նրան մուղաթ կենայ: Հմի էկել ենք մուննաթ անենք քեզ, կնկանդ ասես՝ գայ մեր խանըմին ազատի, էլի մենք նրան մեր քվօր պէս կբերենք կհասցնենք ընչանք ըստէ:

— Ո՛յ կնիկ, կէթաս, հարցնում ա դարվիշը կնկանը:

— Խի չեմ էթալ, այ մարդ, ասում ա կնիկը. Էս չոլ, եաբանի տեղը ծնդկանի հաւարին հասնիլը փոգու էլ վարձք ա: — Վեր ա կենում նօքարների հեննայ դալի, սաքի թէ բէզրգեանի կնկտնը պտի ազատի: Հէնց որ հասնում ա չագիրը, բէզրգեանը հրամայում ա անսաս վեր ունեն կնկանը գնեն մի զութկի մէջ, բեռները կապուտեն՝ եալլայ: Նօքարներն էն ոհաթը կնկանը բերում են գնում մի զութկի, բերանը դալիմ կալնում, բեռները բարձում, ընկնում ճամփալ:

Խեղճ դարվիշը կացաւ մի սհաթ, էրկու սհաթ,

իրեք սհաթ՝ տեհաւ կնիկը չէկաւ: — Հալբաթ, ասեց, բէզրգեանի կնիկը շատ դժար ա, պահում են ընչանք ազատուի, սլրծնի, նոր վեր ունեն, բերեն: Միելի աչքը կպցրեց, չկպցրեց, մի վախտ վէ կացաւ տեհաւ ինչ լիսացէ, օրը ճաշ ա դառէ, դեռ հլա կնիկը չի էկէ: Ասեց՝ տենամ քարվանն ընդթ ա: Եդ մտիկ արեց, տեհաւ ոնչ քարվան կայ, ոնչ զադ: Շատ գլխին վայ տուեց, լաց էլաւ, համայ էլ ուր—բանը բանից անց էր կացէ:

— Փառքդ շատ ըլնի, ասեց, Աստօծ, դու տուիր՝ դու առար, հալբաթ ես մի մեղքի տէր եմ, որ ըս էլ էրկու հետ ինձ պատճում ես: Աաղ թագաւորութիւնից, տնից, տեղից, մալ ու դոլվաթից մազբուն նստեցի հէրիք չէր՝ հմի էլ կնիկս ձեռիցս խլեցիր: Փառք Քեզ, Աստօծ, հազար հետ փառ ք:

Խեղճը էլ ինչ պտի անէր. էրեխէքանց կուռը բըռնեց՝ գնաց իրա ճամփէն: Գնաց, գնաց, գնաց՝ շատն ու քիչն Աստօծ գիտայ, ճամփին մի վարար ջուր ռաստ էկաւ: Դէ արի էշը ցխիցը հանա. Էսքամ զուլումը հէրիք չէր՝ թազայ զուլումի ռաստ էկաւ: — Ո՞նց անեմ, ոնց չանեմ, ասեց, որ սաղսալամաթ անց կենամ ջրի էն դիհը: — Միտք արեց, միտք արեց, որ շատ միտք արեց, ասեց՝ մենծ տղիս թողամ ջրի էս էրեսին, պուճուրին շալակեմ անց կենամ, եննայ գամ նրան վեր ունեմ, տանեմ: Լաւ:

Ըսենց էլ արեց: Մենծ տղին թողաց ընդէ, պուճուրին շալակեց, նի մտաւ ջուրը. հէնց հասաւ ջրի մէջտեղը, եդ մտիկ արեց, տեհաւ էն դհիցը մի գէլ վրա հասաւ մենծ տղին, ըսխեց ու եալլայ: Ափալ-թափալ եդ դառաւ որ էթալ տղի հաւարին՝ բիրդան ոտը

սօթ տուեց, շալակի էրեխէն ընկաւ ջուրը։ Էս որ տեհաւ, էն սհաթը իրան գցեց ջուրը, էրեխի եղեկիցն ընկաւ որ կալնի. ինչ արեց, չարեց՝ չկարաց, ջուրը էրեխին վէ կալաւ, տարաւ։ Էրեխին չկարաց, հօ չկարաց հանի՝ քիչ էր մնում ինքն էլ հեննէն հեղտուի. Նոր անջախ լեզ տալօն, լեզ տալօն իրան գցել աղըրազը։ Թրջուած-մրջուած, ջուրը վրեցը ծլծլալէն դուս ա գալի ցամաքը, նոր ըտէ շորերը հանոտում, մզում, արեումը փուում, որ չորանայ։

— Փառք Քեզ, Աստօծ, ասում ա, փառք քու ողորմութիւնին. դու տուիր, դու էլ առար։ Հալբաթ ես մի մեղքի տէր եմ, որ ըս էլ իրեք հետ ինձ պատճում ես։ — Ըսենց մի էրեխին գէլն ատանում, մէկելին՝ ջուրը։ Ըստէ էնքամ կենում ա, ընչանք շորերը չորանում ա, նոր վեր ա կենում մէն-մէնակ, դառը, տխուր ընկնում ճամփայ։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն Աստօծ գիտայ, հասնում ա մի քաղաք։ Մննում ա քաղաքը, տենում մարդ-մադաթ չկայ։ Մի քիչ աղաք ա էթում, զալմազալի ձէն ա ընկնում անկաջը։ Էթում ա տենում մի եքայ մէրտանի միջի խալխը կիտուել են։

— Էս խալխը խի են կիտուէ, հարցնում ա։

— Մեզ հմար թագաւոր ենք ջոկում, ասում են։

Ինքն էլ էթում ա մի զրադ տեղ կաննում, թամաշ անում, ասում ա՝ տենամ սրա վերջն ինչ ա ըլնում։ — Էդ վախտերքը սովորութք ա ըլնում, որ թագաւոր ջոկելիս, բերում ին մի զուշ բաց թողում։ Էդ զուշը ում զլխին էթար կաննէր, նրան շինում ին թագաւոր։ Բերում են զուշը բաց թողում. բաց թողալու բաշտան՝ էդ զուշը գէս ա թռնում, գէն ա թռնում,

գալի մեր դարվշի գլխին պուպուզ՝ կաննում։ Քօմմայ մնում են մաթ էլած մտիկ անելօն, թէ էս ինչ բաս ա, զուշը խի էկաւ էդ դարվշի գլխին կաննեց։ — Էս մինը հէչ, ասում են. էկէք թազադան բաց թողանք։ — Լաւ։ Բերում են թազադան բաց թողում, էս հետ էլա թռնում, գալի դրա զլխին կաննում։ Մախլաս, զլխներդ ինչ ցաւացնեմ, իրեք հետ զուշը բաց են թողում, իրեք հետն էլ գալիս ա մեր դարվշի գլխին կաննում։

— Կայ չկայ, ձէն են տալի ամեն դհիցը, մեր թագաւորը էս դարվշին ա, որ էս դարվշը։ — Բերում են էն սհաթը նրա քրչոտ-մրչոտ շորերը հանոտում, թագաւորի շորեր հագցնում, առօք-փառօք տանում թախտի վրէն նստացնում։

Սրան թողանք ըստէ թագաւոր, գանք խաբար տանք սրա էրեխէքանցիցը։

Գէլը որ մենծ տղին ըսխում ա, առնում փախնում՝ մի չօբան ընդիան վարաւուրդ ա անում, շները քըս տալի, զցում գիլի եննուցը — հալայ հա հալայ, հալայ հա հալայ, հալայ հա հալայ։ Նները որ գիլին հակալ-հակալ են զցում, գէլը վախլութիւնիցը էրեխին վեր ա գցում, թողում փախնում։ Զօրանն էթում ա տենում՝ մի սիրուն, մի նաշխուն էրեխայ։

— Ո՞ւմ տղէն ես, հարցնում ա չօբանը, ո՞նց ա էլէ որ գիլի ճանկն ես ընկէ։

Էրեխէն նստում ա ըստէ մին մին նաղլ անում երա զլխով անցկացածը, ո՞նց որ ես ձեզ նաղլ արի։

— Ինձ տղայ չես ըլնի, հարցնում ա չօբանը. դաթի ես էլ տղայ չունեմ։

— Խի չեմ ըլնի, ասում ա էրեխէն. դու որ ինձ

գիլի ճանկերիցը պրծացրիր՝ քեզ չըլնեմ, էլ ում պտի ըլնեմ:

Զօբանը վեր առևնում սրան շինում իրան տղայ, գառները տալի որ տանի արածացնի: — Հմի գանք խարար տանք մէկել աղազօրիցը:

Մէկել աղազօրն էլ ջուրը քշում ա, քշում տանում մի ջաղացի սաւաջաղի բանդ անում: Ջաղացպանը մի վախտ տենում ա ջուրը խըրթ կտրուեց: Դուս ա գալի, սաւաջաղին մտիկ տալի, տենում մի գագ ընդէ լռուել ա. քաշում ա հանում, տենում մի լըխտիկ-մըխտիկ նաշխուն էրեխայ:

— Ո՞ւմ էրեխէն ես, հարցնում ա ջաղացպանը:

Էրեխէն նստում ա մին մին նաղլ անում իրա գլխով անցկացածը թէ՛ ըսենց, ըսենց, ըսենց բան:

— Ինձ տղայ չես ըլնի, հարցնում ա ջաղացպանը. զաթի ես էլ տղայ չունեմ:

— Խի՛ չեմ ըլնի, ասում ա էրեխէն. դու որ ինձ հեղտուելուց պրծացրիր՝ քեզ չըլնեմ, էլ ում պտի ըլնեմ: — Սա էլ գառնում ա ջաղացպանի տղէն: Գանք սալըդը տանք սրանց հօրիցը:

Սրանց հէրը որ թագաւոր ա գառնում, օրէն մի օրը իրա նազիր, վէզիրի հեննալ դուս ա գալի իրա երկիրը ման գալու, ասում ա՝ տենամ իմ խալխը մնց ա ապրում, մնչ ա անում, մնչ չի անում, իրա հալիցը հօ գանգատաւոր չի: Թագաւորն ա, էս գեղն ա էթում, էն գեղն ա էթում, դէս ա ման գալի, դէն ա ման գալի, որդէ էթում ա՝ հարց ու փորձ ա անում, խալխի հալը հարցնում, ասում, խօսում, վերջը գալիս ա մի ջաղացի ռաստ գալի: Ինքն էլ շատ ծարաւ ա ըլնում: — Գանքացպան աղպէր, ասում ա, մինելի ջուր բե-

րես՝ խմեմ: — Էս էն ջաղացպանն ա ըլնում, որ ջուրն ընկած էրեխին հանում ա, բերում իրան տղայ շինում:

— Զուխտ աչքիս վրէն, թագաւորն ապրած կենալ, ասում ա ջաղացպանը: — Էն սհամթը կուռիկը տանում ա լաւ սիրունիկ օզօղում, թամըզացնում, կանթեղի նման զուլալ ջրիցը լցնում, տալի իրա տղին, ասում ա՝ տար տու թագաւորին: Տղէն ջուրը բերում ա տալի թագաւորին: Թագաւորը էս էրեխին տենալու բաշտանք տան շատ ա հաւանում:

— Ո՞ւմ տղէն ես, հարցնում ա թագաւորը:

— Ջաղացպանի, ասում ա էրեխէն:

— Գնա հօրդ կանչա գալ լսաէ: — Էրեխէն էթում ա հօրը կանչում, բերում թագաւորի կուշտը:

— Ի՞նչ կհրամայես, թագաւորն ապրած կենալ, ասում ա ջաղացպանը:

— Էս էրեխէն քունն ա, հարցնում ա:

— Հա, թագաւորն ապրած կենալ, իմն ա. խի՛ որ:

— Զի՞լի ինձ բաշխես:

— Խի՛ չիլնի, թագաւորն ապրած կենալ, փէշքաշ ա, ես քեզանից զադ կխնալեմ: — Տղի կոնիցը բռնում ա, տալի թագաւորին:

Թագաւորը ջաղացպանին մի բուռը սսկի ա տալի, էրեխին վեր ունում, բերում ամարաթը, շինում իրա աղաքին նօքար:

Անց ա կենում մի քանի վախտ, թագաւորը էլի օրէն մի օրը դուս ա գալի իրա երկիրը ման գալու: Եատ դէս, դէն ա ման գալի, վերջը ճամփին սրան մի չօբան ա ռաստ գալի: — Էս չօբանն էլ էն չօբանն ա ըլնում, որ գիլի տարած էրեխին աղատում ա, բերում զինում իրան տղայ: — Թագաւորի սիրու կաթ ա ուզում:

— Զօքան տղպէր, ասում ա թագաւորը. մ'խելի
կաթ բերես՝ խմեմ:

— Զուխտ աչքիս վրէն, թագաւորն ապրած կենալ,
ասում ա չօքանը; — Զօքանը էն սհամն էթում ա մըն-
նում սուրուի մէջը, մի ոչխար կալնում, կաննացնում,
կթում, կօտը պոտէպունկ կաթով լցնում, տալի իրա
տղին, որ տանի տալ թագաւորին: Տղէն կօտը վեր ա
ռւնում, վազացնում թագաւորին: Էս էրեխէն էլ թա-
գաւորին շատ դիր ա գալի:

— Ա՛յ որդի, հարցնում ա թագաւորը; ում տղէն ես:
— Չօքանի, ասում ա:

— Գնա հօղդ կանչա գալ ըստէ: — Տղէն էթում ա
հօրը կանչում, բերում թագաւորի կուշտը:

— Ի՞նչ կհրամայես, թագաւորն ապրած կենալ,
ասում ա չօքանը:

— Էս տղէն քունն ա, հարցնում ա:

— Հա, թագաւորն ապրած կենալ, իմն ա. Բնչ
կայ որ:

— Զինի ինձ բաշխես:

— Խթ չինի, թագաւորն ապրած կենալ, փէշքաշ
ա. Ես քեզանից տղայ կինայեմ: — Տղի կոնիցը բռնում
ա՝ տալի թագաւորին:

Թագաւորը չօքանին մի բուռը ոսկի ա տալի, տղին
վեր ունում, բերում ամարաթը, սրան էլ ա իրա աղա-
քին նօքար շինում: Էս էրկու տղէն իրար հեննալ սի-
րով ապրում են, մենանում ամարաթումը՝ ոնց որ մի
դռան էրկու շուն—ըսկի չեն էլ իմանում թէ աղպէր-
տինք են:

Ոնց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տա-
րի, չորս տարի, հինգ տարի, մախլասի տասը տարի,

օրէն մի օրը էս թագաւորի երկիրը մի բէզրգեան ա
գալի՝ առուտուրի: Էդ վախտերքը սովորութք ա ըլ-
նում, որ մի բէզրգեան էթում էր ուրիշ երկիր, պտի
իրա ապրանքիցը փէշքաշ տանէր էդ երկրի թագաւորին:
Էս բէզրգեանն էլ լաւ լաւ փէշքաշներ ա վեր ունում,
գալի թագաւորին տենալու:

— Ո՞րդիանցի ես, հարցնում ա թագաւորը:

— Ֆլան երկրիցը, ասում ա բէզրգեանը:

— Ի՞նչ բանի հմար ես էկէ:

— Եկել եմ առուտուրի: — Բերած փէշքաշները հա-
նում ա ընդէ վէ դնում, ասում ա՝ ըս էլ բերել եմ
քու փայը:

— Նատ լաւ ես արէ, ասում ա թագաւորը, գլխիս
վրէն ես էկէ: Ինչքամ սիրտդ ուզում ա՝ իմ երկրումը
կաց, քու առուտուրն արա: — Էս բէզրգեանը թագաւո-
րին շատ դիր ա գալի. նստում ա նրա հեննալ երկէն
ու բարակ ասում, խօսում, զրից անում, էթալիս էլ
թամբաչ ա անում, որ քանի ըստէ ա՝ իրա կուշտն
էթալ, գայ: Բէզրգեանն էլ հօ՝ ուրախանում ա, աշխա-
րով մին ըլնում. վեր ա կենում թագաւորին գլուխ
տալի, թողում էթում իրա բանին: Էս բէզրգեանը էն
բէզրգեանն ա ըլնում, որ է, սրանից քանի տարի ա-
ղաք, չօլումը վեր ա գալի, չափիր տալի, եննալ ինչ
խաբլութիւնով թագաւորի կնիկն առնում՝ փախնում:

Անց ա կենում մի քանի վախտ, օրէն մի օրը էլի
էս բէզրգեանը վեր ա կենում, ասում ա՝ էթամ թա-
գաւորին տենամ: Վեր ա կենում գալի թագաւորի կուշտը:
Իրար հեննալ հաց են ուտում, պլծնում, նստում դէ-
սից, դէնից ասում, խօսում, զրից անում, ընչանք գառը

կէս գշեր խօսում են: Եննալ բէզրգեանը վեր ա կենում որ էթայ, թագաւորը չի թողում.

— Ես բէվախտին էլ ուր ես էթում, ասում ա, հազիր ըստէ կքնես, կլիսանալ՝ նոր վէ կկենաս, կէթաս:

— Զէ, թագաւորն ապրած կենալ, ասում ա բէզրգեանը, չեմ կարայ, ես դուքանի տէր եմ՝ պտի էթամ. բալի գշերն էկան դուքանս կտրեցին, ինչ կայ չկայ տարան. էն վախտը:

— Մի վախենալ, ասում ա թագաւորը, դուքանիցդ մի չօփ էլտ չի կորչի. նօքարներիս կղրկեմ, կէթան դուքանիդ մուղաթ կենան: Թէ կորաւ՝ ես տամ: — Բէզրգեանն էլ չի կարում թագաւորի խաթրիցն անց կենալ.

— Դու գիտաս, թագաւորն ապրած կենալ, ասում ա, որ ասում ես՝ կկենամ: — Եդ գշերը թագաւորի ամարաթումն ա քնում:

Թագաւորն էն սհաթը կանչում ա իրա էրկու նօքարին — ջաղացալանի ու չօբանի տղին.

— Կէթաք, ասում ա, էս գշեր բէզրգեանի դուքանին դարաւուլ կքաշէք, մուղաթ կկենաք, որ մարդմուրդ չմօտանալ: Զըլնեմ չիմանամ քնէք, հա, թէ չէ էլ ձեռիցս չէք պրծնի: Իմացաք:

— Իմացանք, թագաւորն ապրած կենալ, ասում են նօքարները. ոնց կքնենք. հօ մեր գլխիցը ձեռը չենք վէ կալէ: — Ասպարաւորվում են, եարալ, ասպար կապում, բէզրգեանի դուքանի բալանիքն առնում, էթում դուքանի դուռը բաց անում, ճրագ վառում, նստում: Բէզրգեանի կնիկն էլ դուքանի միջին քնած ա ըլնում:

— Բա՛ ոնց անենք, ասում ա պուճուր աղպէրը, որ քններս չտանի:

— Էլ ուրիշ ճար չկալ, ասում ա ևենծ աղպէրը, արի հէքաթ ասենք, բալի քններս փախնի:

— Լաւ, ասենք: Դէ բաս ըտենց ա՝ աղաք դու աս՝ եննալ ես:

— Որ հէքաթի տեղակ իմ գլխով անցկացածը նազլ անեմ՝ չիլնի:

— Խի չիլնի: Ընենց արա որ չքնենք՝ նրանից գէնը դու գիտաս, ինչ ուզում ես՝ ասա: — Բէզրգեանի կնիկը սրանց ձէնիցը զարթնում ա, համայ վախլութիւնիցը ձէն-ծպտուն չի հանում. խեղճը հէնց իմանում ա զողեր են. ասում ա՝ տենամ ինչ են մասլահաթ անում — տեղի միջին տաղ ա անում, մնում:

— Դէ անկաջ դի, ասում եմ, ձեն տուեց մենծ աղպէրը:

— Ասա: անկաջ եմ դնում:

— Ես, ասեց մենծ աղպէրը, ֆլան թագաւորի տղէն եմ: Օրէն մի օրը մի դարվիշ էկաւ հօրս ամարաթը, խաբըլութիւնով հօրս ձեռիցը թագաւորութիւնը խլեց, մեզ ընդիւան դուս արեց: Խեղճ հէրս ինչ արեց, չարեց՝ էլ չկարաց թագաւորութիւնը եդ առնի. ճարը կտրած, իմ ու պուճուր աղպօրս կուռը բռնեց, մենք դեռ հլա էրեխէք ինք, մօրս հեննալ դուս էկաւ դարբութիւն, որ մի աշխատանքի տուտ բռնի, մեր զլուխը պահի: Էկանք, էկանք, էկանք, շատն ու քիչն Աստօծ ա խաբար, մի չօլ, եաբանի տեղ գշերը վրա հասաւ: Գնացինք ընդերանքից թիթէն-միթէն կիտեցինք, բերինք կրակ արինք, ընդէ գշերը կացանք: Հաց-մաց կերանք, պրծանք, թէք ընկանք՝ քնեցինք: Հէնց աչքներս նոր ինք կպցը, բիրդան հեռուից զընզպընդոցի ձէն ընկաւ անկաջներս: Եդ

մտիկ արինք, տեհանք մի բէզրգեան իրա քարվանով, քօչ ու բարիսանով էկաւ, մեզանից մի մանզղիլ հեռու վերէկաւ, ընդէ չադիր տուեց: Վրիցը մի սհաթ չանցկացաւ, մըն էլ տեհանք էդ բէզրգեանի նօքարներն էկան թէ՝ մի քանի կրակ տաք, տանենք կրակ անենք: Հէրս էլ վէ կալաւ թէ՝ հրէն կրակը, հրէն դուք. տանում էք՝ տարէք: Նրանք էլ մի թիթէնի կտորի վրէն մի քանի կրակ դրին, վէ կալան գնացին: Գնացին, էլ եդ էն սհաթը եդ դառան: — Խթ էկաք, հարցրեց հէրս: — Մէր բէզրգեանի կնիկը էրկուփոդիս ա, տսեցին, որդէ որի ա կազատուի. Ասսու սիրուն, թող կնիկդ գայ ազատի, էլ եդ նրան մեր ձեռովը վեր ունենք՝ բերենք: — Մէրս էլ աւատաց նրանց խօսքին, վէ կացաւ գնաց. հլա էն գալն ա՝ որ պտի գայ: Լիսացաւ, վէ կացանք, տեհանք՝ ոնչ քարվան կաչ, ոնչ զադ. . . .

Պուճուր աղպէրը ընչանք ըստէ որ լսեց, ալբիալը մատը կծեց. — Բալի, ասեց ինքն իրան, սա իմ աղպէրն ա որ իմ աղպէրն ա: — Էլ չկարաց դիմանալ որ աղպէրը քօմմայ ասի, պրծնի, վէ թուաւ փաթթուեց ճտովը.

— Ա՛յ հարայ, ձէն տուեց — բաս դու իմ աղպէրն ես... էլ չկարաց խօսալ. արտասունքը էն սհաթը բռւռը բուռը աչքերիցը վէ թափեց:

Մէրն էլ էն դհիցը վազեց, փաթթուեց տղէքանց ճտովը, նրանց թշերը պաչեց, աչքերը պաչեց, պաչպը չորեց, տասը բեռը արտասունք չափեց:

— Ա՛յ իմ կորած ազիզ բալէք, ասեց, ես էլ ձեր մէրն եմ. ախար մեռայ էսքամ տարի ձեր դարդովն էրուելօն, խորովուելօն. . . .

Իրեքով էլ մնացել ին մաթ էլած, իրար երեսի մտիկ անելօն, հէնց իմանում ին՝ էրազ ա ինչ որ տե-

նում են: Ախար որդիան որդէ. ըսկի աւատալու բան ա: Նոր նստում են ըստէ թագաղան խօսք ու զըլցի, մասլահաթի տուտը բաց անում, ասում, խօսում, իրար հալ հարցնում, իրար քէֆ հարցնում, իրար գլխով անցկացածը նաղլ անում, լսում, իրար էրեսի մտիկ տալի, խնդում, ծիծաղում, ուրախանում՝ աշխարով մին ըլնում, ընչանք քնները տանում ա, բերում են թազադան տեղեր գցում դուքանի միջին, իրար ճիտ անում, անուշ քնում:

Առաւոտը լիսը բացվում ա թէ չէ, բէզրգեանը վեր ա կենում, թագաւորիցը իզին առնում, կընկում դալա դուքանը: Գալիս ա ի՞նչ տենում — իրա կնիկը թագաւորի նօքարների հեննայ ճիտ արած՝ քնած: Էլ ձէն-ծըպտուն չի հանում, թողում ա գալի թագաւորին իմաց տալի.

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա, քու նօքարները, որ զրկել իր դուքանիս մուղաթ կենան՝ արի աչքովդ տես ի՞նչ հալի են:

— Խէր ըլնի, հարցնում ա թագաւորը. ասա տեսամ ի՞նչ ա պատահէ:

— Չէ, թագաւորն ապրած կենալ, ասում ա, չեմ ասի. արի քու աչքովը տես, որ աւատաս:

Թագաւորը իրա նազիր, վէզրի հեննայ վեր ա կենում, զալի դուքանը, ամեն բան իրա աչքովը տենում: Թագաւորը մնում ա սառած մտիկ անելօն:

— Եդ քու կնիկն ա, հարցնում ա թագաւորը:

— Հա, թագաւորն ապրած կենալ, իմ կնիկն ա:

— Զանլաթ, զանլաթ, զանլաթ, ձէն ա տալի թագաւորը: — Զանլաթները գալիս են ընդէ կաննում:

— Ի՞նչ կհրամայես, թագաւորն ապրած կենալ, ասում են:

— Սրանց վէ կացրէք, ասում ա թագաւորը, իրեքին էլ էս սհաթը իմ աղաքին քեալլալ արէք:

Զանլաթները բոթում են վէ կացնում: Մէրը որ աշքը բաց ա անում, թագաւորին, նազիր, վէզրին, բէզրգեանին տենում իրանց գլխավիրե՝ ալբիալը իմանում ա թէ բանը ընչումն ա:

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա մէրը, էրկու խօսք ունեմ՝ թող ասեմ, եննայ ինչ ուզում ես՝ արա:

— Ասա՛, ասում ա թագաւորը:

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա, որ մեր մի մազին էլա դիպնես՝ իմաց կաց հուր յաւիտենական մեզ պարտական կմնաս. չունքի սրանք որ կան՝ իմ տղէքն են, ես էլ՝ սրանց մէրը: — Նստում ա ըստէ մին մին, տեղը տեղին իրա գլխով անցկացածը նազ անում, ո՞նց որ ես ձեզ նազ արի:

— Եյ հարայ, ասում ա թագաւորը, բաս դու էլ իմ կնիկն ես, դրանք էլ իմ տղէքը: — Ասում ա ու վագում, փաթթվում նրանց ճտովը: Գօմմայ մնացել ին սառած մտիկ անելօն: Բէզրգեանի հալը հօ՝ միք հարցընի. ուանդուանգը գցել ա, սիրթնէ, դառէ պատի ծէփ:

— Զանլաթ, զանլաթ, զանլաթ, ձէն ա տալի թագաւորը. էս սհաթին բէզրգեանին քեալլալ արէք:

Թուրը շողշողալու բաշտան՝ բէզրգեանի գլուխը Փըրըում ա, ընդէ վեր ընկնում:

Թագաւորը նո՞ր կնկալ, տղէքանց կուռը բռնում ա, էթում ամարաթը: — Էլ ինչ քէֆ, էլ ինչ ուրախութիւն, էլ ինչ մատաղներ մորթոտիլ, էլ ինչ աղքատներին փող բաժանիլ՝ որ էլ հալ ու հէսաբ չկար:

Սուտ չ' ասած՝ Ասսած պահած ժաման ժէւը չէ՛ ուրի: Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին:

ԱՆՄԱՀԱԿԱՆ ՎԱՐԴ

(Արարատեան բարբառ.)

 Աւալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագաւոր: Էս թագաւորը իրա ամարաթի աղաքին մի լաւ գիւլլի բաղ ա ունենում՝ միջին մի անմահական վարդի ծառ: Համայ իսեղձ թագաւորը ինչ անում ա չի անում, ինչ կատեպան բռնում ա, ինչքամ մուղաթ են կենում, չիլնում: — Հէնց գալիս ա բացուելու վախտերքը, խարը (որդ) գալիս ա էդ վարդն ուտում, էթում, չի թողում որ բացուի: Ըսենց անց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ թագաւորը մնում ա հասրաթ էդ վարդի Փոտին: Օրէն մի օրը գալիս ա մի կատեպան.

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա, որ ինձ կատեպան բռնես, քու վարդին ընենց մուղաթ կկենամ, որ խարը չի ուտի: Հէնց բացուեց թէ չէ, ասում ա, կքաղեմ, կբերեմ կտամ քեզ:

— Տղայ, ասում ա թագաւորը, աշխարքումն էլ կատեպան չի մնացէ՝ էկել ա, ինչ ա չաթէ, որ դու ինչ չաթես:

— Թագավորն ապրած կենալ, ասում ա, ես կարամ. չկարացի՝ արինս քեզ հալալ ա:

— Լաւ, դո՞ւ գիտաս, ասում ա թագաւորը, կարա՛ գնա՛ մուղաթ կաց: — Բերում ա սրան բռնում իրան կատեպան:

Գարունքը գալիս ա թէ չէ, ես կատեպանն ա, նետուանեղը վեր ա ունում, էթում անմահական վարդի ծառի տակին գշեր, ցերէկ դարաւուլ քաշում: Կենում ա մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, հէնց էն ա պտի վարդը բացուէր՝ մի վախտ տղի քունը տանում ա: Էն դհիցը խարը գալիս ա վարդն ուտում, թողում էթում: Կատեպանը աչքը բաց ա անում, տենում ո՞նչ վարդ կայ, ո՞նչ զադ: Գալիս ա թագաւորին խաբար տալի.

— Թագավորն ապրած կենալ, ասում ա, սաղ շաբաթ գշեր, ցերէկ դարաւուլ քաշեցի, հէնց էկաւ բացուելու վախտերքը, սատանական քունս տաբաւ. մի վախտ աչքս բաց արի, տեհայ խարն էկել ա կերէ, գնացէ: Թագավորն ապրած կենալ, ես հետ բաշխա՛, գեալաջաղը ո՞նց ըլնի՝ ես խարի հախիցը կգամ:

— Բան չկայ, ասում ա թագաւորը, կերել ա՝ կերէ. նրան էլ չի մնայ:

Ես մի տարին ըսենց անց ա կենում, գալիս ա էն մի տարին, գարունքը բացվում ա թէ չէ, ես կատեպանը վեր ա կենում, էլի էթում վարդին մուղաթ կենում: Հէնց գալիս ա բացուելու վախտերքը, տենում ա խարն էլի էկաւ որ ուտի. ուզում ա նետուանեղով տայ, էն դհիցը մի բլբիւլ թռնում ա գալի, խարին կտցում, տանում: Վարդը մնում ա սաղ-սալամաթ: Կա-

տեպանը ուրախ ուրախ քաղում ա, տանում տալի թագաւորին:

— Թագավորն ապրած կենալ, ասում ա, հրէս վարդը քաղեցի, բերի: Ես հետ էլ խարն էկաւ որ ուտի, էն դհիցը մի բլբիւլ թռաւ, էկաւ խարին կտցեց՝ տարաւ: Բան չկայ, ասում ա թագաւորը. էն բլբիւլին էլ չի մնայ:

Ես տարի էլ ա ըսենց անց կենում: Գեալաջաղը իրա վախտին, էս կատեպանը էլի էթում ա վարդին մուղաթ կենում, գշեր, ցերէկ ծառի տակին դարաւուլ քաշում: Հէնց գալիս ա բացուելու վախտերքը, տենում ա էլի մի խար դուս էկաւ, վրա պրծաւ վարդին հէնց էն ա ուզում էր ուտի, էն դհիցը էլի էն բլբիւլը վեր էկաւ որ խարին կտցի, տանի՝ որդիան որ էր, թփերի տակիցը մի վիշապ դուս էկաւ, բլբիւլին էլ, խարին էլ մի հանքի կուլ տուեց. վարդը մնաց էլ եղ իրա տեղը անարատ: Կատեպանը ուրախանում ա, աշխարով մին ըլնում, վարդը քաղում ա, տանում տալի թագաւորին:

— Թագավորն ապրած կենալ, ասում ա, էս տարի էլ ամեն տարուայ պէս էլի մի խար էկաւ, ուզեց վարդն ուտի, էն դհիցն էլի էն բլբիւլը թռաւ, վեր էկաւ, հէնց էն ա ուզում էր խարին կտցի, տանի, ալբիալը թփերի տակիցը մի վիշապ դուս էկաւ, վրա հասաւ, էրկսին էլ մի հանքի կուլ տուեց: — Հրէս սաղ-սալամաթ վարդը քաղեցի, բերի:

— Բան չկայ, ասեց թագաւորը, էղ վիշապին էլ չի մնայ:

Ես մի տարին էլ ըսենց անց կացաւ, գեալաջաղը էլի կատեպանը վէ կացաւ գնաց, որ վարդին մուղաթ կե-

նայ: Եկաւ բացուելու վախտերքը, տեհաւ էլի մի խարդուս էկաւ, վրա հասաւ որ վարդն ուտի, էն դհիցը էլի մի բլբիւլ թռաւ, վեր էկաւ, հենց էն ա ուզում էր խարին կացի, տանի՝ թփերի տակիցը էլի էն վիշապը դուս պըծաւ, վրա հասաւ էրկսին էլ մի հանքի կուլ տուեց: Կատեպանը որ տեհաւ, էս հետ էլ չհամբերեց, քաշեց նետուանեղը, տալու բաշտան՝ եալլայ վիշապը գլխի վրէն կունտկի տուեց, արէնճեճեխ ընկաւ գետինը, սատկեց: Էն սհաթը վարդը քաղեց, տարաւ տուեց թագաւորին:

—Թագաւորն ապրած կենալ, ասեց, էս տարի էլ խարն էկաւ, ուզեց վարդին ուտի, բլբիւլն էկաւ, ուզեց խարին ուտի, էլի էն անխափ վիշապը թփերի տակիցը դուս պըծաւ, վրա հասաւ էրկսին էլ կուլ տուեց: Էս որ տեհայ, ես էլ քաշեցի նետուանեղս, տուի վիշապին տեղն ու տեղը չորացրի:

—Դու էլ լաւ ես արէ, ասեց թագաւորը, համալքեղ էլ չի մնայ:

Կատեպանը էս խօսքի վրէն, մնում ա միտք անելոն, թէ էս ինչ բաս ա, թագաւորը իսլ պտի ասի՝ քեզ էլ չի մնայ Միտք ա անում, միտք ա անում, իսլքը քանի չի հտոնում.—էթար թագաւորին հարցնէր՝ վախում էր, ըըլնի թէ հերսոտի. ըսենց մնաց, ասեց՝ տեսամ սրա վերջն ինչ ա ըլնում:

Թագաւորի գիւլլի բաղի միջին մարմարից շինած մի հաւուզ կար, որդէ թագաւորը, իրա կնիկը վախտ վախտ գալիս ին լեղանում: Օրէն մի օրը, կատեպանը նի էլաւ էդ հաւզի կշտի ծառը, վրէն չորուկ-մորուկ կար, ուզում էր կտրի: Բիրդան տեհաւ թագաւորի կնիկը կար, վաղաւաշներովը էկաւ որ հաւզի միջին լեղանայ:

Նա էլ վախլութիւնիցը վէ չեկաւ ծառիցը, ասեց՝ կենամ, լեղանայ պրծնի, էթայ՝ եննալ: Թագաւորի կնիկը շորերը հանեց, նի մտաւ հաւուզը, լեղացաւ պրծաւ, դուս էկաւ, շորերը հագաւ որ էթայ՝ մի դափել գլուխը բանձրացրեց, տեհաւ՝ կատեպանը ծառի վրէն: Էլ ձէնձպտուն չհանեց, թռաղաց էկաւ ամարաթը, թագաւորին մին մին նազլ արեց.

—Բա չես ասի, ասեց, ըսենց, ըսենց բան. Ես գնացել ի հաւուզը որ լեղանամ. լեղացայ, պրծայ, շորերս հագայ ուզում ի էթայ, մի դափել վիրեւ մտիկ արի, տեհաւ մեր կատեպանը ծառի վրէն. դու մի ասի, ազաքուց էկել ա նի էլէ ծառը, որ տենայ ոնց եմ լեղանում:—Թագաւորը էս որ լսում ա, կատաղում, աւան ա դառնում: Էն սհաթը ձէն ա տալի.

—Չանլաթ, ջանլաթ, ջանլաթ:—

Էն սհաթը ջանլաթները գալիս են, թագաւորին գլուխ տալի, ընդէ կաննում:

—Ի՞նչ կհրամայես, թագաւորն ապրած կենալ, ասում են:

—Կէթաք, ասում ա, էս սհաթին կատեպանին կբերէք, իմ աղաքին քեալլայ կանէք:

Ջանլաթներն էթում են, կատեպանին բերում թագաւորի կուշտը:—Դէ կատեպանը էս որ տեհաւ, ալբիալը գլխի ընկաւ, թէ բանը ընչումն ա:

—Թագաւորն ապրած կենալ, ասեց, չինի ինձ թողաս էրկու խօսք ասեմ, եննայ ինչ ուզում ես՝ արաւ:

—Լաւ, ասեց թագաւորը, ասաւ տենամ ինչ ես ասում:

—Թագաւորը սաղ ըլնի, ասեց կատեպանը, միտդա որ ինձ կատեպան բոնեցիր. աղաքի տարին էկաւ իրա դարաւաշներովը էկաւ որ հաւզի միջին լեղանայ:

քեզ ասեցի՝ թէ խարը վարդին կերաւ, դու ասեցի՞ բան
չկայ, նրան էլ չի մնալ: Լաւ: Են մի տարին էլ գնացի
վարդին մուղաթ կենալու, էկայ ասեցի՝ մի բլբիւլ էլ
էկաւ խարին կերաւ, դու էլի ասեցի՞ բան չկայ, դրան
էլ չի մնալ: Լաւ: Վրա իրեք տարին էլ որ էկայ ասե-
ցի՝ էս հետ էլ թփերի տակիցը մի վիշապ դուս պրծաւ
բլբիւլին կուլ տուեց, դու էլի ասեցի՞ բան չկայ,
նրան էլ չի մնալ: Լաւ: Վրա չորս տարին որ էկայ ա-
սեցի՝ վիշապին էլ ես տուի, սըպանեցի, դու էս հետ
ասեցի՞ բան չկայ, քեզ էլ չի մնալ: Հմի, թագաւորն
ապրած կենալ, ասեց, դրուստ որ ընձ էլ չմնաց. քու
խօսքը կատարուեց, որ ուզում ես նհախ տեղը իմ գը-
լուխը թուցնիլ տայ: Դէ բաս ըտենց ա, թագաւորն
ապրած կենալ, հմի էլ ես եմ ասում որ — Քեզ էլ
չի մնալ:—

Թագաւորը որ լսում ա կատեպանի խելօք ջուղաբը,
նրան բաշխում ա, էլ չի թողում որ քեալլայ անեն:

ԽԵԼՔՊԱԿԱՍ ՔՈՒՐԵՐՈՒՆ

Հ Ե Փ Ա Թ Ը Ը

(Խրիմու բարբառ)

Ատենակով ժամանակով մէկ մը կար, մէկ մը չիկար՝
մէկ մարդ կար: Ադ մարդը մէկ կնիկ ունէր, երեք
հատ ալ աղջիկ:— Աս աղջիկները խելքպակաս էին
ու տունը մնացել էին:

Մէկ օր մը օրթանճայ¹⁾ աղջիկը կերթալ կեօլէն
ջուր բերելու. ադ կեօլին քովն ալ պալապան սէլվիի
ծառ կայ էղիլ է: Աղլի ջուրի գնացող աղջիկը փար-
չերը վար կըտնէ ու ծառին վրան նալելէն՝ կասէ.

— Ի՞նչ աղէկ պան կլար, էկէր թագաւորին օրդին
ճիճալիս²⁾ առնէր, ճիճաս ալ մէկ հատ օրդի ունենար,
անունն ալ կիկօս տնէինք, կիկօսն ալ ինձի հետ պա-
րապար ջուր առնելու գար ու իսա ծառին վրան էլ.

Ծան. Այս հէքիաթը ուղարկել է մեզ արժ. Գ. քահ. Մատինեանցը:

1) Մէջնէկ:

2) Մէծ քոյր:

նէր ու ինէր կեօլը, վայ Կիկօսին մօրը: — Ասից ու կցից լալու:

Աղջկան մարը տունը կըպէքլէէ, կըպէքլէէ՝ ջաւը չիկայ. Բնչ թող անէ, շաշմիշ կլայ ու կըմնայ: Վերջը կասէ ողջափիկ աղջկան.

— Հաքա՛), էրթաս նալիս նէ քուրդ Բնչ կանէ, ջուր էղաւ մնաց, իսա ատենս չիկայ:

Պղտիկ աղջիկը կելլէ էրթայ կընայէ, Բնչ տեսնէ — քուրը նստիլ է ու կուլայ: Կըհարցնէ.

— Հաքա՛, Բնչ էղաւ, որ կուլաս:

— Ի՛, հապա չըգիտիս տըհա ինչ էղածը. ճիճալիս թագաւորի օրդուն տուին, ճիճաս մէկ օրդի ունեցաւ, անունն ալ Կիկօս տըինք. Կիկօսը էլաւ ծառը, ինկաւ կեօլը, վայ Կիկօսին մօրը: — Ասից ու կցեցին էրկուսն ալ լալու:

Մարը կըպէքլէէ, կէնէ ջուր չիկայ: Զան տուից մեծ աղջկան ու ասից.

— Հաքա՛, էրթաս նալիս նէ իտա քուրերդ ո՞ր պապայիս ետևը մնացին, չէնէ մի կեօլը ինկան:

Էլաւ մեծ աղջիկը, գնաց քուրերուն էտեէն: Ճեռուէն քուրերը տեսան, որ իրենց ճիճան կուգայ ու կցեցին տահա աւելի լալու ու ոռնալու.

— Արի, մամա, օրդուդ հալը նալէ:

— Ի՞նչ էղաւ, ճանս, ինչի կուլաք:

— Վայ, ճիճայ, Բնչես չիլանք. տուն թագաւորի օրդուն գնացիր՝ մէկ օրդի ունեցար, անուննալ Կիկօս տըինք. Կիկօսն ալ էլաւ հանա իսա ծառին վրան ու ինկաւ կեօլը, վայ Կիկօսին մօրը: — Ասին ու կցեցին երեքը մէկտեղ լալու:

Աղջիկներուն մարը շատ պէքլէմիշ արաւ, ամանալեցաւ, որ աս ըլալու պան չէ, ձգից տունը, տեղը էլաւ ինքն ալ էկաւ աղջիկներուն ձան տալու: Հեռուէն աղջիկները տեսան, որ իրենց մարը կուգայ, կցեցին երեքը մէկ ձանի կանչելու.

— Վայ, մեծ մամա, արի, նալէ թոռիդ հալը, էլաւ ծառը, ինկաւ կեօլը:

— Ճանս, հարցուց մամաները, Ենչես թոռ է ու ինչ էղաւ, իմանամ ու ես ալ լամ:

— Ի՛, դուն տըհա չըգիտիս. մեր ճիճալին թագաւորի օրդին տուաւ ու ճիճաս մէկ օրդի բերից, անունն ալ Կիկօս տըինք, Կիկօսն էլաւ ծառը, ինկաւ կեօլը, վայ Կիկօսին մօրը: — Ասին ու կցեցին չորսն ալ մէկ ձանի կանչելու, քիթերը, բերանները ճանկուտելու — Կիկօսն էլաւ ծառը: ինկաւ կեօլը, վայ Կիկօսին մօրը:

Հալիսը տացա ձանէն ժողոտուեցան կեօլին չորս դին ու վրանները կընալին: Քիչ վախթ անցնելէն վերջը, հարերը տուն կուգայ, կընայէ, որ տուն, տեղ ձգիլ ին եամ եասի¹⁾ գնացիլ ին: Մարդը հարց ու փորձ կանէ, տըացիներէն կիմանալ, որ տաքա ջուրի գնացիլ ին: Կելէ ինքն ալ էտեներէն կերթայ: Հեռուէն կըտեսնէ, որ կեօլին չորս դին ժողոտուիլ ին ու մէկ լացի ու կոռումի ձան կու գալ: Մարդն ինքն իրեն կասէ. «Պէտքիմ իմ խեերս էտեէ էտե կեօլը ինկիլ ին ու ես փառք Ասծու ազատեցայ ձեռքերէն»: Մէլմ ալ նալիս, չորսն ալ մէկ բերան կըկանչին.

— Վայ, պապա, վայ, արի թոռիդ հալը տես. Կիկօսը էլաւ ծառը, ինկաւ կեօլը, վայ Կիկօսին մօրը:

1) Անտէր:

— է՛, բնչիս թոռը, հիշ մենք թոռ ունինք որ:
— Հապա չունինք. մեր մեծ աղջկանը թագաւորին
օրդուն տուինք, Աստուած մէկ տէսօք մանչ զաւակ
տուից, անունն ալ Կիկոս տրինք. Կիկոսն էլաւ ծառը,
ինկաւ կեօլը, վայ Կիկոսին մօրը:

— Ատպէս լացով, կանչով պան չի ըլար, արիցէք
տուն էրթանք ու մեր ինա սև օքուզը¹⁾ մորթինք, Հո-
գու հաց անինք, Աստուած ուզինայ նէ՛ կըսաղնայ:

Կելլին կերթան տուն, իրենց վերջի ունեցած օ-
քուզը կըմորթին, հալխին կըժողուին ու կուտեցունին,
ունեցած չունեցած կըլմնցունին ու կասին՝ պէլքիմ
կըսաղնայ տէցին ու աս ումիտով կընստին: Հարը կասէ.

— Ես Կիկոսին սաղցնելու չարէն կիտիմ, ամա
խօսքէս տուս էլլէլու չիք:

— Զէ, չին էլնինք, թէք թօ սաղնայ:
Տաքա ազպարներուն²⁾ մէջը մէկ հատ հին տուն
ունին էղիլ է. ատ տունին դուռն ու փէնջէրէն հարը
ամուր կըփակէ, ծակ ու ծուկ տեղերն ալ աղէկ կամ-
րացունէ, վերջը տունին թեպէն³⁾ կըծակէ ու կնկանը ու
աղջիկներուն ձեռքը էրկէրկու փարչ կուտայ ու ին-
չուանքի իրիկուն կեօլէն ջուր կրել կուտայ, անպէս
որ ալլի տունը ջուրով պերնէ պերան կիլինքցունէ,
վերջը իրեն կնկան ու աղջիկներուն ձան կուտայ ջու-
րին քովը ու չորսին ալ սըրայով կըկայնեցունէ ու կասէ.

— Աղէկ աչքերդ պացէք ու ջուրին մէջը նայեցէք,
շինտի Կիկոսը կլուսը ջուրէն կըհանէ, նայեցէք, աթիք
(քաջ) կտնուիցէք ու մէկէն ջուրը թապլուեցէք, ո՛վ

Կիկոսին պոնիք. Ես աստեղ աղօթք կանիմ, որ շուտ էլլէ:
Աս ասելէն վերջը, հարը էտևները կընալէ: Ասա-
ծին պէս ալ խելքպակասները սալթ մէջը կընալին,
իրինց շուքը ջուրին մէջը կըտեսնին ու— Հան ա Կի-
կոսը — կասին ու մէկէն կըթապլուին պոնելու, ա-
մա մէմալ տահա մէջէն չին էլնի: Ատպէսով մարդը
ադ խեերէն կըխալսի, էրէսը խաչ հանելէն կելլէ կեր-
թայ ու մէմալ ան տունին քովը չի հանտիպիլ:

Վերէն երիք ինձոր ինկաւ. մէկը ասողը կերաւ,
մէկը լսողը, մէկն ալ՝ սորվողը. չօփերն ալ՝ Կիկոսի
(Կիրակոսի) խըսըմները (ազգականները) կերան:

¹⁾ Եզ:

²⁾ Բակ:

³⁾ Կտուը:

ԱՍՏՈՇ ՈՂՈՐՄԱՆ Ա

Ըլում են, չեն ըլում էրկու զարգեար. մինը հայ,
մէկէլը—ջհուդ: Արանք մի քաղ՝ քում իրար կշտի
բանելիս են ըլում: Հայն մի քեասիթ մարթ ա
ըլում, հ'մա Աստծու ճամփին: Ամէն ՚րիգուն¹⁾ ուաւոտ
աղօթք անելիս ու ասելիս ա ըլում. «Աստոծ ողորմած
ա»: Ինչ քամբախտութին էլ նրան ուաստ գայ, էլի չի
մտահան անում իրա խօսքը, թէ «Աստո՞ծ ողորմած ա»:
Ջհուդն ուզում ա, որ մի հանքով հայի գլխին
մի փէթէրակ²⁾ բերէ ու տե՛նու թէ էնդով էլ միտք
կըպ'հէ իր «Աստո՞ծ ողորմած ա»-ն, թէ չէ:

Մի դօնում³⁾ թ'գաւորն ուզում ա մատնուք շի-
նել տալ ու կանչում ա մեր հայ զարգեարին: Թ'գաւորը

Մատնում է: Սոյն գըքի մէջ հրատարակում ենք պ. ՀՄԱՅԵԱԿ
ՄԱՐԴԻՆԵԱՆՑԻ մեղ ուղարկած հետեւեալ եօթ հէքիթները, որ պարոնը
ժողովել է Շնոր գիւղում (Խուռու նահանգում) և գըել բուն տեղա-
կան բարբառով:—Հրապարակաւ մեր շնորհակալիքն ենք յայտնում
պարոնին, որ լաւ ըմբռնելով հայ ժողովրդի բանաւոր գրականութեան
ուսումնասիցութեան մէջ:

1) Փոթորիկ, գժբաղդութիւն:

2) Անզամ:

տալիս ա նրան ոսկի, էրծաթ ու անգին քար: «Էս քե՝
ոսկի, էս քե՝ էրծաթ, էս էլ քե՝ անգին քար,—ասում
ա թ'գաւորը—վէ՛ կալ ու իրեք օրի վրայ թէ մատնուքը
բերիր, խիստ լաւ, թէ բերիր ոչ, լաւ իմացած կաց,
որ գլուխդ ուսիդ տուն չես գնալու»: Զարգեարը գը-
լուխ ա տալիս թ'գաւորին, վե՛ կալնում ոսկին, էր-
ծաթն ու անգին քարը, տուն գալի: Ուստէն գալիս ա
դուքանը, էդ բաները գնում դազգի վրէն ու աշկեր-
տին ասում: «Լաւ օրօն արա, աչքիդ լսի պէս պ'հէ,
հէչքէլը եդ գամ. թէ որ մի բան կորել ա սրանցից,
թ'գաւորի սուրն ա մեր գլուխը»:

Դու մի ասիլ ջհուգը իր դուքանից անկաջ ա դը-
նում, իմանում, ինչոր նրանք ասում են: Բուսու⁴⁾) ա
պ'հում, հէնց որ ուստէն հեռանում ա, նա տուն ա
մտնում, աշկերտին զը՛ցով անում, նրան թլ'սմորում,
անգին քարը վե՛ կալնում ու դու՛ս գնում: Աշկերտն
էդ բրառուրդ⁵⁾) չի անում: Շատ ա անց կենում, թէ քիչ,
ուստէն եդ ա գալիս ու ոսկին ու անգին քարն ուզում:
Աշկերտը տալիս ա ոսկին ուստին, հ'մա անգին քարը
ինչ զարար⁶⁾) ման ա գալիս, գդնում չի: Ես պուճախ,
էն պուճախ, գէս անգին քար, գէն անգին քար—չէ,
կայ ոչ: Եթ տուն ու դուռ մանգալէն ջաններուն հաս-
նում ա, ուստէն մէլնումուգարէն⁶⁾ Աստ'ծուն ա ա-
նում ու ասում. «Էհ, Աստո՞ծ ողորմած ա»:

Ջհուդն էլ մթաթէ գրգարար ա լիս ընգնում,
գալիս ա մին մին նրա դուքանը, ախ ու վախ անում,

3) Դարան մտնել:

4) Նկատել:

5) Քան, չափ:

6) Ցոյս ու ապաւէն:

ու սրտումն ուրախանում։ Զհուգը տանում ա անդին քարը գձում անտակ ծովի մէջը։ Հէնց ջուրը գձելն ևետ⁷⁾ մի ձուգը կուլ ա տալիս էդ անդին քարը։ Մի թօռչի ա ըլում ծովի ափին, թօռը գձում, ձուգը բռնում, բերում քաղաք ծախելու։

Խեղճ զարգեարն էլ ամէն տեղից մէլումուդարէն կտրած, տե՛նում ա, որ վրայ իրեք օրն ա, որդիան որ ա, պէտք ա թ'գաւորի մարդիքը գան ու իրան տանին, որ գլուխը տան, հ'ւաքում ա իրա հ'րեաննուն ու քարեգամնուն, մի լաւ սուփրայ սարքում, որ մի լաւ քէֆ անեն իր եղի օրին։ Ամէն բան առած ա ըլում, Աստ'ծու անհատ բարին զեր ա բերում սուփրում, հ'մա թաժա ձուգը չեն ունենում։ Հէնց էդ ս'հարին ճամփէննի մի ձուգը-ծախող ա անցկենալիս ըլում։ ախչիկը⁸⁾ որ տե՛նում ա, ասում ա մօրը. «նանի, նանի⁹⁾», իմ հէրը ամէն բան առել ա, մէնակ թաժա ձուգն ապակաս. արի՝ թաժա ձուգն էլ առնունք։ Չուգն առնում են, փորը ճղում, լուանալիս տե՛նում են, որ անդին քարը ձգան փորումը։ Էս որ տե՛նում են մէր ու ախչիկ, ոտներուն տեղիցը կտրվում ա։ Ախչիկն ալախմալախ¹⁰⁾ վազում ա, ընդնում հօր խտիտը. «Աստո՛ծ ողորմած ա, ապի ջան, Աստո՛ծ ողորմած ա»— «Աստո՛ծ ողորմած ա, որթիս, եթէ ես մեռնելու ըլիմ, ողորմած Աստո՛ծը քեզ հէրութին կոնէ. մէկին Աստո՛ծ ոչ կորցնէ, բանդէն ի՞նչ պ'տի անել»։ Զարգեարը

տուն ա մտնում, ի՞նչ տե՛նում—իր կնդայ ձեռին անդին քարը։ Խելքը գլխիցը թռչում ա, ուզենալիս չի ըլում, որ աչքերին ու նգաջնուն¹¹⁾ հ'ւատայ։ Հմա որ անդին քարը շափաղշափաղ ա անում, ըեգնակի պէս փէլփ'լին տալիս, նոր հ'ւատում ա ու ջ'նաթաթախ «Աստո՛ծ ողորմած ա» ասում։

Ծնդնահացը դառնում ա հ'րսանքահաց։ Ուտում են, քէֆ անում, Աստ'ծուն փառք տալիս։ Ուստէն սաղ. գշերը միալար բանում ա, էզսի օրը մատնուքը հազիր անում ու տանում թ'գաւորի ամարաթը։

Զհուգը որ էդ բանը իր աչքովը լաւ տե՛նում ա, մնում ա մայիլ ելած։ Վերջը գալիս ա հայ զարգեարի կուշտը, մեղքը խոստովանում, թէ բաս չես ասիլ, ես եմ անդին քարը վե՛ կալել ու անտակ ծովը գձել, հմի տե՛նում եմ, որ ձեր Աստո՛ծը ողորմած ա։ Զհուգը մկրտվում, դառնում ա հայ, հէշվել իրա գ'րեզմանը մտիցը գձէր ոչ, թէ «Աստո՛ծ ողորմած ա»։

7) Զգելն և եթ։

8) Աղջիկ։

9) Մայրէկ, մայրէկ։

10) Շտապով։

11) Ականջներին։

ԱՆՁԻԳԵԱՐ ՄԵՐ

Ըլում ա, չի ըլում մի հարուստ թ' գաւորի կը-
նիկ. ունենում ա մի իգիթ տղայ. Ամէն օր տղէն
Դ գնալիս ա ըլում փորս, ե'բ տուն ա գալիս ը-
լում՝ ըիգները¹⁾, հետն Աստ' ծու անհատ բարին տուն
ա բերում: Եսէնց իգիթ տղէն ոտները ծ' զկակոլու մեղ-
րաճանջի պէս դուս՝ ւիտուն ա անում ու մօր հետը
բախտով ապրում: Շատ են ապրում, թէ քիչ, եդ միայն
Աստո՛ծ գիդէ, մի օր թ' գաւորի կնգայ ըմարաթումը
մի ուշաբ ա փէյդահ ըլում²⁾, գալիս ա դուզ թ' գա-
ւորի կնգայ կուշտն ու ասում, որ ինքը նրան սիրում
ա, թէոր թ' գաւորի կնիկն էլ իրան սիրում ա, պսա-
կուին ու մարդ ու կնգայ պէս ապրին: Թ' գաւորի կը-
նիկը խօսք ա տալիս, թէ ուշաբը բօյինն ունի³⁾ մի
հանքով նրա տղին սպանել, էնգուը որ տղէն չի ուզիլ,
որ իր մէրը մի ուշաբի կնիկ ըլի: Ուշաբն ասում ա,
որ դրա գեղը ինքը գիդէ:

— Օխտը սարի քամակին մի բաղ կալ, ասում ա, մի-
ջին մի խնձորի կալ: Օխտը գլխանի ուշաբնի պ'հում են եդ

բաղի դուռը: Եդ բաղը մտնողն էլ դուս չի գալիս:
Դու սուտ հիւնդացիր ու տղիդ ասա, որ գնայ էնան-
մ' հական խնձորիցը քե՛ հ' մար բերէ, նա կերթալ, էլ
եդ չի գալ:

Ռիգունը տղէն տուն գալիս Փոքրից, տե՛նում
ա, որ մէրը տեղումը հիւանդ ա: Ի՞նչդ ա ցաւում, մէրա, թնչ գեղ ես ուզում,
որ անեմ, հարցնում ա տղէն, էնդուր որ նա իր մօրը
գլխիցն առաւել էր սիրում:

Մէրն ասում ա, թէոր նա օխտը սարի ք' մա-
կումը մի բաղ կայ, էն բաղի անմ' հական խնձորից մի-
նը բերէ, իրան ուտացնէ, կըս' ղանայ, թէ եբեր ոչ,
պէտք ա մ' հանայ:

Տղէն էգսի օրը իր քեահլան ձին թամքում ա,
թուր ու զալիսանը կապում, ձիուն օզանգու տալիս⁴⁾
ու ծտի պէս թռչում:

Տղէն գնում ա, գնում, շատն ու քիչը Աստո՛ծ
գիդէ, ճամփին ուաստ ա գալի մի թ' գաւորական ըմա-
րաթի: Տղէն ուզենալիս ա ըլում դուզ անց կենալ ա-
մարաթի կշտովը, տե՛նում ա մի հիւրի մալաք ախչիկ
էնդի կանգնած, աչքը ճամփին կթած⁵⁾ մտիկ ա անում:
Ախչիկը հարցնում ա.

— Բ'օգ ձիաւոր տղալ, սուր թրաւոր տղալ, ճամ-
փէդ բարի, ուր ես գնում:

Տղէն ասում ա. «մէրս հիւանդ ա, գնում եմ օխտը
սարի ք' մակի բաղիցը անմ' հական խնձոր բերեմ, որ նա
ուտէ, ս' ղանայ»:

1) Կըեկոները:

2) Յայտնուիլ:

3) Յանձն առնոււ:

4) Ասպանդակով խփել ձիուն:

5) Աչքը յառել.

— Եղ ճամփէննի գնացողնին շատ են էլել, հ'մա եղակող ոչ մինը. Արթ էդ ճամփիցը եղ կանգնի, պը-սակուինք ու միասին ապրինք:

— Դեռ հլա իր մօր փորիցն էլել չի էն ախչիկը, որ մօրո խօսքը գեղին գձել տայ, ասում ա տղէն, ձիուն օգանգու տալի ու անցկենում։ Նատ ա գնում, թէ քիչ, հասնում ա էն բաղին։ Զին դրանը կապում ա, մտնում բաղը. խնձորը պոկում ու դու՛ս գալիս, ձի նստում ու զու ըլում⁶⁾։

Ծառ, քար, քոլ, ջուր, չիմ⁷⁾ լիզու են ըլում ու կանչում. « Տարնւ, տարնաւ, անմ' հական խնձորը տա-րնաւ։ Եղ ձէնիցը քնած օխտը-գլխանի ուշաբնին զարթ-նում են ու տղի եղնէն ընդնում, էնհէնց ծիկա տալի⁸⁾), որ նրանց ձէնիցը սար ու ձոր ըրոտում են. « Էյ, էյ, կանգնի, էղ բնչ միլլէթ ես. զուշն իր թեռվը, օձն իր պորտովը դէսը ոտք չի գնում, դու ժնց ես սիրո ա-նում մեր աթրափը⁹⁾ կոխել»։ Հ'մա տղէն բնչ մտիկ կըտալ նրանց ձէնին ու ծղրտոցին, ձին օգանգվում ա ու ծտի պէս թուչում տուն։

Ուշաբն ու մէրը էնհէնց գիդէին թէ տղէն էլ ետ գալու չի։ Հ'րսանիք ին սարքել ու քէփեր ին անում, օրեր անցկացնում։ Դեռ մի օրավար հեռու էր, ե՛ք տղի թուր ու զալխանի շըլիկը կոցը ու ձիու ոտ-նաձէնը մօր ընդաջին հասաւ։ Մէրն ասում ա ուշաբն. « տղէս գալիս ա»։ — « Ի՞նչ ես ասում, տղիդ էնհէնց տեղ

եմ՝ զ'րկել, որ ուշաբնին վենձ¹⁰⁾ թիքէն հ'մի ընդաջ-նին են թողել»։

Զէ. ե՛ք տե՛նում են, որ տղէն դալիս ա, ուշաբը փախչում ա մէրումը¹¹⁾ տապ անում¹²⁾ , մէրն էլ մըտ-նում ա տեղն ու սուտանց տընքտընքում, մթամ թէ հիւանդ ա։ Անմ' հական խնձորիցն ուտում ա ու էդսի օրը լ'ւանում։

Էգսի օրը տղէն փորսի ա գնում, ըիգունը մեղ-րաճանճի պէս ոտքերը ծ'զկակոլոլ տուն գալիս, տե՛-նում ա, որ մէրը էլեգ հիւնդացել ա:

— Հմբ ինչդ ա ցաւում, այ մէրտ հարցրուց իգիթը մօրը. — Բնչ դեղ պտիմ ճարել, որ դու լ'ւանաս, ասա, ես կենքս ու արևս քե՛քագա¹³⁾ կոնեմ, չանքլի¹⁴⁾ դու ս'զանաս։

— Լաւ էլ գիգեմ դեղը, հ'մա քե՛ չեմ ղիմիշ ա-նում, որդիս, որ զըկեմ։ Ասում են օխտը սարի ք'մա-կումը մի ջէրան ա րածում։ Պոզերը ոսկի են, ոտներն էրծաթ, պնչածակերիցը կրակ ա դու՛ս թափվում։ Թէ որ էն ջէրանի կաթնիցը խմեմ, կըս'զանամ։

Տղէն էգսի օրը թուր ու զալխանը կապում ա, ձի ըլում ու օգանգվում ձիուն, ծտի պէս թուչում։

Գնում ա, գնում, շատն ու քիչը Աստո՛ծ գիգէ, հասնում ա էն հիւրի մալաքի քօշկ ու սահարին։

— Բոզ ձիաւոր տղայ, սուր թրաւոր տղայ, — կան-չում ա հիւրի մալաքը — ճամփէդ բարի, ուր ես գնում։

¹⁰⁾ Մէծ։

¹¹⁾ Անտառ։

¹²⁾ Պահում։

¹³⁾ Զոհել։

¹⁴⁾ Միայն թէ։

⁶⁾ Յուշի ընկնել։

⁷⁾ Բոլոր, ամէն բնչ։

⁸⁾ Աղաղակել։

⁹⁾ Սահմանը, մօտը, հողը։

Տղէն ասում ա. «մէրս հիւանդ ա, գնում եմ օխտը սարի ք'մակիցը ջէլրանի կաթը բերեմ, որ մէրս խմէ, ս'զանայ»:

—էդ ճամփեննի գնացողնին շատ են էլել, հ'մաեդ եկող—ոչ մինը: Արի, էդ ճամփիցը եդ կանգնի, պսակուինք ու միասին ապրինք:

—Դեռ հլա իր մօր փորիցը էլել չի էն ախչիկը, որ մօրս խօսքը գեղին գձել տայ. —ասում ա տղէն, ձիուն օգանգու տալի ու անցկենում:

Շատ ա գնում, թէ քիչ, հասնում ա օխտը սարերին: Կենդ կենդ անց ա կենում սարերը, հ'մա քանի գնում ա, սարերը մթնում են, Ե'ք հասնում ա վրա օխտը սարին, աշխար'քը նրա ըղաքին մթնում ա:

Էնէնց մթնում են սար ու ձոր, որ ես մութն ասեմ, դու գ'շեր իմացիր, ես գ'շեր ասեմ, դու դժոխք իմացիր. մի խօսքով էն զալդի ակնակիր գ'շեր, որ մատդ աչքը կոխէիր, մարդ տե՛նուլ չէր: Քամին որ վըշշացնում չի, ծառեր են որ գեղնի հետ դզվում են: Ամպն ու չանգը գեղինն առել են. ծովինարը¹⁵⁾ էնէնց խաղում, որ կոսես թէ ուզում ա աշխար'քը կրակ տայ:

Հ'մա տղէն, որ ասես, այնումը չի գձում, աչքը ջէլրանն ա արել ու ձին քշում: Ե'ք անց ա կենում վրաօխտը սարը, ամպն ու չանգը պատռում են, մի էն զալդի չալիր ու չիման դուզ ա երեսում, որ կասես—ոնչ ուտեմ, ոնչ խմեմ, որ ու գ'շեր էդ դզին մտիկ աանեմ: Հէնց էդ դզումը՝ բածելիս ա ըլում ջէլրանը:

Ջէլրանը որ տղին տե՛նում ա, սիրտը խաղ ա ըլում, էնդուր որ Փորսը իրան ոտովն ա գալիս նրա

կուշտը: Ջէլրանն ուզում ա տղի վրա վրապրծնու¹⁶⁾, հ'մա տղէն որ ձիու սանձքը բօշ ա անում ու ջէլրանին նի գալիս¹⁷⁾, խեղճը տե՛նում ա, որ չէ, սա իր տամի ոքմին չի, պոկին ա տալի¹⁸⁾: Նա վազում ա, տղէն եղնէն, նա վազում ա, տղէն եղնէն, նա վազում ա, տղէն եղնէն, հէշվէլը գնում ա, որ լիթոնն ընդնում ա, էլ կարում չի ոտը ոտի աղաքը դնե՛: Ջէլրանը կանգնում ա ու սկսում լիզու ածել¹⁹⁾). «Ա՛ բօզ ձիաւոր տղայ, սուր թրաւոր տղայ, վերևն Աստո՛ծ, ներքեւը դու. ես մէր եմ, Փորթս տանը ճամփալ ա պ'հում. ինձ դիմիշ մի անել. կենքս ինձ մի բաշխել, իմ Փորթին բաշխէ, կաթն ես ուզում, արի, չոքիմ, կթէ, տա՛ր»: Ես ասելու հետ ջէլրանը չոքում ա: Տղէն ձիուցը վէր ա գալիս, կթում ա, ամանը լցնում ու ձի ըլում, օգանգու տալիս, ու ծտի պէս թռչում:

Դեռ մի օրավար հեւու ա ըլում, որ տղի թռուր ու զալիսանի չըլիսկոցն ու ձիու ոտնաձէնը մօր անկաջն ա ընգնում: Ուշաբն ու տղի մէրը հէնց²⁰⁾ գիդենալիս են ըլում, թէ տղէն էլ եդ գալու չի, սուփրա սարքած քէփ անելիս են ըլում: Մէրը որ լսում ա տղի ձիու ոտնաձէնը. գլխիդիլաջ արա, որ տղէս գալիս ա ասում ա:

—Ի՞նչ ես ասում, տղիդ հէնց տեղ եմ՝ զրկել, որ հրեղէն ջէլրանը նրա վենձ²¹⁾ թիքէն անկաջն ա թռող հել հ'մի:

¹⁶⁾ Յարձակուիլ:

¹⁷⁾ Յարձակուիլ:

¹⁸⁾ Փախչիլ:

¹⁹⁾ Աղերսել, աղաչել:

²⁰⁾ Այնահաւ:

²¹⁾ Մեծ:

Քիչ են կենում, թէ շատ, մ'ն էլ տե՛նում են, որ տղէն ՚րեաց: Ուշաբը տապ ա անում: Մէրը աեղն ա մտնում ու սուտ տրնքարնքում: Տղէն բերում ա ջէլրանի կաթը, մէրը խմում ա ու ս'զանում: Էկսի օրը տղէն ֆորսատեղից եղ ա գալիս, տե՛նում, որ մէրը էլեդ հիւնդացել ա:

— Ի՞նչդ ա ցաւում, մէրա, հարցնում ա տղէն, բնչ դեղ ես ուզում, որ ճարեմ:

— Ո՞նց չի հիւնդանամ, ասում ա մէրը նեղացած քե՛նման իգիթ տղայ ունենամ, ու գիդենամ ոչ, թէ քու զուաթն²²⁾ ընչումն ա: Ասա, թէ քու զուաթն ընչումն ա, ես կըս'զանամ:

Տղէն ուզում ա մին մօրը փորցել: Ասում ա, որ ձեռներս չուանով կապես, էլ կարալ չեմ²³⁾ բան անել:

— Դէ թող կապեմ կոներդ, տե՛նում դրուստ ես ասում:

Մէրը կապում ա չուանով տղի կոներն ու բարձրը ձենով կանչում. «ուշաբ դու՛ս արի, ուշաբ, դու՛ս արի, ուշաբ, դու՛ս արի»:

Տղէն որ տարթու ա տալիս²⁴⁾ չուանը ձիւիկ ձիւիկ ա ըլում²⁵⁾:

— Մէրա, էդ բնչ ես ասում, էդ ում ես կանչում, ասում ա տղէն նետուանեղը ձեռը կալած:

— Ոչումի չեմ կանչում, որդի—ես հիւանդ եմ, տաքութին ունիմ, դելն եմ տալիս: Ես ս'զանալու չեմ,

հէչվէլը դու ասես ոչ, թէ քու զուաթն ընչումն ա: Տղէն ասում ա, «որ ձեռներս ճոպանով²⁶⁾ կապես, էլ կարալ չեմ բան անել: Գուածած անում:

Մէրը կապում ա ճոպանով տղի կոներն ու բարձրը ձենով կանչում. «ուշաբ, դու՛ս արի, ուշաբ, դու՛ս արի»: Տղէն որ տարթու ա տալիս, ճոպանը ձիւիկ ձիւիկ ա ըլում:

— Մէրա, էդ բնչ ես ասում, էդ ում ես կանչում — ասում ա տղէն, նետուանեղը ձեռը կալած:

— Ոչումի չեմ կանչում, որդի, ես հիւանդ եմ, տաքութին ունիմ, դելն եմ տալիս: Ես ս'զանալու չեմ, հէչվէլը դու ասես ոչ, թէ քու զուաթն ընչումն ա: Ես ասում ա մէրն ու նղաւում, փէլտիկ փէլտիկ ըլում:

Տղէն ասում ա. «որ երկու բիթս իրար հետ դնես ու նետուան'զիս լարովը կապես, էլ կարալ չեմ բան անել»:

— Դէ թող կապեմ, տե՛նում դրուստ ես ասում: Մէրը կապում ա նետուան'զի լարովը տղի բթերն ու բարձրը ձենով կանչում. «ուշաբ, դու՛ս արի, ուշաբ, դու՛ս արի, ուշաբ, դու՛ս արի»:

Տղէն որ տարթու ա տալիս, լարը բթերումը մէր ա մտնում: Մի դուռն ա բաց ըլում, գեղնի տակիցը մի ուշաբ ա դու՛ս գալի, թուրը վրա ա բերում, որ տղի գլուխը տալ. մէրը թողում չի:

— Արի աչքերը հանենք ու տանինք դնենք մի ծովի ափին, որ ժամ գայ, թէ չէ—ընդնի ծովի մէջը:

²²⁾ Ոյժ:

²³⁾ Կաբող չեմ:

²⁴⁾ Ուժգին շարժել:

²⁵⁾ Ծուէն ծուէն, կտոր կտոր:

Տղէն միտն ա բերում հիւրի մալաքի խօսքը, մատը կծում ա, հ'մա ինչ. բանը բանից անց էր կացել: Նրա աչքերը հանում են. աջ աչքը դնում են ձախ ջէբումը, ձախ աչքը դնում են աջ ջէբումը, տանում, դնում մի ծովի ափին, որ ժամ գայ թէ չէ, ընդնի ծովի մէջը ու իրանք եր գալիս իրանց քօշկուսարահին:

Տղէն ձեռներն ածում ա, տե՛նում, որ աղաքը ծով ա, եր ա դառնում ու եր գնում: Ե՛ս ծառին դիպչելով, Են քարին կպչելով գալիս ա, շատն ու քիչը Աստո՛ծ գիգէ, հասնում ա մի վենձ մէրու:

Եր մէրու պոնգումը մի անմ' հական աղբիր ա ըլում: Նստում ա եր աղբի կշտին, սառը ջըիցը իւրմում ու լիասիրտը — ըխոյալ անում. Հէնց եր ս' հաթին երկու աղունիկ գալիս են ու նրա գլխի վէրի կուանը մի հ' ճարքու վրայ վէր գալիս: Դրանցից մինը մէրն ա ըլում, մէկէլն իրա ճուտը:

Այս, նանի, էս խեղճ մարդը աչքեր չունի, ափսուս, Աստո՛ծ նրան ընչի ա պատժել:

Դա աչքեր ունի, որդի, դարդ մի անել: Դրա աջ աչքը ձախ ջէբումն ա, ձախ աչքը աջ ջէբումն ա: Մենք որ թուչինք, երկու բմբուլ վէր կըգձենք, թողնա աջ ջերի աչքը ձախ աչքի տեղը դնէ, ձախ ջերի աչքը աջ աչքի տեղը դնէ, վեր ունի բմբընին, դրէ աղբը ջրումն ու քսէ աչքերին, աչքերը կըս' լանան:

Աղունակնին էս ասսւմ են ու թուզում, իրանցից էրկու բլբուլ վէր գձում տղի գլխին: Տղէն վեր ա ունում աչքերը, դնում իրանց տեղերը, բլբընին անմ' հական աղբը ջրումը դրջում ու քսում, էն ս' հաթն ևէտ աչքերը ս' դանում են:

Տղի զուաթն ըլ եր եր էկած ա ըլում, բթերը ս զացած, աչքերն էլ առաջուանից լաւացած: Նա ճամփայ ա ընդնում դ' պա իր մօր ամարաթնին: Օխտն օրէն ճամփէն մի օրումն ա կտրում, հասնում ա տուն:

Դեռ մի օրավար հեռու ա ըլում, որ նրա ձին տիրոնջ ֆոտն առնում ա, սկսում ա խրխնջալ, ծուլիծուլ ըլիլ, ոտով գեղինը քանդել: Զին որ տիրոնջ գըլուխը տե՛նում ա, ոսկունին խաղսն են ըլում: Տղէն հասնում ա տուն, ձիու ճ' կատիցը պաչում, մտնում ա իր օթախն ու պատիցը վէր բերում թոգակալած նետ ու անեղը:

Ուշաբն ու մէրը գու՛ս են գալիս, որ տե՛նում են տղին թուր ու զալիսանը կապած, նետուանեղն ուսովն ածած, ոտն օգանգւում — թուքներուն ց' մաքում ա: Տղէն ասլանի պէս վրա ա տալի, ուշաբի գլուխը տալիս, զըրմաղըրմա կ' տորում ու մի ֆորի մէջ ածում: Մօր աչքերը հանում ա, աջու աչքը դնում ձախ ջէբումը, ձախու աչքը դնում աջու ջէբումն ու տանում դնում մի ծովի ափի, որ ժամ գայ, թէ չէ, ծովն ընդնի: Ինքն էլ ձիուն օգանդու ա տալիս ու ճամփայ ընդնում դ' պա հիւրի մալաքի ամարաթը:

Նա իր գլխի անցուանքը չիմ պատմում ա, ուզում ա, որ ախչկալ հետ պսակուի: Հ' մա ախչիկը չի ուզում: «Ես ուզէի իգիթի հետ ապրել, նամարդի հետ գործ չունիմ, դու որ քու մօր աչքերը քո ձեռովը հանել ես, դու կարալ չես ախչիկ սիրել, պէտքա գնաս օխտը տարի երգիր երգիր մանգաս, աշուղութին անես, մեղքերդ լուանաս, որ ես քե՛ ուզեմ»:

— Դէ լաւ. մի մատնուք տո՛ւ քու մատիցը, որ իմանամ դու ինձ մտիցդ չես գձելու, ասում ա տղէն՝

Էրտասունքը աչքերումը, Ախչիկը հանում ա իր մատիցը մի մատնութ ու տալիս ա նրան:

Տղէն մատնուքը դնում ա իր մատը: Հանում ա իր թուր ու զալիսանը, վէր ա դնում նետուանեղը, հանում իր շորերն ու հագնում մի ձնգլատորած²⁷⁾ ըդքատի շորեր, մի սաղ ուսը գձում ու ընդնում աշխար' աշխար': Ախչկանն ասում ա, որ թէ վրա օխտը տարին էն օրուայ օրը եղ գայ, եղ գայ, թէ չէ, թող ծնդնահաց տայ, իմանայ որ նա մեռած ա:

Տղէն սաղ աշխար'քը ոտի տակն ա ունում, էլ քաղաք չի թողում, էլ գեղ չի թողում, հեզվէլը օխտը տարին թմամում ա: Ախչիկը ճամփայ ա պ'հում, ճամփայ պ'հում, աչքը ճամփին ջուր ա կտրում, իր նշանածը գալիս չի: Օխտը տարին թ'մամում ա, անցակենում մի օր, անցակենում վրա երկուսը, նշանածը կայ ոչ ու կալ ոչ: Ախչիկը ծնդնահաց ա հազիր անում. կանչում ա իր մհալի աղկատնուն, քուերին, քաշալնուն: Վրա իրեք օրը սուփրէն բաց են անում, նստում: Հէնց ողորմաթաս խմելու վախտը որ գայիս ա, տե՛նում են տուն մտաւ մի խեղճ անշ'լակտար աշուղ:

Էն սհաթն և՛ետ նրան նստացնում են ու ֆլաւդնում ըդաքին: Նա ֆլաւի կէսն ուտում ա, ու մատիցը հանում ա իր նշանածի մատնուքը, դնում ֆլաւի տակին ու տալիս ասչուն²⁸⁾:

—Տարէք, տուէք թ'գաւորի ախչկանն ու ասէք, որ չիմ²⁹⁾ ուտէ, միջին մի հատ բրինձ չի թողու:

Ասչին տանում ա տալիս թ'գաւորի ախչկանը, ասում ա, որ չիմ ուտէ, միջին մի հատ բրինձ չի թողու:

Ախչիկն ուտում ա, ուտում, ե'ք պրծնելու վրայ ա ըլում, մին էլ տե՛նում ա, մի բան ա պսպում ամանումը. վեր ա ունում տե՛նում իր մատնուքը: Էն սհաթն և՛ետ կանչել ա տալիս իրան կուշտը եղ դարիք աշուղին: Ե'ք աշուղին տե՛նում ա, ճ'նանչում ա նրան ու ճտովն ընդնում: Խալխը մնում ա բերանը բաց: Նոր իմացում ա տալիս, որ իր նշանածն եկել ա: Ծնդնահացը դառնում ա հ'րանքահաց: Օխտն օր օխտը գ'շեր հ'րսանիք են անում ու հասնում իրանց մուրազին:

Խէրն ու բարաքաթն էստի, շառն ու շահմաթը լէգգու գլխին:



²⁷⁾ Պատառոստած:

²⁸⁾ Խոհաբար:

²⁹⁾ Բոլոր:

Թ Օ Ր Հ ՈՒ Տ Տ Ե Ն

Ը լ ում են, չեն ըլում մի մարդ մի կնիկ. սրանք ու-
նենում են մի մինումար տղայ: Ես մարդը թօռչի
ա ըլում: Ե՞ր որ հէրը մեռնելիս ա ըլում. կնդանն

ասում ա. «ա կնիկ, չըլնիմ, չիմանամ որ դու մեր
տղին իմ փէշակին տաս. ես հարի՛ր տարի չըչարուեցայ,
բնչ դադեցի, որ նա ինչ դադի. թող գնալ, մի ուրիշ
փէշակ ս'վորի, իր արևի ձէնն ածէ, ես ինչ ելալ, ելալ,
հալքաթ էս էր գրած ճ'կատիս»:

Տղէն վենձանում ա, դառնում 10—15 տարեկան
տղայ: Մի օր մէր ու տղայ իրար հետ քաղաքն են գը-
նում: Բ' զարումը մանգալիս էս տղի աչքովը մի թօռ
ա ընդնում: Թօռը շատ ա դի՛ր գալիս տղին. նա ընդ-
նում ա մօր ոտներն զաջում, պ'զատում, որ էդ թօռն
իր հ'մար առնու:

— Զէ, չէ. որդի—աթում մէրը—ըլիւ չի, քու հէ-
րը մեռնելիս վասիաթ¹⁾ ա արել, երկաթէ լուձը դրել
շնքիս, որ քե՛ հ'մար թօռ չի առնում, որ քե՛ թօռ-
չութենի չի տամ:

— Զէ, մէրա, չէ. պէտք ա էդ թօռն առնուս ինձ
մըհար²⁾). ասում ա տղէն, ընգնում մօր ոտները. «թէ
կառնուս, էդ թօռն ա, թէ առնուլ չես, էդ թօռն ա.
ասում ա ու զալիմ բոնում թօռիցը: Մէրը տե՛նում ա,
որ տղի ձեռիցը կարում չի պրծնուլ, փող ա տալի ու
էն թօռն առնում: Տղէն թօռը շակում ա ու ուրախ
ուրախ տուն գալիս:

Էգսի օրը տղէն թօռը վեր ա ունում գնում ջուրը
ձուգը բռնելու: Իրեք հետ³⁾՝ բեսին խէչահանում ա
ու Աստո՛ծ կանչում, թօռը ջուրը գձում: Հէնց որ
տե՛նում ա թօռը բան ա լնգել, ալախ-մալախ դու՛ս
հանում թօռը, տե՛նում որ միջինը մի գորդն ա:
Գորդը թօռիցը հանում ա ու ջուրը գձում, փոխփո-
շիման թօռը ջուրը գձում: Թօռը քաշում ա դու՛ս
վրաերկու գոնումն, էլի էն գորդն ա ըլում թօռումը:
Տղէն էդ ջուրն ա գձում գորդն ու փոխ-փոշիման թօ-
ռը ջուրը գձում: Վրաիրեք գոնումն ա թօռը դու՛ս
քաշում, վրաիրեք գոնումն էլ էն գորդն ա ընդնում
թօռը: Տղէն էս գոնումը գորդը ջուրը չի գձում. «աղ-
բէր, ձուգը չի ընդնում, ձուգը չի ընդնում, էլ ընչք
եմ ջուրը գձում գորդը, բալքա սա ա իմ զսմաթը:

Տղէն վեր ա ունում գորդն ու տուն բերում: Գորդը
վէր ա գձում հեռու դռան տակին ու ինքը դալիս ա
նստում կրակի կշտին: Մէրը ՚ըիգնաժամիցը տուն ա
գալիս, տե՛նում, որ տղէն ունքերը կիտած, մոռւթը
կախ արած, օջազի զրադին նստած ա.

²⁾ Համար:

³⁾ Անդամ:

— Ի՞նչ ես ունքերդ կիտել, ո՞րդի, հիւանդ խոն
շես,—հարցնում ա մէրը, ե'թ տե՛նում ա, որ տղէն
փոշիման նստած ա:

— Ո՞նց չի ունքերս կիտեմ, ալ մէրա, ասում ա
տղէն—էս օր ՛ռաւոտէն դէսը թօռ եմ գձում, մի հատ
գորդն ա բռնածս:

— Ո՞նչինչ չի կայ, ո՞րդի, ընչթ ես դարդ անում,
Աստո՛ծ էդ ա դրդել, էդ ես ըռնել, դու ի՞նչ անես,
հալբաթ էդ ա քու զսմաթը: Ռաւոտը վեր են կենում,
տղէն հանդն ա գնում, մէրը գնում ա ժամը: Գալիս
են տե՛նում,—ջուրը բերած, տունն աւլած, դու՞ս ու
տուն վե՛քաղած, ամաննին լուացած, խօրակն եփած,
առն բան սարքած ու կարգած. հ'մա ինչ զ'դար փիքը
են անում, միտք անում, գլխի չեն ընդնում:

Է՛լի են դու՞ս գնում մէր ու տղակ, էլ եդ գալիս
են տե՛նում, որ ՛ռաջուայ նման ջուրը բերած, տունն
աւլած, դու՞ս ու տուն վե՛քաղած, ամաննին լուացած,
խօրակն եփած, շորերը գձած, ամէն բան սարքին ու
կարգին:

— Ա՛յ մէրա,—ասում ա տղէն մօրը—բե՛ ես դը-
ռան տակին բուսու պ'հեմ, տե՛նում էս ով ա գալիս
մէր տունը սարքն ու կարգը գձում:

Մէրը գնում ա ժամը, տղէն մտնում ա դռան
քամակն ու բուսու պ'հում: Քիչ ա կենում, թէ շատ,
հլէ մինէլ էնա տե՛նում, որ քնչնիցը դու՞ս եկաւ իր
բռնած գորդն ու հուշկի հուշկի անելով⁴⁾ մօտացաւ

օջախին: Միքիչ դէս ու դէն մտիկ արաւ, տե՛հաւ որ
ոքմին չիկայ տանը, մին կուր՛ռաց, դառաւ մի հաւի
զդար⁵⁾, մին էլ կուր՛ռաց, դառաւ մի ոչխարի զդար,
մին էլ որ կուր՛ռաց, տրաքուեց ու միջիցը մի ախչիկ
դու՞ս եկաւ: Էնէնց սիրուն, որ ոնչ լսուած էր, ոնչ
տեհնուած: Որ տե՛նէիր, կոսէիր, ոնչ ուտեմ, ոնչ խր-
մեմ, գ'շեր ցերեկ նրա շիմշատ բօյուն մտիկ անեմ:

Էդ ախչիկը տեղը վեր ա քաղում, աւիլլ վեր ու-
նում տունն ու դուռը աւլում. ջուր բերում, ամման-
նին լուանում, թերեքնին սրբոտում, օջախի չորսի կու-
ռալ ջրջահանում, խօրակն եփում, հէնց ուզում ա, որ
տանի տւիլը դնէ դռան տակին, տե՛նում ա տղէն էն-
դի պպզած: Փախչում ա, վեր ունում իր խէշը⁶⁾ որ
հագնու: Տղէն վրա ա վազում ու բռնում: Գորդն ՛դա-
չում ա, պ'ղատում ա, որ իրան բաց թողու, տղէն
թողնում չի: Վեր ա կալնում ու գորդան խէշը կրակը
գձում, որ էլ նա հագնու ոչ:

Մէրը ժամիցը գալիս ա տուն, տե՛նում, որ տղէն
օջախի զբաղին նստած ա, նրա կշտին էլ ախչիկ, է-
նէնց սիրուն, որ ես ախչիկ ասեմ, դու հիւրի մալաք
իմացիր. նրա ՛րեսի շողքը պատերովն ա ընդած ըլում:
Մէրը ե'թ իմանում ա, որ ախչիկը գորդան միջիցն ա
դու՞ս եկե՛, շատ ուր խանում ա: Տղին պսակում ա
դրա հետ ու թիգաւորի պէս ապրում են:

Դրանք մի հ'րեան են ունենում, մի պառաւ ա
ըլում: Դա վեր ա կենում գնում թ'գաւորի կուշտն ու
ասում. «թ'գաւորն ապրած կենա. բաս չես ասել ֆլան

⁵⁾ Զափ, քան:

⁶⁾ Մաշկ, մորթ:

փլան տեղը մի մէր ու մի տղայ են ապրում, նրանք
մի թ'գաւորի լայեաղ հարսն ունին. ինձ զօշուն տու',
գնամ քե' հ'մա բերեմ:

Էս պառաւը հետը վեր ա ունում էնդար զօշուն,
որ մէրին 'ին գնացել, մէրին կըզօրանէր, որ ծովի վը-
րէն 'ին գնացել, ծովը կըց'մաքէր: Ախչիկը թուրը վե'-
կալած ընդնում ա զօշունի մէջն ու մի ս'հաթումը
չիմնու գլուխն էլ տալի, մ'նին սաղ թողնում, որ գնայ
խաբարը տանի թ'գաւորին: Թ'գաւորն ուզենալիս ա
ըլում պառաւի գլուխը տա', պառաւն ասում ա. էրկու
էն դադար զօշուն տու', գնամ, հ'մի բերեմ:

Թ'գաւորն էրկու էն զ'գար զօշուն ա տալիս պ'ռա-
ւին, որ գնայ էն ախչկանը բերէ: Ախչիկը թուրը վե'-
կալած ընդնում ա զօշունի մէջը, չիմնու գլուխն էլ
տալիս ա. մնին սաղ թողնում ա, որ գնայ թ'գաւորին
խաբարը տանի: Թ'գաւորը կանչում ա էս պ'ռաւին իր
կուշտը, որ գլուխը տայ, թէ զուր տեղը նրա զօշունը
փչացրել ա: Պառաւն ասում ա. «թ'գաւորն ապրած
կենայ, դու էն տղին կանչէ քու կուշտն ու նրան ասա,
որ գնայ օխտը սարի քմակիցը Ղըռխանասին¹⁾ բերէ:
թէ որ կարենայ ոչ բերե', գլուխը տալ տու' ու կըն-
դանը քե', վե' կալ:

Թ'գաւորը կանչում ա էս թօռչու տղին, ասում,
որ գնայ օխտը սարի քմակիցը Ղըռխանասին բերէ, թէ
որ կարենայ ոչ, գլուխը տայ: Թ'գաւորիցը իրեք օր
մհուլ²⁾ ա ուզում թօռչու տղէն: Թ'գաւորը նրան իրեք

¹⁾ Քառասոնամայը (Հիու անունն է):

²⁾ Ժամանակամիջոց:

օր մհուլ ա տալիս: Թօռչու տղէն գլուխս ա տալիս
թ'գաւորին ու թուշ³⁾ գալիս տուն:

'Իկունը տղէն տուն ա գալիս ունքերը կիտած,
լացակնքած նստում կրակի զրադին: Կնիկը հարցնում
ա—բնչ ասաւ թ'գաւորը. ընչի ես ունքերդ կիտել:

—Ո՞նց չի կիտեմ ունքերս, էն որ թ'գաւորն իր
զօշունով կարում չի բերե', ինձ ասել ա, որ բերեմ իր
հ'մա: Պէտք ա գնամ օխտը սարի քմակիցը բերեմ Ղըռ-
խանասին, թէ չէ թ'գաւորը գլուխս տալ պ'տի:

—Եդ գարդակ բանի հ'մա էլ ընչի ես դարդ ա-
նում. ասում ա կնիկը: Գնա թ'գաւորիցը օխտը բեռը
բամբակ ուզէ, օխտը բեռը քացախ ու արի:

Թօռչու տղէն նի ա հասնում թ'գաւորի կուշտը,
վեր ունում օխտը բեռը բամբակն ու օխտը բեռը քա-
ցախն ու դալիս տուն:

Կնիկն ասում ա.—օխտն օր ճամփայ կերթաս. ա-
մէն օր մի սար անց կըկենաս. վրաօխտը սարի դօշին
կըտենուս մի աղբիր. աղբիրի ակը օխտը բեռը բ'մբա-
կովը կըկապես. աղբիրի ջուրը դու՛ս կոծես, օխտը բե-
ռը քացախը կոծես մէջը. Ղըռխանասին գըգալ, կըխմէ,
կըհարբի, վրէն կընսակիս, կըքշես, կերթաս թ'գաւորի
տունն ու իրան կըտաս:

Թօռչու տղէն օր էս լսում ա, ունքերը նոր բաց-
վում են. շատ ուրիշանում ա. գնում ա թ'գաւորի ա-
մարաթը, օխտը բեռը բամբակ ու օխտը բեռը քացախ
ուզում, ճամփայ ընդնում: Օրը մի սար անցկենալով,
գնում հասնում ա վրաօխտը սարին. գդնում ա աղբիրը,
հ'մա օր Ղըռխանասու ոտնատեղերը տե՛նում ա, վա-

³⁾ Ուղղակի, ուղեղ:

խիցը սիրտը փողիցն ընգնում այ Ոնց որ կնիկն ասել էր. օխտը բեռը բ'մբակով կալնում ա աղբը ակը. ջուրը դու'ս ածում. ք'ցախով լցնում աղբիրն ու ինքը հեռու տապ անում: Շատ ա կենում, թէ քիչ, մ'նել տե՛նում ա 'րեաց Արքխանասու գլուխը: Դեռ մի օրավար հեռու ոտնաձենը լսում ա: Զին որ խրինջում ա, սար ու ձոր 'ըստում են. . . Թօռչու տղէն վախվախելով ծառերի ճղների միջիցը մտիկ ա անում, որ ձիու պնչածակերիցը դու'ս եկող կրակը աչքին ա ընգնում, ուռի պէս դողում ա ու լիզուն փոլր գձում: Զին գալիս ա վրա ընգնում աղբըն ու խմում: Քանի խմում ա, ծ'րաւում ա, քանի խմում ա, ծ'րաւում ա. հէջէլը խմում ա, որ աղբըն էլ ք'ցախի կաթիլ չի մնում:

Զին դնթոնում ա¹⁰⁾ ու մնում տեղնուտեղը կանգնած: Թօռչու տղէն դու'ս ա գալի մէրուցն ու նստում Արքխանասու վրայ, ճամփայ ընգնում գ'պա թ'գաւորի ամարաթնին: Օխտն օրէն ճամփէն նա մի օրումն ա կտրում ու Արքխանասին տալի թ'գաւորին:

Թ'գաւորը տե՛նում ա, որ խաբնով բան չի գու'ս գալիս. թօռչու տղին կանչում ա ու ասում. «Եա ինձ հ'մա մի սիրուն ախչիկ պտիս ճարել, եա թէ չէ քու կնդանը պտիս բերել: Թէ չէ ու, գլուխդ տալ կըտամ»: Թօռչու տղէն 'րիդունը տուն ա գալիս ու ունքերը կիտած, սևսրտած կրակի զրազին նստում: Կնիկը հարցնում ա. թ'գաւորն ինչ ասաւ, ընչեմ ես ունքերդ կիտել:

— Ո՞նց չի ունքերս կիտեմ. — ասում ա թօռչու

տղէն. թ'գաւորն ասել ա, որ եա իր հ'մա իրա լայեաղ ախչիկ ճարեմ, եա իմ կնդանս իրան տամ:

— Եղ գաւրդակ բանի հ'մա էլ ընչեմ ես դարդ անում. — ասում ա կնիկը, — գնա թ'գաւորիցը իր մատնուքն էլ ուզէ, մի լաւ շուն էլ, մի փահէվան էլ, օխտը հատ էլ իմ ասած քօք¹¹⁾ որձեր ու արի, ես քէ կոսեմ, թէ ոնց պտիս ախչիկ ճարել:

Թօռչու տղէն գնում ա թ'գաւորիցը նրա մատնուքն էլ ա ուզում, մի շուն էլ, մի փահէվան էլ, օխտը քօք որձ էլ ու տուն գալիս: Կնիկը նրան ս'վորցնում ա, թէ որդի պտի գնալ, ինչ պտի անել, որ ախչիկը բերէ: ու ճամփու ա դնում:

Օխտը որձերիցը մինը մորթում ա ինքն ուտում ու գմակը տալի շանը:

Մին էլ մորթում ա փահէվանի հ'մա: Փահէվանը միսն ուտում ա, գմակը տալի շանը: Գնում են, վանը միսն ուտում ա, գմակը տալի շանը: Գնում են, գնում. շատն ու քիչը Աստոծ գիրէ, ճամփին տե՛նում են մի մարդ մի վենձ ջրի վրա ընդած խմում ա ու կանչում. «Վայ ջուր, վայ ջուր, որ խմեմ, ծարաւս հովանայ»: Թօռչու տղէն ու փահէվանը գովում են նրա իգիթութինը, որ սաղ չուրը¹²⁾ ց'մաքացնում ա ու գեռ վայ ջուր կանչում:

— Ես իգիթութին ա, ասում ա, իգիթը թօռչու տղէն ա, որ ասում են օխտը սարի քմակիցը Արքխանասին բերել ա: Եղ գնում. ինձ հետներուդ չէք տանիլ:

— Երկու չի ըլինք, թող իրեք ըլինք. ընչեմ չենք

¹⁰⁾ Գէր:

¹¹⁾ Այստեղ չուր—գետ է նշանակում:

տանիլ: Թօռչու տղէն մի որձ էլ ջուր ծծող իգիթի
հմա՝ ա մորթում: Նա միսն ուտում ա, դմակը շանը
տալիս: Ծամփայ են ընդնում գնում:

Գնում են գնում, շատն ու քիչն Աստո՞ծ գիդէ,
տե՛նում են մի ջաղաց օխտն աչքանի. տուն են մտնում,
տե՛նում, որ մի մարդ վէր եկող ալիբն ուտում ա ու
միալար կանչում. «Վայ հայ, վայ հաց. ուտեմ փորս
դինջանալ»:

Թօռչու տղէն գովում ա նրա իգիթութինը:

— Ես ինչ իգիթութին ա,—ասում ա ալիր ուտո-
պ, — իգիթութինն էն ա, որ ասում են թօռչու տղէն
օխտը սարի ք'մակիցը Ղըռխանասին բերել ա: Բա դուք
էդ ուր էք գնում. ինձ հետներուդ տանիլ չեք:

Ընչի չենք տանիլ—ասում ա թօռչու տղէն—իրեք
չի ըլինք, թող չորս ըլինք: Մի որձ էլ նրա հմա ա
մորթում: Միսն ուտում են, դմակը շանը տալիս ու
ճամփայ ընդնում:

Գնում են գնում, շատն ու քիչն Աստո՞ծ գիդէ,
տե՛նում են երկու սար իրեք օրավար մին մնուց հե-
ռու: Սարերի զլիին կապած ա մի ճոպան, մէջը մի
վենձ ջղացաքար անցկացրած: Մի սարի զլիին մի մարդ
ա կանգնած, մէկելի զլիին մինը: Սա մի ճկթով ջղա-
քարին տալիս ա, գնում ա նրա կուշտը, նա ճկթով
ջղաքարին տալիս ա, գալիս ա սրա կուշտը:

Թօռչու տղէն գովում ա սրանց իգիթութինը:

— Ես ինչ իգիթութին ա,—ասում են նրանք—ի-
գիթութինն էն ա, որ ասում են թօռչու տղէն օխտը
սարի ք'մակիցը Ղըռխանասին բերել ա: Բա դուք էդ
որդի էք գնում, մեզ հետներուդ վեր չեք ունիլ:

Ընչի չենք վեր ունիլ—ասում ա թօռչու տղէն—

չորս չի ըլինք, թող վեց ըլինք: Նա երկու որձ ար
մորթում, միսն ուտում են, դմակը տալիս շանն ու
ճամփայ ընդնում:

Գնում են գնում, շատն ու քիչն Աստոծ գիդէ,
տե՛նում են մի ճամփու կշտի մի մարդ գլխի վրայ ցից
ելած: Հարցնում են, թէ նա ինչ փէշակ ունի: Ասում ա
որ ինչոր մարդիկ ըշխար՝ ումը խօսում են, նա գիդէ,
թէ ինչ են ասում, ում մասին են խօսում:

Թօռչու տղէն գովում ա նրա իգիթութինը:

— Ես ինչ իգիթութին ա,—ասում ա իմաստունը,
— իգիթութինն էն ա, որ ասում են թօռչու տղէն
օխտը սարի քմակիցը Ղըռխանասին բերել ա: Բա դուք
էդ որդի էք գնում. ինձ հետներուդ տանիլ չեք:

Ընչի չենք տանիլ,—ասում ա թօռչու տղէն,—
վեց չի ըլինք, թող օխտն ըլինք: Մի որձ էլ էստի ա
մորթում թօռչու տղէն. միսն ուտում են, դմակը շանը
տալիս ու ճամփայ ընդնում:

Գնում են գնում, շատն ու քիչն Աստո՞ծ գիդէ,
հասնում են թ՛գաւորի ամարաթնուն: Գնում են նրս-
տում հրսնախօսի քարի վրէն: Նազիր վեզիրնին գալիս
են հարցնում, թէ ինչ մարդիկ են: Թօռչու տղէն ա-
սում ա, որ էն վլան վլան թ՛գաւորի մարդիկն են,
եկել են ախչիկ ուզող: Թ՛գաւորը հարցնում ա, թէ
ինչ դար ոսկի են բերել հետներուն: Ե՛թ իմանում ա,
որ մի հատ էլա ոսկի չունին, ասում ա թ՛գաւորը.
«Հաց տուէք ուտեն, գնան, դրանք իմ լալեալ մար-
դիկ չեն, թէ առանց ոսկու են եկել. դրանք կարալ
չեն իմ ախչկանը պ'հել»:

Նրանց հմա՝ մի ընդնանի¹³⁾ խօրակ են եփում

¹³⁾ ՄԵծ Կաթոսյ է:

ու դնում առաջներուն։ Ալիք ուտողն ասում ա. «հեշվէլը ես համը տե՛նում ոչ, իմ աղէն կարալ չի ուտել»։ Ես ասում ա ու ընգնանին աղաքը քաշում, մի շնչումը լաւ լպգտորում, կլեկում ու դնում դրաղը։ «Դէ գնացէք մէկէլ ընգնանիքը բերէք. էս մի պ'տառովը ես ո՞նց համը տե՛նում»։ Գնում են ամէն մնի հ'մա՛ օխտը ընգնանի խօրակ եփում ու բերում։

Էգսի օրը թ'գաւորն ե՛ք լսում ա էդ, շատ վախում ա. էն դայդի դժ'ար բաներ ա ուզում նրանց աղաքը դնել, որ կարենան ոչ դլուխ բերել ու նրանցից եախա թափէ։ Նա ասում ա, որ մի շուն բերեն իր շան հետ կոռւելու։ Թ'օռչու տղէն դու՛ս ա կանչում իր շանը։ Որ վրա ա գալիս թ'գաւորի շան վրայ, բգիցը բռնելն ու խեղդելը մին ա անում։ Թ'գաւորը մի փահլէվան ա ուզում, որ իր փահլէվանի հետ կոխ բռնէ։ Թօռչու տղի փահլէվանը թ'գաւորի փահլէվանի ձեռը բռնում ա, որ հուպ ա տալիս, ձեռը ճռճռում փշըրգում ա։ Թ'գաւորը ե՛ք տե՛նում ա, որ զոռով կարում չի նրանց հախիցը գալ, ուզում ա նրանց սատանութենով ջնջել։ Հրաման ա տալիս, որ ջուրը կտրեն դ'պա նրանց օլթախը, որ նրանք միջին խեղդուին։ Ջուր ծծողը դունչը դնում ա դռանն ու մի դօնում հուռանում, սաղ ջուրը ց'մաքում ա։ Թ'գաւորի իլլաջը որ կտրում ա, նրանց խօրակը դեղում ա, որ նրանց տայ կտորէ։ Թօռչու տղէն մատնուքը դնում ա խօրակի մէջը, տե՛նում ա, որ դեղը ջ'գուեց։ Խօրակը զբաղ են դնում։ Թ'գաւորն ասում ա. — լաւ դուք լայեալ էք ախչանս տանելու, հ'մա պէտք ա իմ ախչայ ամարաթը վեր ունիք, ուսներուդ տանիք։

Էդ վախտը թօռչու տղէն հարցնում ա իմաստունին, թէ թ'գաւորն էլ բան ունի ասելու, թէ չէ։ Դմանտունն ասում ա, որ թ'գաւորի մէլը կտրած ա. Էս գշեր խօսում են, որ վաղը էն կուռը ծէգի թէ չէ ախչանը մեզ տան։ Էգսի օրը ջ'ցաքարեր ժաժ տուող իգիթնին ուսներուն տակն են տալիս, որ ախչայ ամարաթը վեր ունին, տանին, թ'գաւորը թողնում չի։ Ասում ա, ես դաբուլ եմ, վե՛ կալէք, տարէք ախչանս, ո՞նց որ գուք ուզէք։ Սրանք վեր են կալնում թ'գաւորի ախչանն ու էլ եդ ճամփայ ընգնում։

Իմաստունն իր տեղն ա մնում, ջուր-ծծողն իր տեղը, ալիր-ուտողը իրանը, ջ'ցաքար-ժաժտուողնին իրանց տեղը։ Թօռչու տղէն թ'գաւորի փահլէվանի ու շան հետ առնում ա թ'գաւորի հ'րսնացուն ու գալի թ'գաւորի կուշտը։

Թ'գաւորը էնէնց գիղենալիս ա ըլում, թէ թօռչու տղէն էլ եդ գալու չէ, զօրով նրա կնգանը տարած ա ըլում իր ամարաթը։ Ե՛ք լսում ա, թէ նա գալիս ա, հրաման ա տալիս, որ բաղնսի ջուրը գեղեն ու նրան բաղնիսը տանին, ճամփու կեղտը լուանալու։ Թօռչու տղէն բանը գլխի ա ըլում, ասում ա, որ թ'գաւորը իր հետ բաղնիս գայ. մէնակ վախում ա, ոչովի էլ մաւաչի գնում, որ հետը բաղնիս տանի։

Թ'գաւորն ու թօռչու տղէն բաղնիս են մտնում, թէ չէ, թօռչու տղէն մատիցը հանում ա թ'գաւորական մատնուքն ու ջուրը գձում։ Էն սհաթին դեղը կան մատնուքն ա անում։ Թօռչու տղէն թ'գաւորին բօջի երէսն ա անում։ Թօռչու տղէն թ'գաւորին բօջում ա¹⁴⁾, ջուրը գձում. տե՛նում ա, որ նա ուռաւ ու տրաքուեց։

Ինքը հագնում ա թ' գաւորի շորերն ու նստում
նրա թախտին. ինքը թ' գաւոր դառնում, իր կնիկը
թ' գաւորակին. հետի ախչկանը տալիս ա իր փահլէ-
վանին, մօրն էլ կանչում իր կուշտը. օխտն օր ու
օխտը գ' շեր հ' ըսանիք անում, ուրախանում. . .

Ասծանէ իրեք խնձոր կաթի.

Մին ասողին, մինը լսողին,

Մին ալամ աշխար'ին.

ԸՆԱՌԻ ԴՕՎԼԱԹԸ

ԸՆԱՌՈՒԽՄԸ ԿԸ ՄՆԱՅ

ԸՆԱՌՈՒԽՄԸ ՀԻ ԸԼՊՈՒՄ ՄԻ ՀԱՐՈՒՍԱ Թ' ԳԱՎՈՐԻ: Էն զար-
գի հարուսա ա ըլպում, որ ոսկին ու էրծաթը ջո-
րէնով ու ուղտերով ա կրելիս, տուն ածելիս ըլպում:
ԷՆ Թ' ԳԱՎՈՐԸ ԻՆՏ ՊՊԱՐ ՈՍԿԻ, ԷՐԾԱԹ, ՄԱՐՄԱՐ Ու
անգին քար ա ունենում, չիմ հ' ւաքում ա, մի ամարաթ
կանգնացնում, ոնչ տեհնուած, ոնչ լսուած:

**ՊԱՏԵՐՆ ԷՐԾԱԹ Ա ՉԻՆՈՒՄ, ՏԱԿԸ ՄԱՐՄԱՐ ՔԱ-
ՐԻԾ, ԿՊՈՒՐԸ ՍՍԿՈՎԸ:** Ե' բոր շինել ա տալիս, պրծնում,
քաղ' քի միջին ինչոր վենձամարդ կայ, չիմնուն էլ
կանչում ա ու մի լաւ հ' ըսանիք սարքում: Ե' բոր քէփ-
ներու չաղ վախտն ա ըլպում, մին մին հարցնում ա
մէծրած մարդկերանցը, թէ էն թահրի տուն որդի են
տեհել. ով ունի նրա ամարաթի պէս ամարաթ:

ՉԻՄ ԷԼ ԱՍՈՒՄ ԵՆ.—Թ' ԳԱՎՈՐՆ ԱՊՐԱԾ ԿԵՆԱՅ. ՔՈՒ
ամարաթնու նմանը ոնչ տեհած ենք, ոնչ լսած. ամէն
մարդի հունար չի ոսկուց ու էրծաթից, անգին քարից
քօշկ ու սարահի շինել:

Ե՞րոր չիմ էլ թ' գաւորին գովում են, պրծնում,
Էնդէն մի հ' լեռը ա վե՛ կենում ու ասում. «թ' գաւորն
ապրած կենայ. քու ամարաթն անման ա, հ' մա ինչ
ասեմ, որ մի պ' կասութին ունի, որ ոչով բրառը չի
արաւ:

— Ո. սա, տե՛նում, բ' նչ պ' կասութին ունի. — ասում
ա թ' գաւորը հմբարտ հմբարտ:

Հ' լեռըն ասում ա. «թ' գաւորն ապրած կենայ:
ամէն բանը լաւ ա, հ' մա զուր տեղն ես դուռը շինել
տուել:

Ե՞րոր լոռում են հ' լեռի խօսքերը, փորխոցն¹⁾ ընդ-
նում ա նրանց մէջը:

— Դեռ լաւ լսեցէք, եղնա վրէս ծիծաղեցէք,—
ասում ա հ' լեռը,—որ ամարաթը դուռը չէր ունեցել,
թ' գաւորը հաւիդենս հաւիդենից միջին կըմնէր, հ' մա
հ' մի կըմեռնի, էս ոսկին ու էրծաթը էսաի կըթողնու,
իրեք գաղ պատանը կառնու ու էս դանովը դու՛ս կեր-
թայ. . . .», էս որ լսում ա թ' գաւորը, մատը կծում ա,
շատ տիրում:

Մ Ո Զ Ի Ն

Ը լում են, չեն ըլում մի մարդ մի կնիկ: Սրանք
մի ՚րեխայ էլա ունենում չեն: Շատ ու շատ ուշ-
մով են ըլում: Ով թասով ա տալիս ըլում, սրանք
խանով են տալիս, ով խանով ա ըլում տալիս, սրանք
ջոււալով են տալիս: Նրանք շատ հարուստ են ըլում:
հ' մա մինն էլ ա նրանց աչքումը գալիս¹⁾ չի ըլում:
Նրանք հէնց միալար ասելիս են ըլում. «Էհ, ընչնե-
րուս ա պէտքն էս զագար գօվլաթը, էս անքուն ցեցը,
ե՛ք մենք մի ՚րեխայ չունինք, որ նրանով ինդանք,
ուր խանանք: Էրնէկ Աստոծ սրա կէսը, կիսի կէսն էր
մեզ տուել ու մի սիրուն տղայ. . . .»

Ե՞րոր նրանք ջելիզ²⁾ պ' ռաւած են ըլում, մէլներուն
կտրած, որ ՚րեխայ ունենան, մի դօնում զբանց տուն
ա գալիս մի դարվիշ: Կնիկը որ լիուբուռը՝ զքատափալ
ա տալիս, դարվիշը հարցնում ա. «ալ քի՞րա, ընչի
ուր շնին ըռնով ու թասով են փայ տալիս, դու կօդով:

— է՛հ, բ' նչ անեմ, ալ իմ աղբէր,— ասում ա պա-
ռաւը. — Լնլընդան օջախ ենք, անքուն ցեցի տէր, տուն
ու դուռը լիքը, ուտող չունինք. Էտէնց լիուբուռը
տալիս ենք, եա փոգու կըլի, եա արևի:

1) Հաւանիլ:

2) Բոլորովին:

Դարվիշը ջերիցը հանում ա իրեք խնձոր ու պ' ռաւին տալիս. «Ես խնձորնին վե՛ կալ. վրաիրեք օրը մին մին կե՞³⁾», դեռ տարին չ'անցկացած տղայ կ'ունենաս»։

Պառաւը խնձորնին վեր ա ունում ու տանում թ'րէքին շարոտում: ՚Իգունը ժամն ա գնում ու տուն գալիս. մտիկ անում խնձորնուն. Էն զալդի շափաղին են տալիս ըլում, որ սիրտը թրթուում ա, էլ կարում չի համբերել. վեր ա կալնում ու մի խնձորի թշիցը մի ըւ կծում: Էն զալդի անոշ ա ըլում խնձորը, որ բերնի ջուրը ըղու ա ըլում: Պառաւը վեր ա ունում, իրեք խնձորն էլ ուտում: Անցակենում քիչ վախտ, էս պառաւը երկուֆոգիսանում ա: Անցակենում իննը ամիս, իննը օր, իննը սհամթ, պառաւը բերում ա մի ֆորթ: Խեղճ պառաւն ուրիշանալու տեղ սև օր սուգ ա նըստում: Ո՞վ լաց կըլի քու պառաւը, ով չի լաց ըլիւ, քու պառաւը: Գ'շեր ցերեկ աղի էրտասունք ա վէր ածում, ու դարվշին անըծքաչոր անում:

Վրայ մի ատրին մարդը մեռնում ա: Ցորիթն էլ մողի դառած ա ըլում. ՚ռաւոտները գնում ա հանդը՝ րածելու, ՚ըիգները տուն ա գալիս, մօրը բարի ՚ըիգուն ասում ու կրակի զրադին խտոր ընդնում⁴⁾ քնում:

Էսէնց անց ա կենում իրեք տարի: Մի ՚րիգու մողին վեր ա կալնում ու մօրն ասում. «այ մէրա, ես էսա հասակս առել եմ, պէտք ա կնիկ ուզեմ. ՚ռաւոտահանայ վազը վե՛ կըկենաս կերթաս թ'գաւորի կուշտը, կոսես «իմ մողին քու ախչկանն ուզում ա. . .»: Պառաւը մնում ա վերքաշուած. դեռ հլա

սիրտ անելիս չի ըլում, վերջն ասում ա, հալբաթ էստի մի բան կայ, թէ չէ նա ո՞նց զուռիաթ կոնէր, թ'գաւորի ախչկանն ուզելու: Պառաւը ճամփայ ա ընդնում գնում թ'գաւորի կուշտը:

Պառաւը թուշ գնում ա, նստում թ'գաւորի խնամ-խօսի քարի վրէն: Թ'գաւորի նազիր վէզիրնին գալիս են, ուզում են վե՛ կացնեն. նա վեր չի կենում: Ասում ա, որ գնան թ'գաւորին իմաց տան, թէ մի պառաւ ա եկել, ուզում ա թ'գաւորի ախչկանն իր մոզու հմար ուզէ: Թ'գաւորը հրաման ա տալի, որ պ'ռաւին իր կուշտը կանչեն: Պառաւին կանչում են թ'գաւորի ամարաթնին:

— Ի՞նչ խօսք ունիս, այ մէրա, հարցնում ա թը-գաւորը քաղցրութենով:

— Թ'գաւորն ապրած կենայ, — ասում ա պառաւը, իմ մողին ախչկանդ ուզում ա:

— Շատ լաւ. թող ուզէ, ասում ա թ'գաւորը. հմակը բան ունիմ նրանից ուզելու. թէ որ կատարեց, խիստ լաւ. թէ չէ ու նրա գլուխը տալ կըտամ: Գնաքու մոզուն ասա, որ ինձ մի սուկէ սինի⁵⁾, զրգէ, սուկով լիքը, սուկէ սինով ծածկած: Պառաւը վեր ա կենում ու փոխփոշիման տուն գալիս:

՚Իգունը մողին հանդիցը տուն ա գալիս տե՛նում, որ մէրն ունքերը կիտած, տխուր ու տրտում նստած ա օջախի զրադին:

— Բարի ՚ըիգու, այ մէրա, ընչե՛ ես էտէնց ունքերդ կիտել. ի՞նչ ասաւ թ'գաւորը:

³⁾ Կե՛ք:

⁴⁾ Պառակիւ մեկնուիլ:

⁵⁾ Պղնձէ մեծ աման է շըջանակաձեւ:

— Անց չի ունքերս կիտեմ, այ որդի, ախըր մեր բնէ բանն ա թ' գաւորի ախչիկ ուզել. էն զայդի բաների ա տեղակ տալի, որ մեր տուն ու տեղը ծախենք, էլ չենք կարալ նրա ուզածը տալ:

— Ելլըհէ, այ մէրա, ինչ ասաւ:

— Թ' գաւորն ուզում ա մի ոսկէ սինի, ոսկով լիքը ոսկէ սինով ծածկած:

— Հենց դրա հմար ես դարդ անում. դրա բանը հեշտ ա, ասում ա մոզին. 'րիգունը քնելիս վե՛ կալ մի պղնձէ սինի, մի սե փող դի մէջը, մի պղնձէ սինով ծածկէ, դի ծալքի վրէն. 'ռաւոտը հէշվէլ իմ վե՛ կենալը ոնչ ծալքին մօգենաս, ոնչ սինին ժաժ տաս:

Ոնց որ ասել էր մոզին, ողառաւը կատարում ա: Մթնում ա, քնում են:

Էզոսի 'ռաւոտը վեր են կենում, տե՛նում, որ պղնձէ սինէնին ոսկի են դառել. միջի փողն ել սոկէ փողեր, սինին լցուել, դրադներիցը վեր ա թափվում:

Պառաւը վեր ա կալնում, տանում թ' գաւորին տալիս: Թ' գաւորն տառւմ ա.—գնա՞ քու մօզուն ասա, որ իմ ախչկալ հմար մի ձեռք շոր դրգէ, որ ոնչ ձեռք դրի դիբած, ոնչ ասեղ ժաժ եկած: Պառաւը վեր ա կենում ու փոխփոշիման տուն գալիս:

'րիգունը մոզին հանդիցը տուն ա գալիս, տե՛նույ որ մէրը ունքերը կիտած, տիսուր ու տրտում օջախի կշտին նստած ա:

— Բարի 'րիգու, այ մէրա, ընչե՛ ես էտենց ունքերդ կիտեմ, ինչ ասաւ թ' գաւորը:

— Ո՞նց չի ունքերս կիտեմ, այ որդի, ախըր մեր ինչ բանն ա թ' գաւորի ախչիկ ուզել. էն զայդի բա-

ների ա տեղակ տալի, որ տուն ու տեղ ծախենք, էլ չենք կարալ նրա ուզածը տալ:

— Ելլըհէ, ինչ ասաւ:

— Թ' գաւորն ուզում ա իր ախչկալ հմար մի ձեռք շոր, որ ոնչ մարդու ձեռք դիբած լլի, ոնչ վրէն ասեղ ժաժ եկած:

Հենց դրա հմար ես դարդ անում. դրա բանը հեշտ ա.—ասում ա մոզին — 'րիգունը քնելիս վե՛ կալ մի սինի, միջին մի թզնքու տերեւ ու մի սինի էլ վրէն ծածկէ, դի ծալքի վրէն, 'ռաւոտը հէշվէլ իմ վեր կենալը ոնչ ծալքին մօգենաս, ոնչ սինին ժաժ տաս: Ոնց որ մոզին ասել էր, կատարում ա: Մթնում ա, քնում են:

Էզոսի 'ռաւոտը վեր են կենում, տե՛նում որ պղնձէ սինէնին ոսկի են դառել. թզնքու տերեւ դառել ա մի ձեռք շոր, որ ոնչ վրէն ասեղ ա ժաժ եկած, ոնչ մարդու ձեռք դիբած: Պառաւը վեր ա կալնում, տանում թ' գաւորին տալիս:

Վրաիրեք գոնումն ասում ա թ' գաւորը. «Գնա՞ քու մօզուն ասա, որ իմ ախչկանը հենց պէտք ա տուն տանիս, որ ոնչ գլուխն արև տե՛նու, ոնչ ոտը գեղին: Պառաւը վեր ա կենում ու փոխփոշիման տուն գալիս:

«Ի գունը մոզին հանդիցը տուն ա գալիս, տե՛նում, որ մէրը ունքերը կիտած, տիսուր տրտում օջախի կըշտին նստած ա:

— Բարի 'րիգու, այ մէրա, ընչե՛ ես էտենց ունքերդ կիտեմ, թ' գաւորն ինչ ասաւ:

— Ո՞նց չի ունքերս կիտեմ, այ որդի, ախըր մեր ինչ բանն ա թ' գաւորի ախչիկ ուզել. էն զայդի բա-

ների ա տեղակ տալիս, որ տուն ու տեղ ծախենք, էլ չենք կարալ նրա ուզածը տալ:

—Ելլըհէ, ինչ ասաւ:

—Թ' գաւորն ուզում ա, որ իր ախչկանը էն դալդի տուն տանիս, որ մնչ գլուխն արև տե՛նու, ո՞նչ ոտը գեղին:

—Հենց դրա հմար ես դարդ անում. դրա բանը հեշտ ա. ասում ա մոզին. —'րիգունը քնելիս մի ջուալ լցրու փալաս-փուլուսով ու տաշեղնով ու դի՛ ծալքի գրէն. հէչվէլ իմ վերկենալը ո՞նչ ծալքին մօտենաս, ո՞նչ ջուալը ժաժ տաս:

Ո՞նց որ մոզին ասել էր, կատարում ա: Մթնում ա, քնում են:

Գ'շերուայ մի վախտը մոզին վեր ա կենում ու վերունում ջուալը, ճամփայ ընգնում դպա թ' գաւորի ամարաթնին:

Գնում ա որ հասնում նրա օթախնուն. մին տաշեղ ա գնում, մին փալաս, մին տաշեղ, մին փալաս. . . հէչվէլ իրանց տունն. ու գալիս ա կրակի դրաղին խտոր ընգնում, քնում:

Էգսի՝ ուաւոտը վեր են կենում տե՛նում, որ տաշեղիսուշուրնին դառել են ուռի ծառեր, փալաս-փուլուսնին դառել են խալիչէք:

Մոզին վեր ա կալնում զուռնայ, դհօլ ու ճամփալ ընգնում դ' պա թ' գաւորի ամարաթնին: Թ' գաւորն օխտը գ' շեր հ' ըսանիք ա անում ու ճամփու դնում իր ախչկանը մոզու հետ:

Գ'շերը, ե՛ք վէսէն հարսի կուշտը պտի գնալ, մին էլ տենում ա հարսը, որ մոզին կաշին հանեց ու դրեց զրաղը: Կաշուի միջից մի տղայ ա դու՛ս գալիս, որ

ըեգնակի նման մարդի աչք ա ծակոտելիս ըլում: Ախչկը շատ ուրիշանում ա: Քնում են, էգսի՝ ուաւոտը տղէն վեր ա կենում, էլ եդ հագնում իր կաշին, դառնում մոզի ու գնում հանդն թածելու:

Էսէնց անց ա կենում մի օր, երկու օր, իրեք օր. ախչեկը շատ՝ զայտում, պ'զատում ա իր մարդին, որ էլ կաշին հագնու ոչ. հմա մարդը անում չի: Ախչեկը նրա ջրու մի գ'շեր վեր ա կենում ու մարդուց թագուն նրա կաշին թորնի մէջը գձում, էրում:

Էգսի՝ ուաւոտը մարդը վեր ա կենում, ման գալիս, կաշին գգնում չի: Հայ էս պուճախ կաշի, հայ էն պուճախ կաշի. չէ, կայ ոչ ու կայ ոչ: Մարդը դառնում ա աղունիկ ու դու՛ս թուչում:

Կնիկը վեր ա կալնում իրեք խնձոր ու նրա եղնէն ճամփալ ընգնում: Նատ ա գնում, թէ քիչ, տենում ա ճամփին մի թեխայ. «այ ախպէր, մարդ չես տեհել դէսը գնալիս»:

—Չէ, այ քիրա, ասում ա էն տղէն, — հմա ուաւոտահան դէսը մի աղունիկ թուած գնէր»: Կնիկը խընձորնուցը մինը տալիս ա էդ տղին, ինքը գնում:

Նատ ա գնում, թէ քիչ, տե՛նում ա մի մէջ-մարդ ճամփէննի գալիս, «այ ախպէր, դէսը մարդ չես տեհել գնալիս»:

—Չէ, այ քիրա, ասում ա էն մարդը. — հմա ճաշին դէսը մի աղունիկ գնէր թուած»: Կնիկը տալիս ա խնձորնուցը մինն էդ տղամարդին, ինքը գնում:

Նատ ա գնում, թէ քիչ, ոաստ ա գալիս նրան մի հլւոր ճամփէննի գնալիս. «ապէր, դէսը մարդ չես տեհել գնալիս»:

— ԶԵ, ախչիկս, ասում ա հ'լեռը, հմա նոր մի
աղունիկ գնէր թռած, որ մի քիչ եզին գնաս, եզնէն
կհասնուս»։ Կնիկը վերջի խնձորն էլ նրան ա տալիս
ու գնում։

Նատ ա գնում, թէ քիչ, տե՛նում հրէս իրան
մարդուն թռած գնալիս։ Նրան տե՛նուլն ու աղունիկ
դառնալը մին ա ըլում։ Մարդի եղնէն որ հասնում ա,
մարդը մի անտակ ծովի մէջն ա ընդնում։ Կնիկն էլ
նրա եղնէն ընդնում ա ծովի մէջը։ Երկուսն էլ իրար
գդնում են ու ծովի տակին ապրում, որ մարդիկ նը-
րանց տե՛նուն ոչ։

Խէրն ու բարաքեաթն էստի, շառն ու շուռը լէգ-
զու գլխին։

ԱՅՏԹԱԿ ԳԵՐԳԻՏ ԳՆԱՅԱՂ

Մ Ս. Շ Դ Ը

Էլում ա չի ըլում մի մարդ։ Նա ոնչ կնիկ առու-
սենում, ոնչ ըրէխալ, մէնակ իր գլուխն ա ըլում։
Հմա էն զայդի ըլարկոտ ա ըլում, որ պէծն աչքին
դնէիր, տեղիցը ժաժէկր գալ։ Որ տե՛նում ա սովիցը
մեռնում ա, մահը բգին չոքել ա, միտք ա անում,
որ գնայ Աստծուն գանգատ, որ նա իրան անբախտ ա
ստեղծել, հմի իրան ռազի անէ։

Ճամփէննի գնալիս նրան մի գէլ ա ռաստ գալիս։
Բար՝ աշողում, այ ճամփորդ աղբէր, — ասում
ա գէլն էս մարդուն, — խէր ըլի, որդի ես գնում։
Բարու տէր ըլիս, գէլ աղբէր, — ասում ա ճամ-
փորդը. — գնում եմ Աստծու կուշտը գանգատ, որ ինձ
անբախտ ա ստեղծել։

Թէ քու Աստծը կըսիրես, ե՛թ Աստծու կուշտը
հասնուս, Աստծ մուրազդ տայ, ինձ էլ միտդ բի.
ասա, որ ճամփին մի խեղճ գէլ ես տեհել, գլխացաւիցը
գիդէ ոչ, թէ ինչ անէ. տես սրան ինչ ճար կալ։
Աչքիս վրայ, գէլ աղբէր, — ասում ա մարդն ու
իր ճամփէն գնում։

Նատ ա գնում, թէ քիչ նրան մի բ' զմանչի առաստ գալի:

— Բար' աջողում, այ ճամբորդ աղբէր,—ասում աբ' զմանչին, խէր ըլի, էդ որդի ես գնում:

— Բարու տէր ըլիս, բ' զմանչի աղբէր,—ասում աճամփորդը,—գնում եմ Աստծու կուշտը գանգատ, որ ինձ անբախտ աստեղծել:

— Թէ քու Աստոծը կըսիրես, ե՛ք Աստծու կուշտը հասնուս, Աստոծ մուրազդ տալ, ինձ էլ միտդ բի. ասա որ ճամփին մի խեղճ բ' զմանչի ես տեհել, ասա, որ ճանձերն ու կրտնին, հաղողը հասնում ա թէ չէ, ուտում են. ես էլ մի քեասիբ մարդ եմ, կարում չեմ եօլա գնալ. սրան բնչ ճար կայ:

— Աչքիս վրայ, բ' զմանչի աղբէր,—ասում ա մարդն ու իր ճամփին գնում: Նատ ա գնում, թէ քիչ, նրան մի էծ ա ռաստ գալի:

— Բար' աջողում, այ ճամփորդ աղբէր,—ասում ա էծը.—խէր ըլի, էդ որդի ես գնում:

— Բարու տէր ըլիս, էծ աղբէր,—ասում ա մարդը — գնում եմ Աստծու կուշտը գանգատ, որ ինձ անբախտ աստեղծել:

— Թէ քու Աստոծը կըսիրես, ե՛ք Աստծու կուշտը հասնուս, Աստոծ մուրազդ տալ, ինձ էլ միտդ բի. ասա, որ ճամփին մի էծ տեհայ. պողերն էն դդար վենձացել են, որ երգնքին դէմ են էլել. էլ կարում չի գլուխը կուացնել ու խոտ 'րածել: Սրան բնչ ճար կայ: Թէ որ կուզես, արի ես չոքեմ, մէջքս իլ¹⁾) ու պոզեռ բ' ձրացի Աստծու կուշտը:

Ես խօսքն ասում ա էծը, չոքում. մարդը նրա մէջքն ա ըլում, պողերովը բ' ձրանում, գնում Աստծու կուշտը. ընգնում ա Աստծու ոտներն 'զաշում, պ' զատում, որ իրան ռազի անէ: Աստոծն ասում ա. գնա, քու վայ գովլաթը ես դրկել եմ. լեզին գնա, որ եղնէն հասնուս: Իծի հ'մա' մի սղոց ա տալիս, որ պողերը սղոցէ: Բ' զմանչու հ'մա' ասում ա, որ իրան բաղը բ' չփորէ, խազինա կըգդնու: Գիլի հ'մա' էլ ասում ա, որ ճամփին մի շաշ մարդ կըգդնու. նրան վերկոխէ ուտէ, գլխի ցաւը անց կըկենայ:

Ես մարդն Աստծուց շնորհակալ ա ըլում, վեր ա ունում սղոցն ու իծի պողերովը գըվէր գալիս²⁾: Ե՛ք որ գեցնին ա հասնում, սղոցով իծի պողերը կտրում ա ու ճամփալ ընդնում վազում:

Գալիս ա գալիս, հասնում ա էն բ' զմանչուն: Բ' զմանչուն ասում ա, որ իր բաղը չիմ մի լաւ արի-մարէ³⁾ բ' չփորէ, խազինա կըգդնու: Բ' զմանչին ասում ա. «այ աղբէր, ե՛քոր էդ զայդի լաւ խաբար բերիր ինձ հ'մա, արի հետ իրուր փորենք, ինչոր գդնունք, կի-սումը կէս անենք. կէսը քե՛, կիսն ինձ:

— Զէ, բ' զմանչի աղբէր—ասում ա մարդը, ես դրա վախտը չունիմ. իմ գովլաթն Աստծ դրկել ա, ես պէտք ա վազեմ, որ եղնէն հասնում:

Նատ զաշում պ' զատում ա էս բ' զմանչին, որ էն մարդը կանգնի, իրան քօմագ անէ, դադած փողը կէս անեն, հ'մա մարդը լսում չի, տալիս ա անցկենում:

¹⁾ Լինել բայի հսամայականը:

²⁾ Խառնել:

Գնում ա գնում, գելն ա ռաստ գալիս: Գիլին
ասում ա, որ ճամփէննի մի շաշ մարդ գնալիս կըլի.
նրան վերկոխէ, ուտէ, գլխացաւը անց կըկենայ:

—Եթ'որ իմ յաւին դարձան բերիր, շատ շնորհա-
կալ եմ, այ աղքէր—ասում ա գելը—բաս քու դովլաթն
ուր ա:

—Իմ դովլաթը գնում ա, ես պէտք ա եղնէն վա-
զեմ, որ հասնում:

Ե՛բոր մարդը միքիչ հեռանում ա, գելը եղնէն
դի ա տալիս (կանչել), որ կանգնի:

—Դու ուր' շի հ'մա' չըշարվում ես ու պարապ տեղը
ճամփէննի վազում, քիանից ել շաշ մարդ ես մըդի պտիմ
ճարել:

Ես ասում ա ու վէր կոխում ուտում մարդուն:

Աստծանէ իրեք խնձոր կաթի. մինն ասողին, մինը
լսողին, մինն ալամ ըշխարին:

ՓԵՇԱԿԸ ՈՍԿԻ Ա

Պլում ա չի ըլում, մի շատ հարուստ թ'գաւոր ա
ըլում: Վախտ վախտ սա իր նազիր վէզիրնուցը
թաքուն ըղքատի շօրեր ա հագնելիս ըլում ու
քաղաքէ քաղաք, գեղէ գեղ՝ մանգալիս ըլում թէ տե-
սու խալիը իր վրայ բնչ ա խօսում:

Մի գօնում էլ մանգալիս մի գեղում տե՛նում ա
մի սիրուն ախչիկ. էն զայդի սիրուն, որ մարդ տե՛նէր,
կոսէր ոնչ ուտեմ, ոնչ իմեմ, նրա շիմշատ բօյուն մը-
տիկ անեմ:

Ե՛բոր թ'գաւորը տուն ա հասնում, էգսի օրը իր
նազիր վէզիրնուն ասում ա. կերթաք էն վլան ու
վլան տեղը մի գեղցու ախչիկ կայ, ես նրան հ'ւանել
եմ, մսէք, որ թ'գաւորն ուզում ա:

Նազիր վէզիրնին գնում են, գդնում թ'գաւորի
ասած գեղը, տ'ենում են ախչկանը, խելքներուն գը-
նում ա, մնում են մայիլ էլած: Ախչկայ հօրն ու մօրն
ասում են, որ թ'գաւորը նրանց ախչկանը հ'ւանել ա,
իրան կնիկ ա ուզում:

Գեղցին ինքն աղքատ մարդ, խելքը կտրում չէ,
որ թ'գաւորը լայեղ անէ իրանց ախչիկն ուզէ. հ'մա
վերջը, ե՛թ նրան բգդրում են¹⁾ ասում ա.

—Մենք թ'գաւորի զուլն ենք, Ե՛բոր թ'գաւորը
հըամայում ա, մենք բնչ պտինք ասել. թող ուզէ:

Վերջն էս մարդը հարցնում ա իր ախչկանը. «այ
որդի, նազիր վէզիրնին եկել են, ասում են, որ թ'գա-
ւորը քե՛ ուզում ա, բնչ ջուղաք ես տալիս. բնչ անենք:
—Թ'գաւորն բնչ փէշակ ունի. հարցնում ա ախ-

չիկը:

—Վնա, ախչի, բնչ ես ասում, գժուել իհօ չես.
Բնչ փէշակ պտի ունենայ թ'գաւորը. նա ըշխար'իս
ատէրն ա. ինչ ուզէ, կոնէ, ինչ ուզէ—կոսէ, ոնցոր ու-
զէ, կապիրի. մենք չիմս. ել նրա զուլն ենք:

1) Ատեպել, նեղեւ

— Զէ, ասում ա ախչիկը — իմ մարդը պէտք ա մի փէշակ էլա գիդենայ, ես անփէշակ մարդին կնիկ չեմ գնալ:

— Թ' գաւորը մնում ա վերքաշուած. հ'մա ինչ անէ. ախչկայ ծէրա ²⁾ գնում ա մի հեշտ փէշակ ս վորում — թ' ղքադրութիւն: Ե' բոր ս վորում պրծնում ա, մի լաւ աննման թաղիք էլ իր նշանածի հ'մա ա գձում ու զրկում նրա կուշտը: Ախչիկը շատ հ'ւանում ա, իրան հօրն ու մօրը մնաք բարով ասում ու նազիր վէզընու հետ վե՛կենում գնում թ' գաւորի կուշտը:

Թ' գաւորն օխտն օր օխտը գ' շեր հ'րսանիք ա անում. պսակվում են նրանք, փառքով ու պատւով ապրում: Մի տարի ա անց կենում, թէ երկու տարի. թ' գաւորն էլ Եդ ³⁾՝ ռաջուայ պէս ըղքատի շորեր ա հագնում ու քաղ'քէ քաղաք, գեղէ գեղ մանգալիս, թէ տե՛նու խալին իր վրայ ինչ են խօսում:

Մի գօնում էլ էտէնց մանգալիս ընդնում ա էն զայդի մարդկերանց ճանգը, որ նրան ծախում են մի վենձաւորի վրայ, ե'ք իմանում են, որ նա լաւ թաղքադրութին գիդէ:

Վենձաւորը սրան մի մութն օթախ ա տանում, բուրդ, անեղ, թագ տալի, որ բուրդ գզէ, թաղիք հարէ: Թ' գաւորն էն զայդի թաղիքնի ա գձում, որ սազ աշխար'ը ման ՚իր եկել, հատն ու կտորը գգնուլ չիր: Մի գօնում վենձաւորի կնիկն ասում ա. «այ մարդ, բի մեր թ' ղաքադրին մի լաւ թաղիք հարել տո՛ւ, տար թ' գաւորին փէշքաշ, բալքա մեզ մի բան բաշիէ:»

²⁾ Պատճառով, ի սէր:

³⁾ Կողեց:

Վենձաւորը լսում ա կնզալ խօսքին. գնում ա թ' ղքադրի կուշտն ու ասում. «ուզում եմ թ' գաւորին մի բան փէշքաշ անեմ, մի լաւ թաղիք հարէ, հ'մա լաւ տես, էն զայդի թաղիք պտիս հարել, որ հատն ու կտորը ըշխար'ումն էլած չի ըլի. որ տանիմ թ' գաւորի օթախումը փռեմ, մի մազի զդար ո՞նչ աւել գայ, ո՞նչ պակաս. թէ էս զայդի թաղիք չես կարացել հարել. գլուխդ տալ կըտամ:

Թ' գաւորը որ էս լսում ա, սիրտը փորումն ուլիսաղ ա ըլում: Դէ՛ թ' գաւորն ինքն ա էլի՛, իր օթախի լէնքն էլ գիդէ, երկէնքն էլ: Թ' գաւորը դրուստ վենձաւորի ըստածի պէս մի թաղիք ա չարում. եղի կոանն էլ գրում իր կնգանը, որ իրան տեղը շատ տարգուն ⁴⁾, գայ ըզատէ: Հ'մա էն զայդի ա գրում, որ մէնակ թ' գաւորի կնիկը հարել կարդալ:

Վենձաւորը շատ ուր' խանում ա. վեր ա կալնում էս թաղիքը, թ' գաւորի անարաթին մին ա ասում ու գնում:

Նազիր վէզընին թ' գաւորի կնզանը իմաց են տալիս, որ իրան մի թաղիք են փէշքաշ բերել: Թ' գաւորի կնիկը թաղիքը տուն ա բերել տալիս, փուում օթախումը, տե՛նում, որ ոնչ մի մազը աւել ա, ո՞նչ մի մազը պակաս. էն սհաթը նա խելլամիշ ա ըլում ⁵⁾ թաղիքի չորսի կուռը լաւ ակն ա ածում. լաւ մտիկ տալի. մի պենջումը ⁶⁾ տենում ա գրած բան, կարդում ա, իմանում, որ թ' գաւորի տեղը տարգուն ա,

⁴⁾ Գժուար, նեղ:

⁵⁾ Հասկանալ:

⁶⁾ Տանում, ծայրին:

կարդալնու բաշտան նա սըփթնում ա, չէչվէլ եղ վախտը թ'գաւորը շատ էր ըզքատի շորեր հագած ու ման եկած, շաբաթնով, ամիսնով ու տարով եղացած⁷⁾ հ'մա որ ասես⁸⁾ գլխովն անցկացած չէր, որ թ'գաւորի գլուխը եղ օյինը կըգէր:

Են սհաթն և՛տ հրամա՛ում ա, որ էն թ'զքադրին սազսիամաթի իր կուշտը բերեն:

Նազիր վեզրնուն էս վենձաւորի հետը զըկում ա, զնում են նրա տունը. մտնում էն մութն օթախը, թ'գաւորն էն զայդի վոխուած ա ըլում, որ նրան էլ ճ'նանչում չեն: Նրան բազնիս են տանում, լեղացնում, թազայ շորեր տալիս, որ հագնու. տանում են թ'գաւորի ամարաթնին: Վենձաւորը նրան խրատ ա տալիս. ընբնու գլուխ տուր, էս ասո, էն չասես. մի խոռք նրան ամէն բան ս'վորցնում ա, թէ թ'գաւորի կշտին ինչ պտի ասել, ինչ չէ:

Թ'գաւորը որ մտնում ա իր օթախը, կնիկը նրան էն սհաթին ճ'նանչում ա. լնկնում ա նրա խտիտը, փ'թաթփում, պաշպջորում. . . շատ ուրիշանում:

Դրուստ ես ասել, այ կնիկ,—ասում ա թ'գաւորը —գրուստ որ գարդակ թ'զքադըութիւնն էլ թ'գաւորութենիցը բա՛ձը ա:

Խէրն էստի, շառն ու շահմաթը լեզզու գլխին:

ՈՒՍՏԱՅ-ՆԱԶԱՐԻ

Ա. Ս Ի Ա. Ծ Ը *

(Ա.Ա.Ա. ՈՒՍՏԱՅ-ՆԱԶԱՐԻ)

Հին-Բայազէդու բարբառ.

Փուկով-ժամանակով ըստուց հառէչ՝ Բալազիդ մէ՛ նաշար ա հըլնում. Էնենց աբուռ-հայիով, Էնենց առ ու փրով, Ասուռ վախը սրբին, որ էլ ինչ ասեմ: Էս նաշարը պսակուկ ա հըլնում լիրան խարջը մէ՛ նամուսով ախչկալ խետ. Էնենց մէ՛ սիրուն, Էնենց անզալադ, որ արեքալին ասում ա՝ դու մի՛ հըլնի, ես հըլնեմ. Էնենց մէ՛ հուրի-մալաք, մէ՛ թառլան-թըլնդագ: Էս նաշարը սազ օրն էթում ա լիր գիքէանը աշխատում ա, լիրգունը գառնում ա տուն, լիր կնդալ խետ անուշ-անուշ ասում, խօսում, ծըձաղում, մէ՛ կտոր խաց ուտում. Ասուն խինդ գան փարք տալում, հըլնում լիրար գրկում քնում: Յառաւտունը էլի շուտ հըլնում, էթում լիր բանին: Էսմալ աբրում են:

Մէ՛ գան ըտեղի փաշէն էդ նաշարի կնդայ թարիֆը լուս ա, մտքին գնում ա որ ընդուր տէնալ: Որ չի տէնում, խելքը գլխիցն էթում ա, ասում ա. «Հայ գիդի, մէ՛ նաշար մարդ էսմալ կնիկ ունէնալ, ես չէ» . . .

Մէկէլ օրը ացում ա լիր «Հ ա ւ ո ւ շ ե ր ի ն», որ էթան էն նաշարին կանչէն: Նաշարը գալում ա ձեռ-

7) Ա. շացած:

8) Ա. մէկն ինք

* Առյն աւանդութիւնը յանձնել է մեզ չին-Բայազէդցի ալ. Յակարեանցը:

ները դրած դօշին, գլօխ ա տալում, ասում ա. «Հընչես կանչէր ես, փաշէն աբրած կէնայ. Բնչ ես ասում ես»:

—Կանչէր եմ քե՛ մէ՛ «խզմաթ» տալու, թէ չես արե՛ գլօխդ զանել կտամ»: Հէգուց սաբախտան շուտ քեզնից ուժի բեռ սղոցի թեփ կուզեմ: Դէ գնա, սաբախտան եան թեփը կտաս, եան գլօխդ: (Փաշէն գիդում ա, որ չի կանայ տալ, համա էնենց ա անում, որ ընդուր քեալայ անի, կնիկը յինքն առնի):

Խեղճ նաջարը գալում ա տուն, առնում ա սղոցը, կնգայ խետ հընդնում ա փէղերի ջանը. մէ՛ եանից արուն-առաջըսունք են թափում, մէ՛ եանից սղոց քաշում չունքի կէս գիշեր: Կնիկը որ տէնում ա չէ, կէս գիշերն ընցեր ա, հալա կէս ջւալ թեփ չկայ, քոթէշար ասում ա մառթին.

«Վարա առաջէ՝ սապայ-նաջար,

Վարա առաջէ կօհի հար ջար.

Խութէ եակ ա դ ա ր դ է ա հ հէտպար. . .¹⁾):

Մառթն էլ որ տէնում ա բանը բանից ընցեր ա, ումուդն Ասւած ա անում, ձեռը թալում ա լնդու փէշը բռնում ու հըլնում մտնում տեղրանքը (անկողին):

Աղօթրընին մէկ էլ տէնում են դուռը տփում են: Նաջարն ասում ա. «Հէսա էկան ընձի տանեն քեալայ անեն»: Հըլնում ա ձէն ա տալում, տէնում ա փաշի չառուշն ա: Ասում ա. «Ոստայ, փաշէն մեռաւ, հարի ն ա շ ը (գագաղ) շինա՛»:

Նաջարը փարք ա տալում Ասսուն, առնում ուրագն ու սղոցը ուրախ-ուրախ էթում նաշը շինելու:

Չունքի մկայ էդ բանը մնացեր ա: Մէկը որ մէ՛ նեղ տեղա հընդնում, ասում ա. «Եա ուստայ-նաջարի Ասւած»:

Էն Ասւածն եմ կանչե՛, որ ամէն Խայ — քրիստոնին պ'տի ազադա էդմալ զազաբից. . .

¹⁾ Արի քնի վարպետ նիւսն, արի քնի ինչպէս ամեն անգամ, Աստուած մեկ է՝ հազար դուռ ունի (ողորմութիւնն անբաս):

ԱՐԱՐԱՏԵԱՆ

Բ Ա Ր Բ Ա Ռ

Ծ Ա. Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ներկայ բառդրքոյկը բովանդակում է իւր մէջ բարցի բուժն ժողովրդական բառերից, ոճերից եւ գարձուածներից՝ նաեւ այն դժուարիմաց բառերի բացատրութիւնները, որոնք հանդիպում են մեր մինչեւ այսօր հրատարակած (Արարատեան բարբառով) աւանդութեանց մէջ:—Սոյն բառերը, ոճերը եւայն, ժողոված ենք գըլխաւորապէս Վազարշապատ գիւղում:

Որպէս առաջին փորձ, բնականաբար, այս բառանը կունենայ եւ իւր թերութիւնները, որոնք ապագայում, աւելի բարեյաջող պայմանների մէջ, կաշխատենք վերացնել եւ աւելի ճոխ, աւելի ընդարձակ ծալով առաջարկել այն՝ մասնագէտների ուսումնասիրութեան:

Տ. Ն.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌ

Ա. է. օրինակ՝ երամ ա, զայիս ա: կատառ. ամօր, պատարուաչայա: կառաներ: Աժենալ. արժենալ: Ալայ. գալսնիք, արատիք: Արանի. անաղ, չորացրած դեղձ: Աշնի ալանի հօսալ. անհամ խօսել: Ալան-թալան. յափշուակութիւն: Ալարել. ծուրանալ: Արարկոտ. ծոլլ: Ալափստրակ. նայաստակ: Ալլըմաղիկ. բիբեռն: Ալլըմազ. մաղի մի տեսակ, ալիքը մաղելու համար: Ալիր. ալիք: Ալիր ալցան. անել. զատ մանրացնել. սաստիկ ծեծել: Ալուան. ազնիր: Ալմաստ. աղամանի: Ախմակ. յիմար: Ախմախութիւն. յիմարութիւն: Ախար. չինոր:

Ակստ. ռախտ:
Ախտ անել. ռոխտել:
Ածել. բափել. ասւում է նոյն-
ակս որ են և երաժշտա-
կան գործիքի համար.
օր. զուռնայ ածել, բառ.
ածել:
Ածեր. նորատունկ այգի:
Ականաթ. որոգայր:
Ականաթ սարքել կամ ականաթ
դնել. որոգայր պատրաստել:
Ակը տալ. այցելել. կրկին զնայ
տեսութեան. տեղեկանալ:
Ակիշ. ակիշ. երկարից շինած
կիսաբոյորակ գործիք, ո-
րով տաշտի և կպած
խմորը մաքրում են, խսկ
ձեռքով այդ անհնարին է
լինում:
Ակն ու արեգակ. ամենագե-
լեցիկ:
Աչէլ. ծեր:
Աչ ու գողը ջանն առաւ. սաս-
տիկ վախեցա:
Աչէլութիւն. ծերութիւն:
Աշթմու. աղի մէջ պահուած
վարունկ, կաղամբ եւ այլն:
Աշ անել. աղ ցանել. փոխա-
բերաբար՝ մէկին ջնաւա-
նել. օր. խելքիդ աղ անեմ:
Աշը դնել. աղի մէջ դնել. փո-
խաբերաբար նշանակում
է սպանել:
Աք. առաջ:
Աց. առաջուց:

Աշունել. } ցորենը մաքրել
Աշուն անել. } իւր աւելորդ
մասերից:
Աշուն. այսպէս և կոչւում
աղայու ցորենը:
Աշցան. բանջարեղին:
Ամանչել. ամաջել:
Ամօթու փշուել. ամօրահար
լինել:
Ամանչկոտ. ամօրխած:
Ամարաթ. ապարանիք:
Ամակ. խնամք. երախտիք:
Ամրու. գուրանի առաջին կարգ
գոմեղները:
Ամրար. շտեմարան:
Ամրար անել. շտեմարանել:
Այան ընել. յայտնուել:
Այն-օյին. մանր-մունք բաներ:
Անարուռ. } անամօր:
Աներես. } անամօր:
Անանուխ. իլայրի դաղձի մի
տեսակը:
Անգ. ցորենի պարկի ծայրերից
մի քանի օղակներ են կա-
րում, որոնց միջով բա-
րակ պարան են անցնում
եւ ծայրերը միատեղ ժո-
ղովելով՝ կապում, որ-
պէս զի ցորենը պահ-
պանու բափուելուց: — Այդ
օղակները անգեր են
կոչուում:
Անգանակ. կառէ մեծ աման,
որի մէջ զոր են լուս-
նում:

Անդադար. անհնանգիստ:
Աներ. աներ. այսպէս և կո-
չում փեսան իւր կնոջ
հօրը:
Անէշտիբար. }
Անաղուհաց } Երախտամոռ:
Քրդի շուն. }
Անթասիր. պատուասիրութիւ-
նից զուրկ:
Անթիբայ. հազորագիստ:
Անլուայ. անլուաց:
Անըծել.
Անըծկաչոր } անիծել:
անել.
Անկաջ. ականջ:
Անկաջ դնել. } ունկն դնել լը-
Անկաջ անել } սել:
Անկաջը զեր անել. } իրան ջնե-
Անկաջի քամակը } լու տալ:
գցել.
Անկշոռմ. անյազ. ջկլտացող:
Անձող. ածուի:
Անուշ անել. վայելել:
Անպէտք. անպիտան:
Անջակ. հազիր:
Անսաս. անձայն:
Անսարք. անկարգ:
Անվիրի վիրի. ամայի. անմար-
դաբնակ տեղ:
Անտէր-անտիրական. անտէր,
անօգնական:
Անց կենալ. անցնել:
Անց կենող. անցնող:
Անօթի. } նօրի. դեռ. եսս
Անօթըհաց. } բան չկերած:

82

Աշխար մնել. ամուսնանալ:
Ափաշկարայ. } ակնյապտնի:
Աշկարայ.
Աշառ. արջառ:
Աչքաբաց. աջայուրջ:
Աչքակապ. մեռնածու:
Աչքակապութիւն. մեռնածու-
թին:

Աչքից մազ կթոցնի. շատ
ճարսիկ է:
Աչքից ընկնել. արհամարուել
մէկից:
Աչքը մնել. սիրելի դառնայ
մէկին:
Աչքը կշտանալ. մի բան ցա-
գենալ:
Աչքը վախենալ. մի բանից
վախենալ:
**Աչք հէնց ուռել ա նրա Հը-
մար.** կարծես թէ հնց նրա մա-
սին եմ մտածում:
Աչք ածել. աչքով որոնել մէ-
կին:
Աչքածակ. ազան:
Աչքածակութիւն. ազանու-
թին:

Անձիձիձիկ տալ } նախանձը
Աչքածլվիստ տալ } զրգուել:
Առ. ամօր. պատկառանիք:
Առօք-փառօք. մեծաղուր, փա-
ռանոր:

Առաւոտը սուրբ } առանօ-
ծէքին.
Առաւոտը գշե- } տեան ար-
բով գշերհանայ. } շարուսի
նետ:

Առատամ. սալիք տակը, աջ
եւ ձախ կողմերից, եր-
կու երկու փայտէ սե-
պեր են ցցուած, ուր
մտնում է ս. ո. նին եւ
որի մէջ նա պտոյտ է
գալիս: Այդ սեպերը կոչ-
ուում են ա. ո. ա տ ա մ-
ն է թ:

Ասել. խօսել. նշանակում է
նաև երգել. օր. հաղ
ասել:

Ասլան. առիմած:

Աստօծ. Աստուած:

Ասուու սուր ու թուրը զցել.
Աստուծոյ անունով եր-
դուել. անջափ աղպէլ:
Ասել զցելու տեղ չկայ. մեծ
բազմաւրին է մողովուած:

Ասպար. զինք:

Ասպարաւորուել. զինուել:

Ասուղը թէքուել. անբախտա-
նայ. օր. նրա աստղը
բերուել ա:

Ասեղը ծակում ա, միջով
անց կենում. սաստիկ ծխան է:

Ավսոնել. բովել:

Ավսոնող. բովիչ:

Ավսոն. բովուն:

Ատամները համբել. մեկի բոլլ
կողմը գտնել՝ նրանից
օգտուելու նպատակաւ:

Արար աշխար. ողջ աշխարի:
Արարմունք. արարք. գործո-
ղութիւն:

Արարմունքով. գործող. շնոր-
հալի:

Արանքին. } միջանցք. խոռոչ:

Արանքը. } միջանցք. խոռոչ:

Արայ ունենալ մի բանի չեն-
նայ. մի բան սիրել:

Արլ անել. պատմել. խնդրել:

Արդութամարդու. չտես. կա-
րօս մի բանի:

Արժան. արժանի. օր նա ար-
ժան ա ևս բանին:

Արին. արիսն:

Արինը քաղցր ա. նամակրելի
անձնանորութիւն է:

Արինք գցել կամ արին զցել.
արիննենդուրին անել:

Արինթրուշ. արիննենդուրինն:

Արչե. որսորդ:

Աւզութիւն. որսորդուրինն:

Աւ. որս

Աւզուշ. բոշնորսուրինն:

Ափալթափալ. զտապով:

**Այս ճիւղերը կոչում են
արքադ:**

Աւարայ. անգործ:

Աւալ. առաջ, առաջին:

Աւալ անել. մեծանալ, հասակն
առնել:

Աւարիդ. եզ գոմել, որ առա-
ջին անգամն է ծնում.
իսկ միքանի փոր բերե-
լուց յետոյ նա քած է
կոչում:

Աւելուկ. բանջար:

Աւոփա. ազահ:

Աւոգութիւն. ագանուրինն:

Աւչե. որսորդ:

Աւզութիւն. որսորդուրինն:

Աւ. որս

Աւզուշ. բոշնորսուրինն:

Ափալթափալ. զտապով:

Ափլըփորել. մուրը տեղում
ձեռքերով զօշափել՝ մի
բան գտնելու նպատա-
կա:

Ափկալ անել. մեկին շրջապա-
տելով բոնել:

Աքանցաքան. խառնալ նդոր,
անկարգ. օր. ինչ արան-
ցաքան տան ա:

Աքաշ. փորիկ կպաս:

Աքլոր. արադադ:

Աքլորականչին. նաւախօսին:

Աքլորակուր. արադադների
մրցումն, կոփ. փոխա-
բերաբար ասում է նաև
մարդկանց վերաբերու-
թեամբ, եթ կոփան աննը-
պատակ է. օր. ինչ եք
արօրակոփ. տափի:

F.

Բախան. բիկունք:

Բագիա. պինձէ խոր աման:

Բազուկ. ճակնեղեղի տերեւները:

Բազի վախտ. երբեմն:

Բաթէն. յետոյ:

Բաթլախ. սաստիկ ցեխ:

Բաժինք. նորանարսի օժիռ:

Բալի.

Բալքի. } գուցէ:

Բալքին. }

Բախւել. նախանձել. մեկին
բարիք չկամենալ:

Բախիւ. նախանձու. բարիք
չկամենալ:

Բախութիւն. նախանձ. բա-
րիք չկամենալ:

Բախութիւնել. } բախս ու-

Բախտը կտրել. } նենայ:

Բախտին քար զցել. մեկի բախ-
տանորութեան խոչըն-
դուս նախանձանալ:

Քամբաշել. զիխին մեռքով սաս-
տիկ հարուածել:

Քայղուշ. բու. փոխաբերաբար
նշանակում է՝ գուծատու:

Քան. իր. գործ:

Քանս աջ ա էթում. գործու
յաջող է զնում:

Քանս ձախ ա էթում. գործու
անյաջող է զնում:

Քանել. գործել. մշակել:

Քանւոր. գործաւոր. մշակ:

Քանձր. բարձր:

Քանձրանալ. բարձրանալ:

Քանջըքաղի. բանջարեղին
քաղելու գործի:

Քանֆոդի անել. սպանել. մեռց-
ել:

Քանֆոդի ըլնել. սպանուել.
մեռնել:

Քաշ. գլուխ. զիխաւոր. պատի
գլուխ:

Քաշորթիկ.

Ճուշտակ.

Ճլպինդ.

Պոլ.

Բասմինդ.

Բկալաչակ.

Բաշխել. պարզեւել. ներել:

Բառանչել. բառազել. օրին.
կովը բառանցում ա:

Բառ. { հասպա:

Բառ մնել. մրցել:

Բառմայ. ընտանի կենդանինե-
րի աղբը զիւղից դուրս

առանձին տեղ են զցում
ջորանալու համար:—

Այդպիսի տեղը կոչուում
է բասմայ:

Բար. պտուղ. բերք:

Բարատու. պտղատու:

Բարաստ. հակառակի:

Բարուր. խանձարուր:

Բարդի. անպտուղ ծառի տե-
սակ: Փոխաբերաբար նը-
շանակում է՝ բարձրա-
հասակ:

Բաց աշքով լիխացնել. անքուն
մնալ:

Բեգեառ. արքունական ծա-
ռայութիւն:

Բեղարել. յոզենել:

Բեթար. աւելի վատ:

Բեխարար. անտեղեակ մի բա-
նի:

Բեշ. ընջացք:

Բեղի տակով անց կենալ. մե-
կին կիսասիրտ յարգանք
տալ:

Բերանս նրա բերնի հենայ էլ
չե թրջուի. նրա հետ այլ եւս
ջպիտի խօսեմ:

Բերնիդ դարաւուլ դի՛. ջափդ
ճանաչիր:

Բերնի տաք ու { մեկի կարծի-
հովը իմանալ.

Բերնի գոլը { քըն իմանալ:
իմանալ.

Բէդոլվաթ. } ..

Բէդոլվաթի. շոալլ. անառակ:

շամադան:

Բէզրգեան. վաճառական:

Բէզրգեանութիւն. վաճառա-
կանութիւն:

Բէթի. { անախտան:

Բէչուգայ:

Բէխնը տանել. } զիխացաւանք

Բէխնաչան } պատճառել.
անել. } զզուեցնել:

Բէխն. ուղեղու. խելր:

Բէխնը մնել. հաւկանալ:

Բէչնորք. տղեղ. անշնորհ:

Բէջարել. մշակել:

Բէնքուատ. կտրիչ ատամներից
զուրկ:

Բէսամդ. անյարմար:

Բէշախտ. անժամանակ:

Բէր. ամառը, ճաշուայ ջօրին,
ոչխարները հով տեղ են
քշում հանգստացնելու:

—Այդ տեղը կոչուում է
բ է ր:

Բթել. շտապով ուտել:

Բիարուու. անամօր:

Բիրադի. } բոլորը. ամենը:

Բիրագնով. } բոլորը. ամենը:

Բիրդան. } յանկարծուստ:

Բիրդան բիր. } յանկարծուստ:

Բլբուլ. սոխակ:

Բլղուր. ողկոյզը՝ առանց հա-
տիկների, որից օդի են
պատրաստում:

Բկակել. զնչափողից բոմելով
խեղդել:

Բչամ գալ. յառաջանալ:

Բչիր. ցից:

Բղուղ. կանից շինած երկայ-
նամեն աման:

Բնակալ. հաւաբնում մի ձու
միջու բ ն ա կ ա լ են բող-
նում, որ հաւը շարու-
նակ ձռ ածէ:

Բնակալել. մի տեղ բուն դեել,
երկար ժամանակ մնալ:

Բնատէն. տես ձամբարակ:

Բնդել. անկանոն, անհաւասար
կերպով կարել:

Բնդոց. անկանոն կար:

Բոժ. { Ս.ոի մեջ պա-
ջոխ.

Տակաթթու. { հուած բան-

երնջանուկ

Օլորմակօթ. { շարեղիններ,

Կապառի լուլ. { որ զիւղացիք

Կապառի զոխ

Քեղ. { պասին ու-

Բօլի. {

Իրիցանուկ. { տում են:

Բոլոր. կանից շինած կոլորա-
ձեն աման, զանազան
բրուեղիններ պահելու
համար:

Բոլորիկ. դորա փոքրիկ տե-
սակը:

Բց. հասակ:

Բց քշել. հասակ առնել, մե-
ծանալ:

Բոյ ու բուսաթ. հասակ ու
տեսք:
Բուրու. բուզունի տեսակ (յօ-
պայ):
Բուրուի եղ քսել գլուխը, իս-
բել:
Բուկ. շնչափոյ:
Բուք. սաստիկ քամի:
Բուղազ. որկոր:
Բուղազեկ. որկրամոյ:
Բուղայ. ցուլ:
Բուղուրմիշ ըլնել. սայրաքել:
Բունունիք. կովի աղբից պատ-
րաստած կոնամեռ աման,
որի մեջ մրգեղիներ են
պահում:
Բուսուն քա-
շել. } ծածուկ մեկի
յետենից ման
Բուսուն պա-
շել. } զալ. դարան
մտնել:
Բուրքու. տօր. սաստիկ շօր:
Բութայ. նախասահմանեայ
սիրահար:
Բուխարի. գիւղական պատի
վառարան:

Գ.

Գափ. փայտեայ կարք առա-
սանի վերայ, բեռք բար-
ձեյու նամար:
Գող. չափ, որ նախար է

Բուրզը բարերար անել. սաս-
տիկ ծեծել:
Բուրզը տալ. բուրդը բափել.
փոխաբերաբար՝ սնան-
կանալ:
Բութել. նրել:
Բորի. վայրենի. կոպիտ:
Բոռնցք. բոռն. իսմրուդ:
Բորդզել տալ մեկի մետ ան-
դաղար կոռուել:
Բրդչան ըլնել. բուրզը բա-
փել:
Բրիշակ. ամերակ:
Բոլ. զատ:
Բոլուկ. բառականին:
Բողչյ. կապոց:
Բօմքի. փոան հաց:
Բօնձ. կոտրած խեցի:
Բօնձ անել. սպանել:
Բօստան. բանջարանց:
Բօստան ա. ձրի և ձեռք բե-
րած:
Բօստանչի. բանջարանց պա-
հոդ:
Բօրփել. կրակը բորբոքել գոգ-
նոցի միջոցան:

մօտանորապէս $1\frac{1}{2}$, ար-
շինին:
Գաղազել. յուսանատիլ:
Գաթայ. նազուք. իսդով եւ

շաբարով պատրաստած
հաց:
Գառան դժակ. մի սեսակ
բայս, որ յայտնի է ժո-
ղովրդական բժշկակա-
նութեան մեջ՝ որպէս
վերք մաքրող յատկու-
թիւն ունեցող:
Գառնանկաջ. գարնան բան-
ջար, որ նման է իր
ձեռով զառան ականջին:
Գաւ. կասե շիշ:
Գեալբարի. կրակախառնիչ:
Գեալաջաղը. առաջիկայ տա-
րին:
Գեալչյ. դանդաղիու:
Գեամ. սանձ:
Գեամը մի ձեռը տալ. իր
իրաւունքը մեկին յանձնել:
Գեառգեառ. }
Աշանարաթ. }
Օրգուրաթ. } ծիրանի տե-
Շաշնարաթ. }
Խոսրովշահի. } սակեներ:
Ըրութալիր. }
Տկլոր ծիրան. }
Գեղ. գիւղ:
Գեղցի. գիւղացի:
Գեղցաւարի. գեղջկօրեն:
Գերանդի. խոտ կամ ցորեն
հնեմելու գործիք:
Գերմակ. զատ մանր:
Գերմաստի. ծառի տեսակ:
Գեօզալ. գեղեցիկ, բանկազին:
Գեօզակ. ցորենի պարկի երե-

սի շոր, որ ցարենի բա-
փուելուց պահպանում է:
Գեղ. լճակ:
Գեռ. գերեզման:
Գերայ. նամեմատ:
Գզուած. պատառուտուած:
Փոխաբերական մտրով
նշանակում է նաև զա-
ռամեալ:
Գզեր. տանուտերի, ստորին
պաշտօնեալ:
Գէլ գայլ:
Գէլկոմ շուն. գել խեղդող
զան:
Գժուել. խելագարուել:
Գժութիւն. խելագարութիւն:
Գժանց. հիմնարկութիւն, որը
խելագարերին պահպա-
նում էն:
Գիժ. խելագար:
Գիւլար. վարդաշուր:
Գիւլօրաբայի. }
Դանդուռի ծաղիկ. }
Նաբարի ծաղիկ.
Սարդարի ծաղիկ.
Մահմուր ծաղիկ.
Թօփ ծաղիկ.
Միակի ծաղիկ. }
Նարգիկ. }
Կատար ծաղիկ.
Տղդան ծաղիկ.
Լիլիֆար.
Վարափիլ.
Վարդ.
Մանիշակ.

Գինովանալ. արբենալ:
Գինով. արբեցած:
Գիւմ ըլնել. խօրասուզուել
ջրի տակը:
Գլդրել. { տես թոյ անել:
Գլորել. {
Գլխատակը բարձ դնել. սուս
յայսերով խաբել:
Գլխաչան անել. մոլորեցնել:
Գլխալուի. ան գան ակի փո-
քըր տեսակը, որի մէջ
զուխ են յուանում:
Գլխել. լիք լցնել, օր. ամանը
զիսել ա:
Գլխի ընկնել. հասկանալ:
**Գլխիս վը-
վըէն ես
էկէ.** { մի տեսակ քա-
ռաքավարական
խօսքը, որ ա-
սում են պա-
տուա, օր նիւրերի
ընդունելութեան
ժամանակ:
Գլխիս կրակ և վառում.
սաստիկ վշտացած եմ:
Գլուխ դնել մի չեննայ. մե-
կին նշանակութիւն տալ:
Գլուխը տալ { զիստել, օր.
Գլուխը թացնել { զոխ կրուցնեմ:
Գլուխ բերել. ի կատար ածել:
Գլուխը թաս կոխել. ստիպել:
Գլուխի տալ. երկրպագել:
Գլուխը տակը տալ. յանձն
առնել, մի բանի ձեռ-
նարկել:

Գշեր. գիշեր:
Գոգի քարը վեր ածել. համա-
ձայնել, համոզուել:
Գոգնոց. առջեւը կապելու շոր
(կանանց):
Գոռալ. աղաղակել:
Գոռոց. աղաղակ:
Գովք. գովասանք:
Գորտալեղ. գորտանման լող:
Գունդ. գունդ (խմորի գունդ):
Գնդել. խմորը գունդ գունդ
անել:
Գուշ անել. զիսակոր լինել
մի բանի վերայ:
Գուրգուրել. զգուել:
Գռնակ. կոլորամեն, փայտ, ո-
րով խմորի գնդերը
բաց են անում թիւնու
ժամանակ:
Գռնակել. այդ գործողութիւնը
կատարել:
Գրող. հոգեառ, նրեշտուակ:
Գրողի փայը հատել ա. սաս-
տիկ նիհարել, նիւան-
դացել և. օր. խեղճի են
օրն ա ընկէ, որ գրուի
փայն կա հատէ վրիցը:
Գոշ. բարեխառն. օր. ջուրը
զօլ ա: շանակում է
նոյնական ջերմութիւն, օր.
համամի զօլը մարդ ա
հեղդում:

Պ.

Գաբաղ. կենդանիների մի տե-
սակ նիւանդութիւն:
Գագանակել. մահակով հա-
րուածել:
Գագար { հանգստութիւն:
Դնջում. {
Գալ. նոր ծնած կովի կարք
(եփած):
Գալար. կանանց, մատղաշ:
Գահրայ. մեծ դանակ՝ ծառի
աւելորդ միւները կտրը-
տելու համար:
Գաղել. այրել:
Գաղցղորիկ ածել. սաստիկ
այրել:
Գամար. երակ:
Գամբիլ. պտույ (դամբուլ):
Գան. 1, անգամ. 2, ցորենի
հատիկ. 3, կերակրի ե-
փելու աստիճանը:
Գանակւոր. դանակ ունեցող:
Գանակը ոսկոռին հասցնել.
համբերութիւնից հանել:
Գանդ. ծանրութեան ջափ, որ
հաւասար է $\frac{1}{4}$ մսխալին:
Գանդ ու սար անել. զգուեց-
նել:
Գանդալոշ. լիմար:
Գաստայ. փունջ:

Գաստախուն. սփոռոց:
Գաստամալ. աման լուանալու
շբր:
Գատել. շահել, վաստակել:
Գատում. շահ, վաստակ:
Գատումով. շահաւուտ:
Գար ի գուս. զառիվեր:
Գար ի վեր. զառիվայր:
Մեծ դարսաւ: {
Գարգեայ նշանա-
Դարգեայ. { կում և նոյնպիս
ողորմութիւն. օր.
Ասսու դարգեային
մեռնեմ:
Գարտաւարամ ըլնել. հոգե-
թից ճնշուել:
Գարման. 1, յարդ. 2, բժը-
կութիւն. օր. եարին դար-
ման ա պիտքը:
Գարմանի տակի ջուր. ծած-
կամիտ. խորամանկ:
Գարվիշ. մահմեղական քա-
րողիչ:
Գափ. բմբուկ:
Գափաչի. բմբկանար:
Գափ ածել. բմբուկ նարկանել:
Գափթար. մատեան:
Գենլիկութիւն. յիմարութիւն:
Վշել. ուղղել:

Դէզ. ցորենի կամ խոսի շելզ: **Դորակ.** ջրի փոքրիկ շիշ:
Դէմ առնել. կանգ առնել, օր.
 ենքամ կերել ա, որ դեմ
 ա առել:
Դէմ ընկնել. խնդրել, աղածել:
Դէմ տալ. հրել մի բանի:
Դէմ անել. մօտեցնել:
Դէմ ու դարձ անել. ընդդի-
 մախօսել:
Դէնը. այն կողմը:
Դէսը. այս կողմը:
Դէտը. այդ կողմը:
Դըրը. անգամ:
Դըրբել. ծեծել, նշանակում է
 նոյնպէս՝ շտապով նաց
 ուտել:
Դըրբոց. ծեծ:
Դժար. դժուար:
Դժարանալ. դժուարանալ:
Դիզել. շեղչել:
Դիչ. կողմ:
Դիչը պահել. մեկին պաշտ-
 պանել:
Դինջ. հանգիստ:
Դիր գալ. համակրելի լինել,
 հասանել:
Դիքան. դատաստան:
Դիվագագար անել. անհան-
 գիստ անել:
Դլել. խաթել:
Դմբոճիկ. գեր:
Դնջանալ. հանգստանալ:
Դովրան. երջանկութիւն:
**Դովրան քշել, կամ դովրան քա-
 շել.** երջանիկ ապրել:

Դութմաց. սեխի ազնիւ տե-
 սակը, որ զիսաւորապէս
 երեւանեան նահանգում
 է բուսնում:
Դուիթ. բանարաման:
Դունչ. ուռնզն:
Դուշման. թշնամի:
Դուս. դուրս:
Դուս ու տուն անել. դուրս
 գնալ եւ ներս զալ:
Դուս անել. դուրս անել, ար-
 տարսել:
Դուի. կիսանեփ:
Դաներով Խօսալ. փոխաբերա-
 կան մտրերով խօսել:
Դանակ. փոքրիկ դուռը:
Դօ՛րը. մրտեղով:
Դրինդ. ձեռքի ափ:
Դրիջակ. երկու լրացիների
 պատի մեջ փոքրիկ անցք՝
 վտանգի ժամանակ իրար
 նետ հաղորդակցութիւնն
 ունենալու համար:
Դրնցէզ. Տեառքնդառաջի երե-
 կոյեան ամեն տան բա-
 կում խոտ այրելու, սո-
 վորութիւն կայ, որ կոչ-
 ուամ է դրն դէզ:
Դրուստ. աղիոյ:
Դրստել. ուղղել:
Դօշ. կուրծք:
Դոշար. խաղողի եփած քադ-
 ցու:
Դօր. մերք:

Դօրէ գօր. մերբով:
Դօնուշ. } անզամ:
Դօնում. }

Ե.

Եաբու. բարեկամ:
Եօլվաթ. հարստութիւն:
Եակում է նոյնպէս լը-
 դանալ:
Եգ ընկած. լիլ:
Եգով.
Եգը.
Եննայ. } լետոյ:
Եգև.
Եգեկից. } լետեկից:
Եննուց. } լետեկութիւն:
Եղան լիզու. մի տեսակ բոյս,
 որ յայտնի է ժաղացը-
 դական բժշկականութեան
 մէջ որպէս վերք մար-
 րոյ յատկութիւն ունե-
 ցող:
Եթիմ. որք:
Եթուկ ընկել. տեղեակ լինել:
Եղ. իւղ:
Եղոտ. իւղուր:
Եղաման. խոյաման:
Եղասրոց. դանակ սրին քար:
Եմիշ. սեխ կամ մրգեղէն:

Եռալ, Եփել, նշա-
 նակում է նոյն-
 պէս՝ տեղից շար-
 ժուել, օր, ըսկի
 սիրտը չի տալի
 տեղից եռալ:

Եսիր. գերի:
Երիշ. լնրացք:
Երկար. երկայն:
Երկէնք. { երկայնու-
Երկարութիւն. } թիւն:
Երդիկ. երդ. զիւղական տնե-
 րի տանիքի վերայ բաց
 արած անցք, լոյսը ներս
 քափանցելու համար:

Երեսի ջուրը { պատկառանք
 գնացել ա. } ջունի:

Երեսի մեռոնը առանք:

Երեսի ջուր. վերմակ:

Քերել. սաստիկ զգուեց-
 նել որ եւ է բան
Կպնել. խնդրելով:

Ռը տանել.

Երեսը գոմչի կաշի ա շինէ.
 անամօր մարդ է:
Երեսի մինը զնդան ա շինէ.
 մինը կրակ. երեսը պնդել է,
 չի ամազում:

Երես տալ. մեկին վատ սովո-
 րեցնել՝ նորա բոլոր ցան-
 կուրիւնները կատարելով:

Երեսովը տալ մեկին արած
 բարիքը լիշեցնել, յան-
 դիմանել:

Եքսան. նորից. կրկին. եւս
 առանել:

Եօրդան. վերմակ:



Զաբնել. նինարել:
Զարուն. նինար:
Զադ. իր. առարկայ:
Զալում. ճարպիկ:
Զալութիւն. ճարպկութիւն:
Զահլոյ տանել. { զգուեց-
 նել: }
Զահլաքուշ անել.
Զադայ. քարայր:
Զանգուլակ. փորդիկ զանգակ:
Զարար. վնաս:
Զարար անել. վնաս կրել:

Զարգեար. ոսկերիչ:
Զարզանդել. սարսափել:
Զաւզակ. շատախոս:
Զաւզակութիւն. շատախո-
 սութիւն:

Զաքթել. տիրանալ ուրիշի
 սեպհականութեան:

Զեպլել. անպատուել:

Զերզամրի. ներքնատուն:

Զըրին. զրամ:

Զիան. վնաս:

Զիան անել. վնաս կրել:
Զիղիկ. յախնապակու կտոր.
 փոխաբերաբար՝ դրամ:
Զմշորել. նախատել:
Զմոռուտ շուշ. զիշակեր բըռ-
 ջուն:

Զնդռակ. { խաղողի ճուր.
 Զնդրակ. } (ճիռ.)

Զնդլուզնդըռ դողալ. ցրտից
 սաստիկ դրացնել:

Զնդան. սայ:

Զնջիլ. շրայ:

Զնջիւլ. շրայակալ անել:

Զովշ. ուրախութիւն:

Զուռնայ. փող:

Զրից. զրոյց:

Զրից անել. զրուցել:

Զօլ. շերտաւոր:

Զօր. ոյծ. զօրութիւն:

Զօրով. { ուժեղ. քաջ:



Էցնաֆողէք. մեռածի այգը:
Էցնաֆողէք տնել. մեռածի
 այգը կատարել:

Էգուց. վաղը:

Էդ. այլ:

Էդթաւուր. այդպիսի:

Էդքամ. այդրան:

Էթալ. զնայ:

Էլի. եւս. դարձեալ:

Էլլիկ. համայնք:

Էլմով. զգուշութեամբ:

Էլոզլի. օտար:

Էծ. այծ:

Էչտիբար. վարկ:

Էն. այն:

Էնթաւուր. այնպիսի:

Էտել. խաղողի վազները գար-
 նան ժամանակ կտրատել:

Էտոց. կեռ. դանակ, որով վազ-
 ները կամ ընդհանրապէս
 ծառերի ճիւղերը կտրա-
 տում են:

Էտոր. խաղողի վազները
 կտրոյ:

Էր. այր:

Էրի. կենդանեաց առաջին թեւ:

Էրինջ. երինջ:

Երկու երեսանի. կեղծաւոր:
Երկու ոտք մի մաշիկ գնել
շտապէցնել:
Երկու մեռկի կշտով անց կե-
նայ՝ մինը կգողանայ. հմուտ
աւազակ է:

Ը.

Ընկնաւոր. այսահար. դիսա-
հար:
Ընկնաւորել. այսահարիլ. դի-
սահարիլ:
Ընչանք. | մինչեւ:
Ընչում. |
Ընդէ. այնտեղ:
Ընդիան. այնտեղից:
Ընենց. այնպէս.
Ընենց տեղ չես նստի. որ
տակդ ջուր մնի. այնպիսի
բան չես սկսիլ, որ խաբ-
ուես:
Ընենցով. այնպիսով:
Ընդոնց նրանց;
Ընդոնք. նրանք:
Ընդուր. նրա:

Երկու ֆոգիս. յիդի:
Երկը ֆոգսանալ. յդանալ:
Երք. իրաւունք:
Եփէջայ. բաւականին:

Ծ.

Թագալ. դարձկար:
Թագալել. դարձկարել:
Թագուջակ. մարգերի աւելորդ

խոտերը հանելու գոր-
ծիք:
Թագարէք. պատրաստութիւն:

Թագարէք տեսալ. պատրաս-
տութիւն տեսնել:

Թաղայ. նոր:
Թաղադան. նորից:
Թաթ. մանկալան խօսք, որ

նշանակում է ձեռք:
Թաթաշոր. մանկան ձեռքերը
փարարելու զոր, օրօրո-
ցում քոն դնելու ժա-
մանակ:

Թաթման. ձեռնոց:
Թալ տալ. խաբել. հետքը
կորցնել:

Թալաչ. բախտ:

Թալաչը բանել. բախտ ու-
նենալ:

Թալան. աւար:

Թալանել. աւարել:

Թալաք. որոգայր:

Թալաք գալ. որոգայր լարել:

Թախտ. զան:

Թակ. միս կամ լուսացք ծեծե-
լու փայտ:

Թաղադ. ոյժ. զօրութիւն:

Թաղադից ընկնել. ուժից ընկ-
նել:

Թաղկել. մազերը սանրելիս
խճանել:

Թաղկուճ. սանրելու ժամանակ
քափուած մազերը:

Թամամ. լրիւ:

Թամել. լրանալ:

Թամարզու. կարօտ մի բանի:

Թամբալ. ծոյլ:

Թամբալութիւն. ծուլութիւն:

Թամբաչ անել. պատրաստութիւն:
Թամզացնել. մաքրել:

Թամուզ. մաքրուր:

Թայթի. շտապով:

Թառ. 1, փայտէ երկար ձող,
որի վերայ հաւերջ զի-

շեր ծամանակ թառ. են
ցլնում: 2, երածուա-

կան գործիք: 3, սայիի
երկայնուրեամբ երկու
կողմից ձգուած փայտերք:

Թասիր. պատուածանազութիւն:

Թասիրը քաշել. մեկի կողմն

անցնել, պաշտպանել:

Թաւուր. տեսակ:

Թարզը տալ. վերջ տայ:

Թարէք. գիւղական տերի պա-
տերի վերայ շննուած
առանձին տեղ, զանա-
գան մանր-մունք բաներ

դարսելու համար:
Թարիսուն. բարխուն:
Թարփ. ձկան որոգայր գետե-
րի մեջ:

Թարք. զանակ:

Թարքը քաշել. զաւակն առ-
նել մեկին ձիռ վերայ
նստած ժամանակ:

Թաւալտալ. | զլորուել:

Թաւալել. |

Թաւայ. երկայնակօր փոքրիկ
կարսայ:

Թափան. ստամոր:

Թափան-փոռը. փորոտիք:

Թափաւութ. զանազանութիւն:

Թափշակ. բանի այն մասը, որի վրայ յենուամ են ոտուլ փորելու ժամանակ:

Թաք.
Թաքիլան.
Թաքըլի.

թերուել. վետել:

Թեկտալ. ուղարափ լինել. օր. սովածութիւնից սիրտս թեկտում ա:

Թեր. ջորացրած կանաչեղին, որ պահում են ձմեռը կերակրի մէջ ճգեյու համար:

Թերեփ. կիսաեփ:

Թերթևանունք. արտեւանունք:

Թերիսաշ. կիսաեփ. օր. թերիսալ ձու:

Թերմացք. ջրի կամ կերակրի մեացորդ. օր. քու թերմացքն ով կիսմի:

Թերմուն. զինով եւ զանազան քաղցրեղիներով պատրաստած ջմակիք:

Թէ իմ ասածը կը լիի, ես գիտամ արել որդէ մը կմինի. երէ իմ ասածը լինի, ես զիտեմ թէ ինչ նետեւանք կունեայ:

Թէ կուզ գլխին թուր ու սուր հաղացնես, շնորով օձ փաթես՝ ասածիցը եղ չի դառնայ. թէ ին, սարսափեցնես ել, նա դարձեայ իւր խօսքը կպնդի:

Թէժ. բորբոքուած օր. թէժ կրակ:

Թէժացնել. բորբոքել կրակը:

Թէլուկ. աղցանի մի տեսակը:

Թէլ ու գերձանա դառէ. անջափի նիմարել է:

Թէշ. կայում ցորենը յարդի հետ խառը ժողոված:

Թէշի. թէլ մանելու գարծի:

Թէշ. զոր յուանայու աման:

Թէք ընկնել. պառկել:

Թէլըպկել. ուղարափ լինել:

Թիլ. | թոյլ:

Թիլէկ-միլիկ. | թոյլ:

Թիլանայ. բույանայ:

Թիթէն. անասունների ջորացած աղը, որ դաշտերից են ժողովում:

Թիմարել. ձիուն քորել, սղալել:

Թինգը տալ. յենուել:

Թիբայ. պատառ:

Թիբայ թիբայ անել. յօշատել:

Թլորել. խաբել, համոզել:

Թլուատ. կակագ:

| թրուած խմոր,

Թխտմոր. | սր ալիւրը ջաղանաշ:

| խելիս խառնում են նորա նետ:

Թխսամեր. ճագեր ունեցող

հա:

Թմիլիկ. գեր:

Թութորալ. տրտմջալ. փնիրի փնիրալ:

Թութորանք. տրտունչ:

Թոնթռի տալ. ցատկել. թլուչ կոտել:

Թութակ. սրինգ:

Թուլայ. զան ձագ:

Թուլափայ. աւելորդ պատառ:

Թուխս դնել. հային ձուերի վերայ նստեցնել:

Թուխս. տես թիսամիք:

Թունդիր. բոնիք:

Թուշ. այտ:

Թուշ ըլնել. պատահել. դիմանորել:

Թուքումուր. յանդիմանուրին:

Թիլէկ-միլիկ. յանդիմանուրին:

Թիլանայ. բույանայ:

Թիթէն. անասունների ջորացած աղը:

Թիբայ. կամ զոմեղի աղբ:

Թրքել. քրիք հանել. օր. կովը քրքեց, գոմեղը քրքեց:

Թւկ. բազուկ. բուջունի թեւ:

Թւկանց. կանանց բազուկներին հագնելու շոր:

Թւխս. անել. զորել:

Թօլ ըլնել. զորուել:

Թօխան. կանգնած վեզի հարք մասը:

Թօռչի. ձկնորս (ուռկան ձգող):

Թօփ. զնդակ. բնդանօր:

Թօփ անել. ժողովիլ:

Թօփ ըլնել. ժողովուել:

Թօփուն. խումբ:

Թօփուն թօփուն. խումբ խումբ:

Ժ.

Ժաժ գալ. շարժուել:

Ժաժ տալ. շարժել:

Ժաժկան. շարժուն:

Ժաժիկ. կանանցախառն պանրի փշրանք:

Ժահը. շարաւ:

Ժամ. եկեղեցի:

Ժամչար. ժամկոչ:

Ժամէ-ժամք. օր ու գիշեր:

Ժանգ. ժանիք:

Ժանգառք. վերջալոյս:

Ժանգառք կոխել. արե-

գակը մօտ է մայր մբունելու:

Ժանգել. } մոայլել, տըխածել:

Ժանգը վեր. } բաղեմ լինել:

Ժանգոտ. ժանգով ծածկուած.

փսխաբերաբար նշանակում է նոյնպէս՝ դժներես. օր. ինչ ժանգու մարդ ա:

Ժանգոտել. ժանգով ծածկուել:

Ժժմունք. ժմունք որդի:

ԺՆԳԺՆԳԱԼ. լալով բախանձել: **ԺՈՒՌ-ՄՇՆՈՎԸՆԵԼ.** երիտա-
ժում: անզամ: սարդ հասակում մեռնել:

ԺՈՒՌ. ջասած խաղող: **ԺՐԵԼ.** առողջանալ:

Ի.

Խ. էֆ. օր. ատում ի, խո-
տում ի:

ԽԳԲԹ. կտրիճ. քաջ:

ԽՂ. հետք:

ԽՂ ու Թօղը Կորցնել. հետքը
կորցնել:

ԽՂԱՆ. ուշիմութիւն. իմացա-
կանութիւն:

ԽՂԻՆ. բոյտուուրիւն:

ԽՂԱՔԵ. } մանաւանդ:

ԽՂԱՔԻՄ. հնար:

ԽԻԿ. հախարակի այն մեծ
ասելլ, որի վերայ մա-
նած քելը փարարևում է:
Նշանակում է նոյնպէս՝
ողնաշար. օր. միջքիս
փիփիք ցաւում ա:

ԽԼԻՄ. իլիմ. գնալ. անմերա-
դայնալիք կերպով զնալ:

ԽԻՒԻ. ձիաների ջոկ:

ԽՄՈՅՆ. մի տեսակ բռնի:

ԽՄՃԵԱՆ ա ՔՐՈ ՔՒԵՐ. իմ
յոյսը քեզ վերայ եմ դրել:

ԽՄՄԱՏԻՋԸՐ ՓՈՒՀ ՀԱՆՈՂ ՀԻՇ.

նա պիտանի չի լինելու
ինձ:

ԽՄԱՑՆԵԼ. } յայտնել:

ԽՄԱՑ ՄԱԼ. } յայտնել:

ԽՆ է ԻԲՆ. օր. մասկանար ին
անում:

ԽՆ մի աչքով } ինձ լաւ չես
ես տենում:

ԽՆ մի ձեռով } ճանաչում:

ես բռնում:

ԽՆԱԳ. վրեմ:

ԽՆԱԳԸ ՀԱՆԵԼ. վրեմիսնդիք
լինել:

ԽՆՀՔԱՄ. ինչքան:

ԽՆՔ. ինք. օր. նայլ ինք ա-
նում:

ԽՉԱՆԱԼ. մոլորուել. է շ կ ը տ-
ր է յ մեալ:

ԽՉԱՊՈՆՆՈւԿ. երկայնաձեւ
նստարան:

ԽՉԱՐԱԾ ԱՆԵԼ. նշանացի ա-
նել:

ԽՉՄԱՀ. ախործակ:

ԽՉՈՒԿ. սա զինում է փայ-

տից եւ այնպէս յարմա-
րեցրած է, ու կրոց դր-

նում են սորա վերայ եւ

առանց ուրիշի օգնու-
թեան՝ զայակում:

ԽՍԱՆ. } աղամորդի:

ԽՍԱՆԱՊՐԴԻ. } աղամորդի:

ԽՆ ՉՐ ՉԲՆՍ ՀԿԱՅ. ոչոք չկայ:

ԽՆԱԳԸ ԱՆԵԼ. ապացուցել:

ԽՐ. էիր. օր. բան իր անում:

ԽՐԱՆՈԵԳԼՈՒԽ. ինքնազլուխ:

ԽՐԱՐ ԳԳԵԼ. կունացնել:

ԽՐԱՐ ԸՆԿՆԵԼ. յարմարուել
իրար հետ:

ԽՐԱՐ ԳԼԽՆՈՎ } իրար խառ-
դիպչել:

ԽՐԱՐ ԳԻԱՍԵԼ } նուել:

ԽՐԱՐ ՄԻՍ ՈւՄԵԼ. կրուել:

ԽՐԱՐ ՐԵՐՆԻ ԹՔԵԼ. իրար նետ

ԽՐԱՐ ԵԱՄԵՐԱՋԻ ԼԻՆԵԼ. բայութեան ապացուցել:

ԽՐԱՐ ՀԵՆ ա ՔՇՈԵՄ. իր ասածն
է անում:

ԽՐԻԿՈՆ. երեկոյ:

ԽՐԻԿՆՄԱՊԱՀ. երեկոյեան դիմ:

ԽՔ. էկր. օր. բնդում իր:

Լ.

ԼԱՆԳԱԿԲ. երկայն ձող, որ

նպաստում է յարախա-

ղացին լարի վերայ հա-

նասարակշուուրիւն պահ-
պանելու համար:

ԼԱՉ. դիմկ:

ԼԱՀԱԿ. շղարշ:

ԼԱՎՈ. մի բաղանք:

ԼԱԳՈՎՐԿՆԵԼ. նեղձամդուկ

լինել:

ԼԱԳԻ. զան կերակուր. նշա-

նակում է նոյնպէս՝ բո-
լորովին:

ԼԱԳԻ ԱՃԵԼ ԳԼԻՒՆ. սաստիկ
անպատուել:

ԼԱԳԻԵԼ. լափել:

ԼԱԳԻԻՆ. ալիք:

ԼԱԳԻԻՆ ՄԱԼ. յորձանք տալ:

Լափշի. կօշկի մի տեսահայր
Լգամ. սանձ:

Լեթուել. յագենալ մի բանից:

Լեղանալ. } լողալ:

Լեղ տալ. } լողալ:

Լեղածաք ըլնել. } սաստիկ
Լեղածատառ ըլնել. } վախե-
Լեղին ջուր Կտրել. } նայ:

Լերդաքաշ. ազահ:

Լերուել. տես Լկատուել:

Լէնք. յայնութիւն:

Լժուել. տես Լկատուել:

Լիզու. լեզու:

Լիզուանիկ. ապրտարախոս:

Լիզուն իրան անել. } լոել:

Լիզուն բունը դնել. } լոել:

Լինդ. երկարէ բիր:

Լինդ. լինդ. լինդեր:

Լիս. լոյս:

Լիսանալ. յուսամալ:

Լիսացնել. ամբողջ զիշեր
անբուն մնալ:

Լիս ընկնել. յայտնուել:

Լիսուել լիս էր. մօտ էր լու-
սանալու:

Լիսին. լուսին:

Լիկուել. պապանձուել:

Լկսուել. երես առնել:

Լզար. նիհար:

Լզարել. նիհարել:

Լզպոր. խիստ փափուկ: Ալս
բառը գործադրում է
զիխաւորապէս բոլցոց
մերկ ձագերի վերաբերու-

թեամբ. օր. ևս ծտի ձու-
տը շատ լդպոր ա:

Լուօկ. պտուղ:

Լոք. քայլ:

Լուանալ. լուանայ (շոր եռ
այլն). փոխաբերական
մտքով նշանակում է
նաև՝ անվատուել. օր.
նրան մի լան լուացի,
վէ դրի:

Լուլայ. խողովակ:

Լուն ուղտ շինել. որ ևս է
բան ջափազանցուրեան
հասցնել:

Լուսաստղ. լուսաբացին ե-
թենող աստղ:

Լպստել. լիզել:

Լպստած. երես սուած. փչա-
ցած:

Լքլքալ. սիրող սաստիկ
բաբախել:

Լքլքոց. սրտի սաստիկ բա-
բախումն:

Լօդ. տես Լօձ:

Լօթի. վատնող. շռայլ:

Լօթոփկ. ազահ. շատակեր:

Լօթոկութիւն. ազահութիւն.
շատակերութիւն:

Լօձ. դեղձի այն տեսակն է,
որի կորիզը կպած է
մսից:

Լօպպազ. դատարկախոս.
պարծենկոտ:

Լօք. լօք ձուկն:

թարար. լուր. նամբար:

Խաբար. բամբար:

Խաբարբան. բամբասահը:

Խաղինայ. գանձ. պարսկա-
կան բաղանիքների ջրամբար:

Խաթայ. փորձանք:

Խաթուն. տիկին. պատուա-
նուն:

Խաւ. բիծ:

Խալաւոր. բծանոր:

Խալթաբանդ. ստախօս. խա-
թբայ:

Խալիս. ծողովարդ բազմու-
թիւն:

Խալվար. մի խալվարը նաևա-
սար է 30 փութին:

Խալֆայ. դասատու:

Խախալ. մաղի մի տեսակ,
որով ցորենը մաքրում
էն քարերից:

Խախալել. խախալով ցորենը
մաքրել:

Խակ. տիսա:

Խաղկ անել. } անվատուել:

Խաղկ ու Խայ. } անվատուել:

Խառակ անել. } անվատուել:

Խամ. անփորձ. նշանակում
է նոյնական անմշակ հոդ:

Խանդակ. փոս տեղ:

Խանմաղայ. պատուանուն
հարսի կողմից իւր տալոշը:

Խանչալ. դաշուն:

Խանչալիդ. քարը վէ ընկնի.

Խես. տաւարի կամ ոջխա-
րի ոտներից պատրաս-
տած կերակուր:

Խաշել. եփել. օր. ձու. խա-
շել. միս խաշել:

Խաշել. իւդով եւ ալիւրով ե-
փած կերակուր:

Խաշլաւայ. եփած միս:

Խաշու. արգանակ:

Խաշուդ բերանս չի էրէ.

քեզանից ոչ մի բարիք
չեմ ստացել:

Խառագ. նիւսն:

Խաս. նուրբ. ազնիւ:

Խարջ. հարկ:

Խարտ. դանակ սրելու քար:

Խաւիծ. խաջի տեսակ կե-
րակուր ծնդկաներին
ուտեցնելու համար:

Խելի. քիչ. բաւականին:

Խելքը մնել. հասկանալ:

Խելքամաղ ըլնել. } ապշել:

Խելքն էթալ. } հիանալ:

Խելքչան անել. խելքից հա-
նել. մոյորեցնել:

Խեմ. մաղի կամ խախալի
շրջանակ:

Խեց ընկնել. տես Զուր ընկ-
նել:

Խէչաղպէր. խաչեղբայր:

Խըժաղպէր. պատենասոր

բամբակը դրսի կողմից
մաքրելու գործի: Խողան.
Խըլթէխըլթ. լիքը: Երկու տարի
Խըլթ-խըլթ. քրի մէջ խօսող: անմշակ մնացած
Խըզերկաթ. խաչաձեւ. եր-
կար՝ բոնրի վերայ կար-
սաներ դնելու համար:
Խըթթւաւուկ. զնչափող:
Խթուել. խրուել. օր. ոսո
ցելս խրուեց:
Խթման գշեր. Զատկի եւ
Զրօրինեաց բարախման
զիշեր:
Խի՞ ինչնի:
Խիալ. միտք. կարծիք:
Խիալ տանել. կասկածել:
Խիալբազ. կասկածու:
Խիզան. լնտանիք:
Խիզանամեր. զաւակամայր:
Խին. կերակրին համ տալու
նիւք:
Խլպտալ. խրուել մկանց:
Խմլ. ըմպել. արբենալ:
Խմած. արբեցած:
Խնամքար. նին ժամանակ-
ներում բազաւորների
արքունիքում, սրահի
մէջ, մի անազին տա-
փարակ քար եր դրուած,
որի վերայ գալիս, նըս-
տում եին հարսնախօսու-
թեան եկող մարդիկ. այդ
քարը կոչուամ եր՝ խը-
ն ա մ ա ք ա ր:
Խնոցի. իւղ շինելու գործի:

Խողան. } Երկու տարի
Խողանա- } անմշակ մնացած
տեղ. } վարելանոյ:
Խոկալ. զգուել մի բանից,
մանաւանդ՝ կերակրից:
Խոռոց. մկան կտոր:
Խորթ. անհարազատ:
Խորոմ. երկու խորոմը հա-
նասար է մի խրձին:
Խուլասայ. մի խօսով. ինչ
եւ իցէ:
Խուճուծ. զանգուր:
Խում: ումպ:
Խունջիկ-մունջիկ անել. նազ
անել:
Խուշուր. փայտի կտորտանք:
Խուրձ. որայ ցորենի. խոտի
խուրձ:
Խուրջին. սա գիւղացիներին
ծառայում է որպէս
պայուսակ եւ գործուած
է լինում բրդից՝ Երկու
առանձին բաժանմուն-
քով:
Խչմար. Երկմիւդ փայտ՝ որ-
քի տակ նեցուկ տալու
համար:
Խտիտ. զիրկ:
Խտտել. զրկել:
Խրել. տես Տնկել:
Խւ. խելազար:
Խօղվաթ. առանձին:
Խօնչայ. փայտէ մատուցա-
րան:
Խօշը գալ. տես Թիր զալ:

Խօսքով ըլնել. խօսքի բըո-
նուել. խօսակցութեան
պատահել:
Խօսքը կտուրը գցել. խօսակ-

ցուրեան նիւքը նպատա-
կով փոխել:
Խօսքը չուանի չդնել. խօսքը
բանի տեղ չդնել:

Ծ.

Ծալքատեղ. պատի մէջ պա-
հարան, տեղաշոր դար-
սելու համար:

Ծաղ. հարսանեաց ժամանակ
տուած պարգև՝ հրա-
կիրեալների կողմից:

Ծամել. ծամել. ուսել:

Ծամուն. մաստար:

Ծանդր. ծանը:

Ծանդրած. յիի կենդանինե-
րի վերաբերութեամբ է
ասուում). օր. մեր կոլլէ
ծանդրած ա:

Ծարաւ. ծարափ. ծարաւ:

Ծարաւանալ. } ծարաւել:

Ծարաւել. } ծարաւել:

Ծարաւը կոտրել. ծարաւը
յագեցնել:

Ծափ տալ. ծափ հարկանել:

Ծափ ու ծիծաղ անել. ան-
չափ ուրախանալ:

Ծեղ. շինդ:

Ծերտ. բուճնոց աղբ:

Ծիծեռ. փոքրիկ կեռ. Երկար
բէշու ծայրին, որտե-
ղից բէլը ամրացնում
են մանելու ժամանակ:

Ծիտ.

Հօրան-խարուկ.

Լօր.

Կաքաւ

Սարեկ.

Ծառկուտուտ.

Օրդակ.

Զկնկուլի.

Տիւտիւ

Ծլանք. ծուենք:

Ծլել. բողբոջներ արձակել:

Ծկթել. բուճնոց ծափից նոր
դուրս զալը. փոխաբե-
րաբար ասուում է եւ
բոյսերի վերաբերա-
թեամբ:

Ծլուլ. քից նոսած զուր. օր.

քից ծուուլ բաֆում ա:

Ծղան. ձղոտած հաստ փայ-

տեր վառելու համար:

Ծղծամթալ. ակամայից ծա-
մել:

Ծղծամ. ակամայից ծամել:

Ծղնօտատեղ. նոր հննած
արտ:

Ծղրտալ. միջ արձակել:

Ծղրտոց. միջ:

Ծղօն. ծղօու: նայն նանել:
Ծպտալ. նայն նանել:

Ծպտուն. նայն. ջղուկ:
Ծօր տալ. նայնը երկարացնել:

Կ.

Կաթ. կար. կարիլ:
Կաթ կաթ. կարիլ կարիլ:
Կաթել. կարել. փոխաբերա-
քար՝ վայր ընկել. օր.
տանձը ծառիցը կարեց:
Կաթացնել. վայր ճգել. փո-
խաբերաքար նշանակում
է՝ զնդականար անել,
սպանել:

Կաթնով. կարնապուր:
Կալ. ցորենի կայ: Կալ աս-
ուում է նոյնպէս հնձա-
նի այն տափարակ տա-
րածութիւնը, ուր խա-
ղողը ճմլում էն:

Կալնել. բոնել օր. ճուկը
կալնել:

Կալմէջ անել. զրջապատել:
Այգեկութին պա-
ն ո ն ն ի խաղողը
Կախան. ուորի ճխուերի վե-
րայ կանոնաւոր
կերպով շարում
էն եւ կախ տա-
լիս մատանի ա-
ռաստաղին, որից
եւ յառաջացել է
կախան բառք:

Խակ կախան ել
կամ կախան ել
ան ել կոչում է
դոյն գործողու-
թինը:

Կախանա-
տուն. մառան, ուր
կախաներն են

Կախանա-
նոց. պահում ճրմ-
րան ժամանակ:

Կամապաշտ. յամա:

Կանաչենի.

Կախէթի հաւող.

Ճիլալ.

Իծապտուկ.

Քիշմիշե.

Կարմիր քիշմիշե.

Ասկեարի.

Եզան աչք.

Ճլպստի.

Քեարիմ ղանդի.

Շիրշիրի.

Սապերափ.

Եզանդարի.

Գինուկ.

Հալաղի.

Սըհաբի.

Մկ օրդըցի.

Միպտակ օրդըցի.

Խակ կախան ել
կամ կախան ել
ան ել կոչում է
դոյն գործողու-
թինը:

մառան, ուր
կախաներն են

պահում ճրմ-
րան ժամանակ:

յամա:

յամա:

կախէթի:

հաւող:

ճրմ:

քիշմիշե:

ասկեարի:

եզան աչք:

ճլպստի:

կարմիր քիշմիշե:

ասկեարի:

սապերափ:

յազանդարի:

գինուկ:

հալաղի:

սըհաբի:

մկ օրդըցի:

միպտակ օրդըցի:

միպտակ օրդըցի:

Հաշաբաշ.
Խալլի.
Թէղ-հասնուկ.
Հալիւրուկ.

Սև հաւող.

Մօրի հաւող.

Քոլբանդ.

Մխակի հաւող.

Խաթուն բարմաղի.

Մոխալի.

Խոզակաշի.

Կոթունջ.

Կապայ. ջուխայ. վերնա-

զգեստ:

Կատեպան. այգեպան:

Կատիկ. կոկորդ:

Կատուգառնալ. խեղճանալ:

Կարաս. կարաս. զիճի պա-

հեյու. մեծ աման:

Կարմիր կապեր. մահացնել.

վրեժխնդիր լինել.

նշանակում է նոյնպէս՝ այց-

սակել:

Կարմունջ. կամուրջ:

Կաւառ. ջրաբերան:

Կեղտ.

աղտեղութիւն:

Կեղտոտ.

մշջոտ. աղտոս:

Կեմ. խոտից ոլորած պարան:

Կենդ. մի հատիկ:

Կենդապար. պարի մի տեսակ,

որ առանձին առանձին

են պարում:

Կեսուր. սկեսուր:

Կեսառ. սկեսարյայր:

Կերակուրը եփել. փոխաբե-
րաբար՝ ծեծել:

Կերկութի ըլնել. ջափազանց

ուտել:

Կերցաւ. սիմիլիս:

Կղանալ. զուսակը կորաց-

կունալ. նել:

Կիտուկ. կոյտ:

Կիտուկ կիտուկ. կոյտ կոյտ:

Կլափին անել. քայցածուրին-

նից բերանը բաց ու

խորփ անել (զրից հանած
ճկան նման):

Կլաւոց. տես Մլաւոց:

Կլիկոնձի տալ. զիխի վերայ

Կլիկոնձի անել. լրջուել:

Կլմբոց. բրու դրած ճակըն-

ուել:

Կլպել. կեղեւը հանել. օր.

ճառն կլպել:

Կլօճ. բաղարջ:

Կծան. կծող:

Կծել. կծել. փոխաբերաբ

նշանակում է խոսրով

վիրաւորել:

Կծղել. հացանատիկի հնձելու

ժամանակն անցնել:

Կծուել. կծու դառնալ:

Կծապ. կեղեւ:

Կծպել. կեղեւը հանել:

Կծուճ. կծու դառնալ:

Կինկ. կին:

Կչջու. խաղողը ճմէլաց յե-

տոյ մնացած մասերը
(ճամայ):
Կշտանալ. յագենալ:
Կշտել. շորերը բարձրացնել.
օր. շորերը կիտեց, զուրն
անցկացաւ: Նշանակում
է նոյնպիս ծառի առև
լորդ միտղերը կտրատել.
օր. ծառը կշտել:
Կշտին. մօտք
Կշտովը. մօտովը:
Կոխ պրծնել. գոտեմարտել:
Կոկոմ. կոկոն:
Կողք. կող.
Կողքավեր. յամառ:
Կողքավերութիւն. յամառու-
թիւն:
Կողակ. ձկան մի տեսակ, որ
զլաւառապիս Մեւանայ
լուրմ են որսում:
Կոնդ. անդամալոյծ. նշանա-
կում է նոյնպիս: բլոր:
Կոշտ. կարծր հողի կտոր.
կոշտ:
Կոշտել. անպատուել:
Կոռան. { մեծ կենդանիների
վեզ (կովի, եղան
Կոռայ. { են այլն):
Կովկիթ. կով կրելու աման:
Կոտր ընկնել. սնանկանալ:
Կու. տես թրիք:
Կուգրակ. խաղողի որրի
բուն:
Կուել. տես թրքել:

Կուշ. կուզ (քաւամազ կեն-
դանի):
Կուզիկ. սապտատող:
Կուզէ կուզ անել. զիսիկար
ման զայ:
Կուժ. սափոր:
Կուշկուլ. փոքրիկ սափոր:
